Կանայք Իսլամում

المرأة في ظلال الإسلام

باللغة الأرمينية

Հեղինակ

Դոկտոր Աբդուլ-Ռահմեն Էլ-Շիհա

د. عبد الرحمن بن عبد الكريم الشيحة

Թարգմանությունը

المركز الأوروبي للدراسات الإسلامية

EUROPEAN ISLAMIC RESEARCH CENTER (EIRC)

& Արմեն Նալբանդյան

Կանայք Իսլամում

Դոկտոր Աբդուլ-Ռահմեն Էլ-Շիհա

Թարգմանությունը
EUROPEAN ISLAMIC RESEARCH CENTER (EIRC)

& Արմեն Նալբանդյան

Ստուգող հանձնաժողով

1) Աննա Ռ. Հակոբ
2) Աբու Առամ

***© Copyright** (Հոգեբանական իրավունքները)*

Դոկտոր Աբդուլ-Ռահման Աշ-Շիհա

Հոգեբանական իրավունքները պատկանում են հեղինակին, բացի անվճար բանելու դեպքում առանց որևէ փոփոխություններ անելով գրքում:

http://www.thekeytoislam.com

Ներածություն

- **Նախաբան**
- Կնոջ դիրքերի ամրացումը
- Կնոջ ու տղամարդու իրավահավասարությունը
- Կնոջը իրավունքներ ու ազատություններ տալը
- **Կինը հարյուրամյակների հայացքից**
- Կինը մինչիսլամական անբարյացակամության ժամանակաշրջանում
- Կինը հին Հնդկաստանում
- Կինը հին Չինաստանում
- Կինը հին Հունաստանում
- Կինը հին սովորույթների լույսի ներքո
- Կինը հին քրիստոնեական սովորույթների լույսի ներքո
- **Կանանց դրվածքը Իսլամում**
- Կանանց և տղամարդկանց համար ընդհանուր որոշ իրավունքներ ու պարտականություններ
- **Կանանց յուրահատուկ իրավունքները Իսլամում**
- **Կինը որպես դուստր**
- Դուստրի մայրական կաթ ստանալու իրավունքը
- Դուստրի լրիվ հոգ տանելու և արժանի դաստիարակության իրավունքը
- Դուստրի մեղմության, զգացվածության ու գթասրտության իրավունքը
- Դուստրի գիտելիքներ ստանալու իրավունքը
- Աղջկա համաձայնությունը իմանալու կարիքը նրա ամուսնության համար
- Բոլոր երեխաների հետ հավասար վարմունքի կարիքը, անկախ նրանց սեռից
- Իսլամն ու որբ երեխաները
- **Կինը որպես ամուսին**
- Մահրի իրավունքը (ամուսնական կամ նախամուսնական պարգև)

- Արդար վերաբերմունք ունենալու իրավունքը
- Պահելու իրավունքը
- Պաշտպանության և անվտանգության իրավունքը
- Արժանի վերաբերմունքի իրավունքը
- Ամուսնական համակեցության իրավունքը
- **Կինը որպես մայր**
- **Կինը որպես բարեկամ, հարևան, այրի**
- **Իսլամում կնոջ դիրքի հետ կապված որոշ սխալ աշխարհայացքներ**
- Բազմակնություն
- Ամուսնություն միայն խնամակալի համաձայնությամբ
- Տղամարդը ընտանիքի գլխավոր
- Կնոջ վկայությունը
- Կինն ու ժառանգությունը
- Անկանխամտածված սպանության փոխհատուցում
- Կինն ու աշխատանքը
- Ոչ մի քայլ առանց տղամարդու՞
- Ամուսնալուծությունը տղամարդու արտոնությունն է
- Պատվի սպանություն
- Ծեծե՞լ թե՞ չծեծել
- Վեճի տեսքը կամ իմ մարմինը իմ գործն է
- Հանգեցում

Նախաբան

Փառք Ալլահին: Ես խնդրում եմ պահպանել չարիքից մեր մարգարե Մուհամմեդին, նրա ընտանիքին, հետևորդներին ու բոլոր նրանց ով,նրան հետևում է:

Ալլահն ասել է. **«Ով մարդիկ: Ճշմարիտ, Մենք ստեղծեցինք ձեզ մի արականից և մի իգականից ու արեցինք ձեզ ազգեր ու ցեղեր, որ դուք ճանաչեք իրար -և թշնամություն չանեք-: Իհարկե ձեր մեջ Ալլահի համար ամենասիրելին ամենաաստվածավախն է: Ճշմարիտ, Ալլահը Ալիմ –ամենագետ- ու Խաբիր -ամեն ինչ տեսնող- է»** (49:13):

Իսլամի նկատմամբ մեծ անարդարություն է հանդիսանում նրան բացասական կողմեր տալը, որոնք նա չունի: Շատերը համարում են, որ Իսլամում կինը զրկված է իրավունքներից ու հարգանքից, և այդ կրոնի գաղափարները ամենավատ ձևով ոտնահարում են կնոջ օրինական իրավունքները: Սակայն արդյո՞ք դա այդպես է իրականում:

Ալլահը Ղուրանում տղամարդկանց հղում է կանանց հետ արժանի վերաբերմունքին, նույնիսկ եթե նրանց դուր չեն գալիս որոշ ունակություններ. «**Ապրեք նրանց հետ արժանավայել և եթե նույնիսկ նրանք տհաճ են ձեզ, ապա կարող է ձեզ տհաճ լինել մի այնինչը որի մեջ Ալլահը դրել է բարիք**»: (4:19)

Նա և ասում է.

«Եվ Իր նշաններից նաև այնինչն է, որ նա ձեզանից ձեզ ամուսիններ է ստեղծել, որպեսզի խաղաղություն և հանգստություն գտնեք նրանցում, և ձեր միջև դրել է ջերմություն և ողորմություն: Ճշմարիտ, դրանում մտածող մարդկանց համար նշաններ կան» (30:21):

Վերջին ժամանակներում շատ են լսվում կանանց իրավունքներ ու ազատություններ տալու գաղափարներ նրանց տղամարդկանց կողմից ղեկավարվելը, ղեկավարվելու վերջ տալը: Ուրիշ բան է, երբ այդ գաղափարները հնչեցվում են այնպիսի հասարակությունում, որտեղ իսկապես անարդար են վերաբերվում կնոջն ու ոտնահարում են նրա իրավունքները: Սակայն իսլամական հասարակությունում, որը հայտնվելուն պես ապահովեց կանանց բոլոր իրավունքներն ու ազատությունները և այդ իրավունքները հարգելը արեց կրոնական պարտադրանք ամեն մուսուլմանի համար, նման հղումները տարօրինակ են նայվում և զարմանք են առաջացնում:

Ով կոչ է անում կանանց իրավունքները չխախտելուն և ազատություններ է տալիս կանանց, իրականացնում է իր պայքարը երեք բաներում՝

- Կնոջը հարգելու իրավունքը:
- Կնոջ և տղամարդու իրավունքների հավասարությունը:
- Կնոջը իրավունքներ ու ազատություններ տալու պայքարը:

Կնոջ դիրքերի ամրացումը

Երբ օգտագործում ենք «Ամրացում» բառը մարդու վերաբերյալ, ասես խոստովանում ենք, որ նրա իրավունքները սահմանափակ են և կարիք ունեն ազատվելու: Այդ պատճառով «կնոջ ամրացում» արտահայտությունը իրենից փիլիսոփայություն է ներկայացնում, որը կոչված է լսողի մոտ առաջացնել այնպիսի միտք, ասես կինը ստրկուհի է և հարկավոր է նրան ազատել ստրկությունից:

Իրականում լիովին ազատությունը և տղամարդու և կնոջ համար անհասանելի է, քանի որ մարդու հնարավորությունները սահմանափակ են: Անկախ նրանից, թե մարդը ապրում է զարգացած կամ հետամնաց հասարակությունում, ենթարկվում է օրենքների ու կանոնների որոնք կարգավորում են մարդկանց կյանքն ու փոխվերաբերմունքը: Սակայն նշանակու՞մ է դա, որ մարդը զրկված է ազատությունից:

Ընդ որում ամեն ազատություն ունի յուր սահմանները, որոնց խախտումը առաջացնում է քաոս ու անկարգապահություն: Պրոֆեսոր Հենրի Մակոուն՝ կանադացի հայտնի գիտնական ու մտորող, ասել է. «Ֆեմենիզմը համաշխարհային նոր կարգի խիստ միստիֆիկացիա է, որը ամերիկացի կնոջը արդեն փոխել է դեպի բացասական կողմ և հսկայական վնաս է հասցրել արևմտյան քաղաքակրթությանը....»:

Կանանց ազատության մասին խոսելով անհրաժեշտ է նշել, որ համընդհանուր կյանքի շատ կողմերում Իսլամը դեռ տասնչորս դար առաջ կնոջը իրավունք է տվել՝ ուղղակիորեն կապ հաստատել հասարակության հետ, հեռացնելով ծնողների տիրապետության դրվածքը՝ ինչպես առաջ էր: Իսլամը ամբողջությամբ երաշխավորում է կնոջ ազատությունը, բացի նրանից, որը տանում է անբարոյականության: Այդ նույն կերպով էլ դիտարկվում է տղամարդը: Դա Իսլամում ազատության հասկացությունն է և նկարագրված է Ալլահի առաքյալի---հետևյալ գրությունում. «**Ալլահի սահմանների չփլուզվողության մասին կասկածողներն ու անցնողները նման են նետերի վրայով վազողների, որ** -տեղ զբաղեցնեն- **նավում, իսկ արդյունքում նրանք տեղավորվեցին** –նավի- **վերին մասում, իսկ մյուսները՝ ներքևի մասում: Երբ ներքևում եղածները ուզում էին ջուր բերել**, -ստիպված էին- **անցնել նավի վերևում եղածների մոտով, և** -վերջ ի վերջո- նրանք ասացին. «*Իսկ ինչու՞ չծակենք նավի մեջից միանգամից ջուր գա, որ*

վերիններին չանհանգստացնենք»: Եվ եթե նրանք -նավի վրայինները- կանեն այն ինչ ուզում են, ապա բոլորը կմահանան, իսկ եթե նրանք նրանց ձեռքից կբռնեն, ապա ինքները բոլորին կփրկեն –մնացածին-» (Ալ-Բուխարի):

Այդպիսով Իսլամում ազատության հասկացությունը համարում է, որ մարդն իր բոլոր արարքներում պիտի հետևի Ալլահի օրենքներին, որոնց բարեխիղճ կատարումը բերում է ոչ մեկին չվնասելուն (անկանխամտածված):

Հիմա մենք հետևյալ հարցը կտանք ծնողներին կանանց իրավունքների մասին. «Կուզենա՞ իք երեխա մեծացնել կեղտոտ հասարակությունում: Չէ որ դա հենց այն «ազատությունն» է, որին նրանք կոչում են՝ ազատություն ընտանիքից, երեխաների դաստիարակությունից, և ամուսնուց որ իրենց լիովին տան սիրելի գործին, լինի դա տնտեսություն կամ քաղաքական գործունեություն:

Կնոջ և տղամարդու իրավահավասարությունը

Կանանց և տղամարդկանց միջև լիովին իրավահավասարություն պահանջելը ճիշտ չի, քանի որ դրան կխանգարի նրանց բնույթը, որը տարբերվում է և հոգեկան և մյուս թեմաներում: Նույնիսկ երկու նույն սեռերի երևակայության մեջ հավասարությունը գոյություն չունի, որն է համարվում է զարմանալի բան: Ապա ինչու՞ խոսենք երկու հակադիր սեռերի հավասարության մասին:

Ալլահն ասել է. **«Մենք ամեն ինչը ստեղծել ենք զույգերով, միգուցե դուք հիշեք»:** (51:49)

Իսլամում տղամարդկանց ու կանանց դրույթների մեջ են նաև նրանց իրավունքները: Եվ այդ պարտավորությունները ավելի լավ են պատկերում այն սոցիալական ու հոգեբանական հատկությունները որոնց նրանց շնորհել է Ալլահն իր կատարյալ իմաստությունից:

Դոկտոր Ալեկսիս Կարրելը, համաձայն է այս դիտակետին և ասում է. «Տղամարդը կնոջից առանձնանում է ոչ միայն սեռական նշաններով և գիտելիքներ ընդունելու տարբեր ունակությամբ: Այդ տարբերությունն ունի ավելի ֆունդամենտալ բնույթ, որը վերաբերվում է մարդկային ամբողջ օրգանիզմին: Այդ հիմնարար ճշմարտության ժխտումը ֆեմինիստներին բերեց այն սխալ մտքերի տարածմանը՝ որում նշվում է կանանց և տղամարդկանց իրավունքների ու պարտականությունների հավասարությունը: Իրականում կինը տարբերվում է հակառակ սեռի ներկայացուցիչներից: Օրգանիզմի ամեն բջիջ իր մեջ ունի սեռական պատկանելիության մասնիկ: Դա վերաբերվում է ոչ միայն ֆիզիոլոգական դասավորությունից, այլև ներվային համակարգին: Եվ մենք պետք է

ընդունենք դա ինչպես կա... Կինը պետք է զարգացնի իր ունակությունները հաշվի առնելով իր բնույթը, ընդ որում պետք է զերծ մնա տղամարդու նմանվելուն»:

Կնոջը իրավունքներ ու ազատություններ տալը

Այսօր ամբողջ աշխարհում կոչեր են հնչում դեպի կանանց իրավունքներ ու ազատություններ տալը: Սակայն չկա և չի եղել այդպիսի օրենսդիր համակարգ, որը իսլամականի նման կանանց ոչ միայն իրավունքներ է երաշխավորում, որոնց կարիքը նա ունի, այլ նաև պաշտպանություն է երաշխավորում նրանց համար: Դա մենք կփորձենք ցույց տալ այս գրքի հաջորդ մասերում:

Անգլիացի հայտնի փիլիսոփա Սեր Համիլթոնը,, Իսլամի ու արաբական քաղաքակրթության մասին ասել է. «Կանանց վերաբերվող կանոններն ու դրույթները Իսլամում առանձնանում են պարզությամբ, ուղիղությամբ ու անկեղծությամբ... Իսլամը հատուկ ուշադրություն է դարձնում կնոջը նրան ու նրա պատիվը վնասող ամեն ինչից պաշտպանելուն...»:

Ֆրանսիացի հայտնի հոգեբան, սոցիոլոգ, մարդաբան ու պատմաբան Գուստավ Լեբոնը իր «Արաբների քաղաքակրթությունը» գրքում գրել է. «Իսլամի արժանիքը միայն նրանում չէ, որ նա բարձրցրեց կանանց դրույթը, այլ նաև նրանում, որ առաջինը արեց դա: Դրանում համոզվելը դժվար չէ, եթե նայել այն փաստերին, որոնք հաստատում են, որ բոլոր կրոններն ու ազգերը մինչ Իսլամի հայտնվելը, չէին առանձնանում կանանց հետ լավ վերաբերմունքով...», «...ամուսնական իրավունքի համալսարան, որ որոշված է Ղուրանով, գերազանցում է այն ինչ լավագույնն է համարվում եվրոպացիների մոտ...»:

Ավելի քան տասնչորս դար առաջ Իսլամը սկսեց իր հաղթական արշավանքը մոլորակում: Այդ կրոնի մեծությունը երևում էր ամեն ինչում՝ և նրա լիակատարության մեջ և ամեն ինչ շարունակելու, նրա աննախադեպ տարածման արագության, նրա զարմանալի փորձարարության ու մարդկային հասկացողության համար հասանալի լինելու համար: Իսլամը արգելում է միայն այն՝ ինչ հակառակ է մարդկային առողջ մտածելակերպին:

Որպեսզի պարզենք, թե ինչ ազդեցություն է ունեցել իսլամը կանանց դրության վրա, մենք առաջարկում ենք ընթերցողներին կատարել մի ճանապարհորդություն ժամանակի մեջով դեպ անցյալ ու նայել նրան, թե ինչպիսին էր կնոջ վիճակը անցյալ հարյուրամյակներում:

Կինը հարյուրամյակների հայացքից

Կինը մինչիսլամական ժամանակաշրջանի անբարոյականության ժամանակաշրջանում

Մինչ իսլամական անբարոյականության ժամանակաշրջանում արաբների մոտ կինը զրկված էր հիմնական իրավունքներից, հաճախ էին ենթարկվում բռնության: Ցանկացած պահ տղամարդը կարող էր զրկել նրան ունեցվածքից ու փողից ու մնալ անպատիժ: Կինը համարվում էր տնային կենդանի ու իրավունք չուներ ծնողների փոխանցածին, քանի որ դրա իրավունքը ուներ նա՝ ով կարող էր լավ ձի հեծնել, անխղճորեն սպանել ոսոխներին ու հարուստ զինագրավումներ ձեռք բերել մարտի դաշտում: Եթե նրա ամուսինը մահանար իր հետևից թողելով ուրիշ ամուսնությունից երեխաներ, ապա նրանցից ամենամեծը ստանում էր նրա ունեցվածքը հոր մնացած ունեցվածքի հետ միասին: Նա իրավունք չուներ լքել իր խնամակալի տունը մինչ չէր վճարում որոշ գումար յուր ազատության համար:

Տարածված երևույթ էր լիովին բազմակնությունը, երբ տղամարդը իրավունք ուներ ունենալ կանանց անսահման քանակ: Գոյություն չունեին ոչ մի կանոններ, ոչ էլ օրենքներ, որ կարող էին պաշտպանել կնոջը իր ամուսնուց: Ամուսնության ժամանակ նրա կարծիքը ոչ մի գին չուներ: Ամուսնալուծությունից հետո կինը իրավունք չուներ կրկին ամուսնանալ իր նախկին ամուսնու հետ:

Մինչիսլամական ժամանակաշրջանում պատահում էր, որ հայրը շատ զայրանա դուստր ունենալու պատճառով, այլ ոչ թե որդի: Շատերը դուստր ծնվելը համարում էին վատ նշան: Ալլահը Ղուրանում ասում է. «**Երբ նրանցից որևէ մեկին ասում են դուստր ունենալու լուրը, նրա դեմքը զայրույթից սևանում ու տխրությամբ է լցվում: Նա թաքնվում է մարդկանցից վատ լուրից (և ամոթից): Ողջ թողնի (նորածին դստերը), թե թաղի հողի տակ: Օ՜ ինչ տհաճ է այն՝ ինչ որոշում են»**: (16:58-59)

Արաբների մեջ հանդիպում էին նրանք՝ ովքեր սպանել են իրենց երեխաներին աղքատության պատճառով: Ղուրանում ասվում է.

«**Մի՛ սպանեք ձեր երեխաներին աղքատությունից վախենալով: Մենք տրամադրում ենք այն ամենը (որ որոշվում է ամեն մարդու համար) նրանց և ձեզ: Հաստատ է, որ երեխաներ սպանելը մեծ մեղք է**» (17:31):

Կինը պարզապես զրկված էր ամենահասարակ ու բնական իրավունքներից: Օրինակ՝ Միայն տղամարդիկ իրավունք ունեին ուտել որոշ տեսակի ուտեստներ: Ալլահը սուրբ Ղուրանում այսպես է ասում այդ մասին.

Եվ ասացին. «**Այն՝ ինչ պարունակվում է այդ կենդանիների սաղմերում (լինի դա կաթ, թե պտուղ), թույլատրված է տղամարդկանց համար (որպես սնունդ) և արգելված է մեր կանանց համար»: Թեև նորածնի մահացած լինելու դեպքում բոլորը իրավունք ունեն ուտել իրենց բաժինը»**: (6:139)

Նորածին աղջիկների հանդեպ ատելությունը լինում էր, որ արաբներին մղում էր այնպիսի հանցանքների, որ նրանք ողջ թաղում էին նորածիններին: Ալլահը Դատաստանի օրվա վերաբերյալ սուրբ Ղուրանում ասել է.

«**Եվ երբ ողջ վիճակում թաղված էգը կհարցվի, թե ո՞ր մեղքի համար է սպանվել»** (81:8-9):

Միակ բանը, որ կարող էր ակնկալել այդ ժամանակաշրջանի կինը դա այլ ցեղերի ու տեսակների տղամարդկանց հարձակումներից պաշտպանությունն էր, ինչպես նաև ներված լինել իր պատիվը գցող արարքի համար: Այնուամենայնիվ նույնիսկ այդ դեպքում նրան այդպիսի վերաբերմունքի պատճառը դա իր ընտանիքի, ցեղակիցների կամ տեսակի ձգտումն էր:, որպեսզի պաշտպանեն նրա պատիվը կամ ապացուցեն իրենց բարձր լինելը մյուսների նկատմամբ:

Օմար իբն Ալ-Խատտաբը՝ երկրորդ մուսուլման խալիֆն այդ ժամանակաշրջանի կնոջ դրությունը նկարագրելուց ասել է. «*Երդվում եմ Ալլահով: Մեր մտքով նույնիսկ չէր էլ անցնում, որ կինը ինչ-որ բան ունի, մինչ Ալլահը նրանց ուղարկեց այն՝ ինչ ուղարկեց, ու շնորհեց այն՝ ինչ շնորհեց...*» (Մուսլիմ):

Կինը հին հնդկաստանում

Մանու օրենքներին համաձայն[1] հին Հնդկաստանում զույգ-ընտանեկան հարաբերությունները հիմնավորվում էին (մեծ) հայրապետական ընտանիքի հիմքերին: Ընտանիքի գլխավորը տղամարդն էր: Կինը լիովին կախվածության մեջ էր իր ամուսնուց ու որդիներից: Ամուսնությունը իրենից ունեցվածքային գործարք էր ներկայացնում, որի արդյունքում տղամարդն իր համար կին էր գնում ու կինն էլ դառնում էր նրա սեփականությունը: Մանու օրենքները որոշում են կնոջ դրությունը հետևյալ կերպով. Մանկությունում նա ենթարկվում էր հորը, երիտասարդությունում՝ ամուսնուն, իսկ ամուսնու մահվանից հետո պատկանում էր իր որդիներին, քանի որ «կինը երբեք ինքնուրույն չպետք է լիներ»: Մանու

օրենքները անմիջականորեն պահանջում են, որ կինը իր ամուսնուն աստված համարի, նույնիսկ եթե նա բարեգործ չէր: Սակայն Մանու օրենքները որպես գլխավոր պայման ունեն «իրար հավատարիմ լինելը մինչ մահը», Ամուսինը կարող էր մի քանի կին ունենալ, ամուսնալուծվել կնոջից: Կինը չէր կարող լքել տունը, նույնիսկ եթե նրա ամուսինը նրան վաճառում ու լքում էր, նա շարունակվում էր համարվել նրա կինը:

Աբու-Հասան Ան-Նադուին գրել է. «հին հնդկական հասարակությունում կինը ստրկուհու պես էր: Նա ենթարկվում էր ամուսնուն, զրկված էր կամքից, ինքնուրույնության իրավունք չուներ, տղամարդը նույնիսկ կարող էր տանուլ տալ նրան խաղի ժամանակ»:[2]

Հին հնդկաստանում բավականին լայն էր տարածված այրիներին ողջ այրելը – սուտտի: Ամերիկացի հայտնի գրող, պատմաբան ու փիլիսոփա Վ. Դյուրանտը հիշելով այդ մասին գրել է հետևյալը., Բրահմանիզմի սուրբ գրքերում ասված է. «Այրին պետք է ընկներ այն ծղոտների վրա, որոնք պատրաստված էին նրա մահացած ամուսնուն այրելու համար... Տղամարդու մարմինը դնում են ծղոտների վրա, ծածկում են երեսը կտորով: Առաջատարը վայր է գցում կնոջ վրայից ծածկոցն ու կինը հանում է իր զարդերն ու թանկարժեք իրերն ու բաժանում իր բարեկամներին, այնուհետև նա քանդում է հավաքած մազերը: Դրանից հետո գլխավոր մոգը բռնում է նրա աջ ձեռքն ու երեք անգամ պտտում է նրան ծղոտների շուրջ, որից հետո էլ կինը բարձրանում է ծղոտների վրա ու բարձրացնելով հանգուցյալ ամուսնու ոտքը, ի նշան հարգանքի դնում է այն իր ճակատին, հետո էլ նստում նրա գլխի մոտ, աջ ձերքը դնելով նրա մարմնին: Դրանից հետո այրում են կրակը նրան իր ամուսնու մարմնի հետ միասին: Դա բացատրվում է իբր կինը կպարգևատրվի դրա համար հետագա երեսունհինգ միլիոն տարիների ընթացքում բարեկեցիկ կյանքով իր ամուսնու հետ երկնքում..., որ իր այրվելով նա մաքրում է իր ամուսնու մոր ու հոր բարեկամներին, ինչպես նաև իր ամուսնուն մեղքերից... Այդ դեպքում նա մաքրում է անմեղ կնոջով ու պատվավոր անունով մինչ հավերժություն: Այդ ծիսակատարությունն այնքան տարածված էր հնդկաստանում, որ նրանք 1815թ.-ից մինչև 1825թ. այրեցին մոտ վեց հազար կանանց:Այդ սովորույթը պահպանվեց մինչև տասնութերորդ դարի վերջ, երբ հակառակ հնդկացի մոգերի ցանկության արգելվեց»»:[3]

Երբեմն կինը մի քանի ամուսիններ ուներ ու նրա դրությունը ոչնչով չէր տարբերվում մարմնավաճառի դրությունից:[4]

---

[2]Աբուլ Հասեն ան Նադուի/ Ինչ է կորցնում աշխարհը մուսուլմանների մերժմամբ/

[3] Վիլյամ Ջեյմս Դուրանթ/Քաղաքակրթությունների պատմությունը/

[4] Հարիպադա Չաքրաբորտի /Հինդու միջ-կաստային ամուսնությունը Հնդկաստանում/Գլուխ 3 Ամուսնության ձևերը, մաս2 Բազմազանություն

Կինը հին Չինաստանում

Վ. Դուրանտը «Քաղաքակրթության պատմությունը» գրքում գրել է. «(կինը հին չինական հասարակությունում) գտնվում էր ամուսնու լիովին իշխանության տակ և նրա ամբողջ կյանքը նվիրված էր նրան ծառայելուն: Նա զրկված էր բոլոր ֆինանսական ու սոցիալական իրավունքներից, և ընդհանրապես անպիտան էր համարվում իրավունքներ ունենալու համար, և չէր կարող կարևոր որոշումներ ընդունել՝ նրա տեղը միշտ որոշում էր տղամարդը (ամուսինը): Նա կրթություն ստանալու իրավունք չուներ, միշտ պետք է գտնվեր տանը, կատարել ծառայի պարտականություններ, պետք է սովորեր կարել ու տնային այլ զանազան աշխատանքներ: Երբ լրանում էին նրա տասնհինգ տարիները, նա պետք է կտրեր մազերը, իսկ քսան տարեկանում նրան ամուսնացնում էին: Նրա համար ամուսին էր ընտրում նրա հայրը...»:[5]

Աղջկա ծնվելը վատ կանխանշան էր համարվում: Վ. Դյուրանտը այդ մասին գրում է հետևյալ կերպ. «Տղամարդիկ իրենց աղոթքներում միշտ խնդրում էին, որ տղա ունենան: Արական սեռի երեխա չծնող կանանց ատում էին, քանի որ որդիները ավելի լավ են կատարում դաշտային աշխատանք ու պատերազմական վարպետությունում գերազանցում են աղջիկներին: Ընտանիքում աղջիկ ունենալը համարվում էր անշնորհակալ ու վատ էակի առկայություն, քանի որ ծախսեր էին անում նրան պահելու համար, սակայն ի վերջո նա գնալու է իր ամուսնու տուն... Հանդիպում է նաև դուստրերի մահացման սովորույթը: Եթե ընտանիքում ծնվում էին ավելի շատ աղջիկներ, որ ծնողների կարծիքով շատ են, ապա «ավելնորդ» աղջիկներին թողում էին դաշտում, իմանալով, որ գիշերը կամ ցրտից կմահանան, կամ էլ վայրի գազանից, և ընդ որում ծնողները ոչ մի խղճի զգացմունք չունեին...»:[6]

Հին չինական ասացվածքն ասում է. «Լսիր (կնոջը), սակայն մի հավատա (նրան)»:[7]

Կինը հին Հունաստանում

[5] Վիլյամ Ջեյմս Դուրանթ /Քաղաքակրթության պատմություն/

[6] Վիլյամ Ջեյմս Դուրանթ/ Քաղաքակրթքության պատմություն/

[7] Գուստավ Լե Բոն/Արաբների քաղաքակրթությունը/

Հին Հունաստանի կնոջ ճակատագիրը ոչնչով լավը չէր մյուս ասվածներիններից: Համարվում էր, որ կինը չարիքի կացարան է: Նա զրկված էր կրթություն ստանալու իրավունքից ու գտնվում էր սոցիալական ամենացածր մակարդակին, նրան նույնիսկ «սարսափելի պիղծ» էին համարում:[8]

Գ. Լեբոնն իր «Արաբական քաղաքակրթություն» գրքում գրել է. «Հին հույները ընդհանրապես կնոջը ցածր ու անպետք էակ էին համարում: Նրանց պատկերացումով կինը պետքական էր միայն ցեղի շարունակման ու տնային տնտեսության համար :Աննորմալ երեխա ծնած կնոջը նույնիսկ կարող էին և մահվան դատապարտել»[9]

Եվ ինչպիսի՞նը կլիներ կնոջ կյանքը այդպիսի հասարակությունում:

Կինը հին հրեական սովորույթներում[10]

Հին Կտակարանում կինը նկարագրվում է հետևյալ կերպ.

«Փնտրեցի սրտումս, որ իմանամ, հետազոտեմ ու գտնեմ իմաստությունը և ճանաչեմ հիմարության նսեմությունը, անբարոյականությունն ու խելառությունը. և գտա, որ մահվանից էլ դառն է կինը, քանի որ նա թակարդ է, ու նրա սիրտը՝ որոգայթ, ձեռքերը նրա՝ ձեռկապներ: Ում Աստված հավանում է կփրկվի, իսկ մեղքեր գործածը կընկնի նրա ցանցը»

(Էկկլեզիաստ, 7:25-26):

Սեպտուագենտում ասվում է. **«Եթե որևէ մեկը իր դուստրին ստրկության վաճառի, ապա դուստրը չի կարող մնալ, ինչպես մնում են ծառաները: Եթե նա դուրեկան չի իր տիրոջ համար, որ նշանվել է նրա հետ յուր հաճույքի համար, ապա ետ կվերադարձնի նրան, վերցնելով իր կողմից վճարվածը, իսկ ուրիշ ազգի վաճառել չի կարող, քանի որ անհավատարիմ է եղել նրա հանդեպ: Սակայն եթե նա նշանել է նրան իր որդու հետ, թող վարվի դուստրերի իրավունքով: Եթե**

[8] Գուստավ Լե Բոն /Արաբների քաղաքակրթությունը/

[9] Նույն տեղում

[10] Հետեվյալ երկու գլուխներում մենք հակիրճ կկանգնենք հին հրեական եվ քրիստոնեական սովորություններին:Խնդրում ենք ընթերցողին ընկալել այդ որպես տեղեկություն մտորելու եվ ոչ թե քննադատություն, քանի որ որոշ բաներ կարող են վերցված լինել տարբեր գրքերից:

ուրիշին վերցնի նրա տեղը, ապա նա չպետք է զրկվի սննդից, հագուստից ու ամուսնական իրավունքներից: Եթե նա այդ երեքը չանի, ապա թող ստրկուհին լքի նրան առանց հետ գնելու գումարի» (Ելք, 21:7-11):

Այդպիսով եթե կինը ամուսնանում էր ապա նրան խնամելը հորից անցնում էր ամուսնուն, և նա դառնում էր նրա սեփականությունը, ինչպիսինն էր տունը, ստրուկները, ծառաները, փողն ու այլ ունեցվածքները. Հին հրեական օրենքները զրկում են դստերը հոր ժառանգությունից եթե հայրը ունի արական սեռի զավակներ: Հին կտակարանում, Սեպտուագինտում գրված է.

«Եվ Իսրայելի որդիներին հայտարարի ու ասա. եթե որևէ մեկը մահանում է և որդի չունի, ապա ունեցվածքը փոխանցվում է նրա դստերը» (Թվեր 27:8):

Վ. Դյուրանտը գրել է. «Հայրը ըստ փաստի ուներ չսահմանափակված իշխանություն ընտանիքի անդամների նկատմամբ: Հողը նրա սեփականությունն էր, երեխաների կյանքը նրա ձեռքերում էր, և նրանք կարող էին զրկվել կյանքից նրան չենթարկվելու պատճառով: Նա իրենով պետություն էր ներկայացնում: Կարիքավոր հայրը կարող էր իր դստերը ստրկության վաճառել մինչ հասունանալը, կարող էր ամուսնացնել ում հետ ցանկանում է առանց նրա համաձայնությունը հարցնելու: Այնուամեյնանիվ հազվադեպ դեպքերում հարցնում էր նրա համաձայնությունը ամուսնության վերաբերյալ»:[11]

Ամուսնու մահվանից հետո կինը կամա թե ակամա պետք է անցներ իր ամուսնու եղբոր ենթարկության տակ, բացի այն դեպքերից, երբ հանգուցյալի եղբայրը ժխտում էր դա.

«Եթե եղբայրները միասին են ապրում ու նրանցից մեկը մահանում է ու որդի չի ունենում, ապա հանգուցյալի կինը չպետք է ընտանիքից դուրս մարդու մոտ գնա, սակայն ամուսնու եղբայրը պետք է գնա նրա մոտ ու ապրի նրա հետ» (Երկրորդ օրենք, 25:5):

Հրեաները հեռու էին մնում կանանցից նրանց դեռական ժամանակաշրջանի ժամանակ, , չէին ուտում, չէին խմում ու չէին քնում նրանց կողքին մինչ նրանց մաքրվելը. «Կինը համարվում է ոչ մաքուր այն ժամանակվանից, երբ նա զգում է այդ ժամանակաշրջանի մոտեցումը: Ամուսինը նույնիսկ չի կարող կպնել նրան ճկույթով... Չի կարելի ոչինչ տալ նրա ձեռքը կամ վերցնել նրանից, նույնիսկ փոխանցումը ոչ անմիջականորեն լինելու դեպքում, այլ իրար նետման ձևով... Տղամարդուն արգելված էր այդ վիճակում գտնվող կնոջ բաժակից խմելը: Ամուսնուն և ոչ մաքուր կնոջն արգելված է քնել նույն մահճակալին, ճամփորդել նույն կառքով կամ լինել նույն նավակի վրա: Եթե նրանք միասին են աշխատում, ապա նրանք չպետք է իրար կպնեն: Եթե ամուսինը հիվանդանում էր ու այլ մարդ չկար, ապա ով պետք է հոգա նրա մասին, այդ ժամանակ նրան թույլատրվում էր անել դա, այն պայմանով, որ նա անմիջականորեն չէր կարող կպնել նրան: Եթե

[11] Վիլյամ Ջեյմս Դուրանտ /Քաղաքակրթության պատմություն/

հիվանդանում էր կինը, ապա ամուսնուն արգելված էր հոգ տանել նրա մասին, նույնիսկ եթե նա հեռու մնար անմիջականությունից: Եթե կինը երեխա ծնի, ապա նա ոչ մաքուր է դառնում: Եթե տղա ծնի, ապա ոչ մաքուր է լինում յոթ օր, իսկ աղջկա ծնվելու դեպքում՝ տասնչորս: Նրան լողանալ է թույլատրվում տղայի ծնունդից միայն քառասուն օր հետո ու ութսուն օր հետո, երբ աղջիկ էր ծնվում»:[12]

Կինը հին քրիստոնեական սովորույթների ներքո

Միջնադարում հայրերը՝ եկեղեցու հիմնադիրները զբաղեցնում էին բացահայտ թշնամական դիրք կանանց հանդեպ, նրան բոլոր մեղքերի ու չարիքների աղբյուր համարելով: Տերտուլիանն ասում էր. «Մի՞թե ձեզ հայտնի չէ, որ ձեր բոլորի մեջ էլ Եվան է ապրում: Աստվածային նավսը ձեր մեջ փոխանցվում է դարեդար, այդպես էլ պետք է փոխանցվի մեղքի զգացումը: Դուք սատանայի դարպասներն եք, դուք աստծո հրամանը խախտողներն եք ու արգելված պտուղն ուտողները, դուք աստծո օրենքի առաջին խախտողներն եք, ձեր մեջ է (ապրում) նա՝ ով Ադամին մեղք գործելու հրեց...»: Ալեքսանդրիայի Կլիմենտը համարում էր. «Գիտակից տղամարդու մեջ անպատվության նույնիսկ շողք չկա, ինչ որ չես ասի կնոջ մասին, որին նվաստացնում է այն բնությունը, որ կա նրա մեջ»[13] Իսկ Դամասկոսի Յոհանեսը քարոզում էր. «Կինը հավարափոխության հավատափոխության կացարանն է, Գեհենի պաշտպանը, երկրի մթացնողը, նրա մեղքով է Ադամը քշվել Դրախտային Պարտեզներից»:

Նոր կտակարանում կան Պավել առաքյալի հետևյալ խոսքերը. «Ինչպես նաև ուզում եմ, որ իմանաք, որ ամեն տղամարդու տերը Քրիստոսն է, կնոջը՝ ամուսինը, իսկ քրիստոսին՝ Աստվածը ... և այդպես ամուսինը չպետք է ծածկի գլուխը, քանի որ նա Աստծո ձևավորումն ու խոսքերն է, իսկ կինը՝ ամուսնու խոսքերը, քանի որ ոչ թե ամուսինը կնոջից, այլ կինն ամուսնուց: Եվ ամուսինը ստեղծված չի կնոջ համար, այլ կինն ամուսնու համար: Այսպիսով կինը պետք է գլխին ունենա իր վրայի իշխանության նշանը, Հրեշտակների համար» (Կորինֆոսցիների առաջին հաղորդումը, 11:3-7-10):

Քրիստոնեության ուսումները ստիպում էին կնոջը ենթարկվել ամուսնուն ինչպես Աստծուն: «Կանայք, ենթարկվեք ձեր ամուսիններին, որպես աստծո, քանի որ տղամարդը ընտանիքի գլխավորն է, ինչպես և Քրիստոսը՝ եկեղեցու...» (Նոր կտակարան, Պավել առաքյալի հաղորդումը Էֆեստիացիներին, 5:22,23):

---

[12] Ռավին Հանցֆրիդ Սոլոմոն իբն Իոսիֆ/Ծիսական կոդեքս/

[13] Բլավացկայա Ե. Պ /Յեյլօնի կանայք/ Լյուցիֆեր ,Հոկտեմբեր1889

Դեվիդ ու Վեռա Մեյսերը իրենց «Արևելքի ու արևմուտքի միջև ամուսնական կյանքը» գրքում գրել են. «Մի փորձեք ինքներդ ձեզ համոզեք, որ մեր քրիստոնեական եկեղեցին ազատ է դատերից (որ վերացնում են կանանց): Մի՞թե կարելի է լսել ավելի շատ վատ մտքեր կանանց մասին հին քրիստոնեության հայրերից»:[14]

Կանանց դրվածքը Իսլամում

Կանանց և տղամարդկանց համար ընդհանուր որոշ իրավունքներ ու պարտականություններ

Հասուն մուսուլման կինը ունի նույն կրոնական պարտականությունները, ինչ ունեն մուսուլման տղամարդիկ. ամենօրյա հնգակի աղոթքը, զաքյաթի վճարումը, հաջի կատարելն ու Ռամադան ամսվա պահքը: Սակայն շարիաթը կանանց համար փոխել է որոշ նորմեր. արգելված է ծոմ պահել ու աղոթել հետծննդյան արյունահոսությունների ու դեռական ժամանակաշրջանին: Ինչ վերաբերվում է Ռամադանի պահքին, ապա այդ ընթացքում բաց թողնված օրերը »վճարվում են» ավելի ուշ, երբ կինը ապաքինվում է: Բաց թողնված աղոթքները չեն լրացվում վերոնշյալ պատճառներով:

Կինն ու ամուսինը նույն նվիրատվությունն են ստանում (բարեգործությունների համար) և նույն պատիժը (մեղքերի համար) այս և հավիտյան կյանքում: Ալլահն ասել է. **«Ճիշտ գործած հավատացյալ կանանց ու տղամարդկանց Մենք հաստատ կպարգևենք լավ կյանք ու կնվիրատրենք նրանց կատարած լավագույն արարքի համար»** (16:97):

Ալլահը Ղուրանում նաև ասել է. **«Ճշմարիտ, Ալլահին տրված կանանց ու տղամարդկանց համար, որ հավատում են, անկեղծ են, ենթարկվող են, համբերատար են, ընդունող են, ողորմություն տվող են, պահք անող են, պահպանում են իրենց անարատությունը, հաճախ հիշատակում են Ալլահին, այդպիսիների համար Ալլահը պատրաստել է ներում և մեծ պարգև»** (33:35):

Կինն ու տղամարդը միատեսակ են ողջ մարդկային բնույթով: Կինը չի հանդիսանում չարիք կամ մեղքի աղբյուր: Նա Ադամին Դրախտից վտարման պատճառը չի, ինչպես վկայում են որոշ կրոնական կարգախոսներ: Ալլահն ասել է. **«Ով մարդի՛կ: Վախեցեք ձեր Աստծուց, որ արարել է ձեզ մի մարդուց (Ադամից) ու նրանից ել էլ նրա համար ամուսին ստեղծեց (Եվային), իսկ նրանց երկուսից էլ շատ**

[14] Դեյվիդ Եվ Վերա Մայս /Ամուսնություն, Արեվելք ու Արեվմուտք, Դալբեյ ,Գարդեն Սիթի 1960

տղամարդկանց ու կանանց, և վախեցեք Ալլահից, Որի Անունով խնդրում եք իրարից (այսինքն , որ նրա անունով մեկդ մյուսիցդ որևէ բան եք խնդրում) և (մի խախտեք կապերը) մայրական (բարեկամական): Ճշմարիտ, Ալլահը ձեր ստուգողն է» (4:1):

Ղուրանում Ալլահը նաև ասել է.

1)«Մի՞թե մարդը կարծում է, անտեսվելու է (չի պատժվի կամ չի նվիրատվի, կամ ապրելու է այս աշխարհում առանց հրամանների ու արգելումների): 2)Մի՞թե դա սպերմայի մի կաթիլ չէր (տղամարդկային և կանացի ժայթքումների), որ թափվեց : 3)Հետո նա վերափոխվեց լյարդացած արյան, որից հետո էլ Նա ստեղծեց նրան ու տվեց համապատասխան տեսքը: 4)և դրանից ստեղծեց արական և իգական սեռերը: 5)Մի՞թե Նա չի կարող համբարձել մահացածներին» (75:36-40):

Այդպիսով Իսլամը չեղյալ համարեց այն կանանց հանդեպ անարդար կանոնները, որ կային մինչ դա, մանավանդ այն, որ կնոջը համարում էին ավելի ցածր էակ քան տղամարդը ու հետևաբար զրկում էին շատ հիմնական իրավունքներից:

Կինը ինչպես և տղամարդը պարտավոր է հետևել որոշ հասարակական կանոնների, ինչպես և տղամարդը իրավունք ունի իր մասի պատիվ ու պաշտպանություն ունենալ: Օրինակ՝ ովքեր անարադարորեն մեղադրում են կնոջը դավաճանության մեջ, պատժվում են հրապարակայնորեն: Ալլահն ասել է.

«Անարատ կնոջը անարդարորեն զրպարտողներին, որ չորս վկաներ չեն բերում, մտրակեք ութսուն անգամ և երբեք նրանց որպես վկա մի բերեք: Ճշմարիտ, նրանք Ֆասիկուն են (սուտասաններ, Ալլահի ճանապարհից շեղվածներ)» (24:4):

Կինը ինչպես էլ տղամարդը ունի ժառանգության իրավունք: Ալլահն ասել է. «Տղամարդկանց է պատկանում մի մաս նրա ծնողների ու մոտ բարեկամների թողածից, և կանանց էլ է պատկանում մի մաս նրա ծնողների ու մոտ բարեկամների թողածից, լինի այն շատ, թե քիչ՝ մի օրինական պարտադիր բաժին» (4:7):

Իսլամը կնոջը ժառանգության իրավունք տվեց, այնժամ երբ կինը մինչ իսլամական ժամանակաշրջանում զրկված էր այդ իրավունքից, ավելին՝ նա ինքն էր ժառանգության մասնիկ: Ալլահն ասել է.

«Ով դու՛ք, որ հավատում եք: Ձեզ թույլատրված չի ժառանգեք կանանց, առանց նրանց կամքի: Մի ստեղծեք դժվարություններ կանանց համար, որ խլեք նրանց համար վճարվածից չափաբաժին, եթե իհարկե նրանք Ֆացիսա (անօրինական սեռական կապ) (այս դեպքում թույլատրվում է ետ վերցնել այդ վճարը) չեն գործել: Լավագույն ձևով ապրեք նրանց հետ: Եթե ատում եք նրանց, ապա ասես ատում եք մի բան, որի միջոցով Ալլահը շատ բարիքներ է ընծայում» (4:19):

Օմար իբն Ալ-Խատտաբն ասել է.

«*Երդվում եմ Ալլահո՛վ: Մինչ Իսլամի գալը մենք չէինք էլ մտածում, որ կինը ինչ-որ բանի տեր է, մինչ Ալլահն ուղարկեց նրանց մասին այն՝ ինչը ուղարկեց, ու շնորհեց նրանց այն՝ ինչ շնորհեց...*» (Մուսլիմ №1479):

Կինը ինչպես և տղամարդը իրավունք ունի ունենալ սեփականություն ու ազատորեն օգտագործել այն, ձեռք բերել, վաճառել կամ գնել առանց խնամակալի մասնակցության, եթե դա չի ընդդիմանում շարիաթի կանոններին: Ալլահն ասել է. **«Ով դուք հավատացյալներդ: Զոհաբերություններ արեք ձեր ձեռք բերած բարիքներից...»** (2:267):

«Ճշմարիտ, Ալլահին տրված կանանց ու տղամարդկանց համար, որ հավատում են, անկեղծ են, ենթարկվող են, համբերատար են, ընդունող են, ողորմություն տվող են, պահք անող են, պահպանում են իրենց անարատությունը, հաճախ հիշատակում են Ալլահին, այդպիսիների համար Ալլահը պատրաստել է ներում և մեծ պարգև» (33:35):

Իսլամը կնոջ հանդեպ հարգանքը համարում է ողջախոհություն ու վեհություն: Մարգարեն (Ա.օ.ն.) ասել է.

«*Հավատացյալներից ավելի լիակատար հավատք ունի նա՝ ով տարբերվում է լավագույն պահվածքով, և ձեզանից լավագույնները նրանց կանանց հետ ամենալավ վերաբերվողներն են*» (Իբն Հիբբան, № 4176):

Կինը ինչպես և տղամարդը պետք է գիտելիքներ ձեռք բերի: Մարգարեն (Ա.օ.ն.) ասել է.

«*Գիտելիքներ ձեռք բերելը ամեն մուսուլմանի պարտականություն է*» (Իբն Մաջա, № 224):

Իսլամական օրենքի մասնագետները եկել են այն եզրակացության, որ «մուսուլման» ասելով ի նկատի է առնվում և կինը, և տղամարդը:

Կինն ու տղամարդը միատեսակ իրավունք ունեն արժանի դաստիարակություն ստանալու մեջ: Իսլամը աղջիկների դաստիարակումն ու նրանց ապահովելը բարի գործ է համարում, որի համար կարելի է հայտնվել դրախտային պարտեզներում: Մարգարեն (Ա.օ.ն.) ասել է. «Ով երեք աղջիկ է մեծացրել, ճիշտ դաստիարակություն է տվել նրանց, ամուսնացրել է նրանց ու լավ վերաբերվել նրանց, կմտնի դրախտ» (Աբու Դաուդ, № 5147):

Ալլահի առաքյալը (Ա.օ.ն.) նաև ասել է. «Ով երեք դուստր կամ քույր ունի ու նրանց արժանի կերպով խնամում է, Ալլահից վախենալով, իմ հետ դրախտում է լինելու ինչպես այս երկու մատերը»: Եվ նա ցույց տվեց ցուցամատն ու միջամատը իրար սեղմած վիճակում (Ահմադ և ուրիշներ):

Կինը ինչպես և տղամարդը պատասխանատու է հասարակության ուղղման համար, հղելով երեխաներին դեպի բարին ու զերծ պահելով չարագործությունից: Ալլահն ասել է.

«Հավատացյալ կանայք ու տղամարդիկ իրար համար օգնականներ ու ընկերներ են հանդիսանում: Նրանք հրամայում են կատարել թույլատրվածն ու արգելում են կատարել արգելվածը, աղոթում են, զաքյաթ են վճարում, ենթարկվում են Ալլահին ու Նրա առաքյալին: Ալլահը կողորմի նրանց: Ճշմարիտ, Ալլահը Ազիզ (Ամենազոր), Հաքիմ (Իմաստուն) է» (9:71):

Կինը ինչպես և տղամարդը իրավունք ունի օգնել կարիքավորներիդ, եթե դրանում չեն խախտվում ամուսնու, հոր կամ ուրիշ մարդկանց իրավունքները: Ալլահն ասել է.

«Եթե որևէ բազմաստված քեզանից ապաստարան (պաշտպանություն) խնդրի, ապա ապաստան տուր (պաշտպանիր) նրան, գուցե նա կլսի Ալլահի Խոսքերը, այնուհետև տար նրան մինչև նրա համար անվտանգ վայր» (9:6):

Կարիքավորներին ապաստարան տալու իրավունքն ունեն և տղամարդիկ և կանայք: Դա ակնառու կերպով հետևվում է Ումմա Խանի բինտ Թալիբին փոխանցված հադիսից: Նա ասել է. «Մեքքայի ազատագրման տարում ես եկա Ալլահի առաքյալի (Ա.օ.ն.) մոտ ու նրան ասացի. «...Մորս որդին որոշել է մարդ սպանել, որին ես ապաստարան եմ տվել...»: Ալլահի առաքյալն (Ա.օ.ն.) ասաց. «Ով ումմու Խանի, մենք քեզանից ապաստարան խնդրողի անվտանգությունը երաշխավորում ենք» (Ալ-Բուխարի, № 350):

Մենք համառոտ կերպով ցուցադրեցինք Իսլամում կնոջ իրավունքները, որ տրված են նրան անկախ նրա հասարակությունում գտնվելու դիրքից: Հետագայում մենք ուզում ենք լուսավորել կնոջ յուրահատուկ իրավունքների հարցը, իրավունքների, որ նա ստանում է կախված իր սոցիալական դրությունից, տարիքային խմբից, երեխաներ ունենալուց, ընտանեկան վիճակից, և այլն:

Կանանց յուրահատուկ իրավունքները Իսլամում

Իսլամի մոտեցումը հասարակության մեջ կնոջ տեղին բազմակողմանի է և հանդիսանում է արդարության օրինակ: Այն կոչում է հոգ տանել նրա մասին նրա կյանքի բոլոր փուլերում՝ լույս գալու առաջին օրվանից մինչև մահվան օրը:

Այս հատվածում մենք համառոտ կերպով, ընդհանուր հիմունքներով կներկայացնենք ձեզ որոշ իրավունքներ, որոնց Իսլամը երաշխավորում է կնոջը որպես դուստր, ամուսին, մայր և այլն: Հետևյալ հարցը ավելի մանրամասնորեն ուսումնասիրել ցանկացողներին խորհուրդ ենք տալիս դիմել համապատասխան գրականությունը իսլամական մասով:

Կինը որպես դուստր

Ալլահը հրամայել է ծնողներին հոգ տանել իրենց երեխաների մասին, ինչ սեռի էլ որ նրանք լինեն, ու պաշտպանել նրանց: Երեխաների սպանությունը մեծ հանցագործություն է հանդիսանում: Ալլահն ասել է.

«**Մի սպանեք ձեր երեխաներին, աղքատությունից վախենալով: Մենք ձեզ և նրանց սնունդ ենք տալիս: Ճշմարիտ, երեխաներ սպանելը ծանր մեղք է**» (6:151):

Իսլամում համարվում է, որ երեխաների համար ծախսերը դա երեխաների երաշխավորված իրավունքներն են, նույնիսկ երբ նրանք գտնվում են դեռ մոր արգանդում: Ալլահն ասել է.

«**Եթե նրանք հղի են, ապա պահեք նրանց, մինչ նրանք ծնեն**» (65:6):

Դուստրի մայրական կաթ ստանալու իրավունքը

Դուստրերը ինչպես և որդիները իրավունք ունեն կրծքով կերակարման, լավ վերաբերմունքի, հոգ տանելու ու արժանապատիվ կյանք ունենալ: Դա Իսլամում համարվում է հոր պարտականություն:

Ալլահն ասել է.

«**Մայրերը հոգ կտանեն երեխաներին մասին երկու ամբողջ տարի, եթե նրանք ուզում են կատարել հոգատարության համար հարկավոր ժամանակաշրջանը ամբողջությամբ մինչև վերջ, և հայրը այդ ժամանակ պարտավոր է ուտելիքով ու հագուստով ապահովել նրանց բանականության սահմաններում**» (2:233):

Դուստրի լիարժեք խնամքի ու արժանապատիվ դաստիարակություն ստանալու իրավունքը

Իսլամը ստիպեց ծնողներին խնամել իրենց դուստրերին, ստեղծելով դրա համար համապատասխան պայմաններ ֆիզիկական, մտավոր ու հոգեկան զարգացման համար, իսլամական իրավունքի նորմերին համապատասխան:

Մարգարեն (Ա.օ.ռ.) ասել է. «**մարդու համար բավարար է մեղք, եթե նա կործանի իր ենթակայության տակ գտնվողին**» (Իբն Հիբբան, № 4240):

Ինչպես նաև. «Ձեզանից ամեն մեկը մի հովիվ է և պատասխանատու է իր խնամքի տակ գտնվողների համար: Ղեկավարը դա հովիվ է, որ պատասխանատու է քաղաքացիների համար: Տղամարդը դա հովիվ է, որ պատասխանատու է իր ընտանիքի համար: Կինը դա մի հովիվ է իր ամուսնու տանը, որ պատասխանատու է իր ենթակայության տակ գտնվող ամեն ինչի համար: Ստրուկը դա իր տիրոջ ունեցվածքի հովիվն է, որ պատասխանատու է իր ենթակայության տակ գտնվող ամեն ինչի համար: Ձեզանից ամեն մեկը հովիվ է, և յուրաքանչյուրը պատասխանատու է իր խնամքի տակ գտնվողների համար» (Ալ-Բուխարի, № 853):

Ծնողները պետք է լավ անուններ ընտրեն իրենց երեխաների համար:

Եթե ամուսինների միջև անհաղթահարելի անհամաձայնություններ են առաջանում և նրանք ամուսնալուծվում են, ապա մայրը ավելի շատ իրավունքներ ունի երեխաների դաստիարակման գործում, բացի այն դեպքերում, երբ նա ի վիճակի չի երեխաներին տալ ճիշտ իսլամական դաստիարակություն: Դա ցույց է տալիս հետևյալ հադիսը, որ փոխանցված է Ամր իբն Շուայբից. «Մի կին ասաց. «Ով Ալլահի առաքյալ: Այդ որդուն ես իմ արգանդում եմ կրել, նրան կրծքով եմ կերակրել, նստացնում էի իմ ծնկներին: Հիմա էլ նրա հայրը բաժանվեց ինձանից և ուզում է խլել նրան ինձանից»: Ալլահի առաքյալն (Ա.օ.ռ.) ասաց. «**Դու ավելի շատ իրավունքներ ունես որդու համար, մինչ ամուսնանաս**»» (Աբու Դաուդ, № 2276):

Ինչպես արդեն ասացինք Ալլահի առաքյալը (Ա.օ.ռ.) կոչ էր անում հոգ տանել աղջիկներին ու հարկադրական էր համարում լավ վերաբերմունքը նրանց հանդեպ ու նրանց կարիքների հոգալը: Նա ասել է. «**Նա՝ ով ունի երեք դուստր կամ երեք քույր, երկու դուստր կամ երկու քույր, և նա լավ է վերաբերվում նրանց հետ ու վախենում է Ալլահից, նրանց մասին հոգ տանելով, կմտնի դրախտ**» (Իբն Հիբբան, № 446):

Իսլամը դրախտ մտնելու ճանապարհ է համարում դուստերի մասին լիարժեքորեն հոգ տանելն ու լավ վերաբերվելը նրանց հետ: Աիշան ասել է. «**(Մի անգամ) իմ մոտ մի կարիքավոր կին եկավ, որ իր ձեռքերում երկու դուստր ուներ: Ես նրա քաղցը հագեցրեցի խուրմաներով (քանի որ տանը բացի դրանից ուրիշ ուտելիք չգտա): Կինը երեխաներին մեկական խուրմա տվեց, իսկ երրորդը մոտեցրեց բերանին, պատրաստվելով ուտել: (Սակայն) աղջիկները նրանից պահանջեցին և այդ խուրման: Այդ ժամանակ նա կիսեց երկու մասի այդ խուրման ու տվեց նրանց: Ինձ ցնցեց նրա արարքը և պատմեցի այդ մասին Ալլահի առաքյալին: Նա էլ ասաց. «Դրա հետևանքով Ալլահը նրան Դրախտի բնակիչ կանի»: կամ «(այդ խուրմայի հետևանքով Ալլահն) ազատեց նրան դժոխային կրակից**»» (Մուսլիմ, № 2630):

Դուստրի քնքշություն, հոգետարություն ու գթասրտություն ստանալու իրավունքը

Երեխաները կարիք ունեն քնքշության ու հոգետարության, ինչպես ուտելու և խմելու, քանի որ քնքշությունն ու հոգետարությունը մեծ ազդեցություն են թողում երեխաների հոգեբանության ու պահելաձևի վրա: Աբու Հուրայրան ասել է. «Ալլահի առաքյալը համբուրեց Ալ-Հասանի իբն Ալիին և այդ ժամանակ նրա մոտ էր նստած Ալ-Ակռաա իբն Խաբիս Ատ-Թամիմին: Ալ,Ակռաան տեսնելով դա ասաց. «Ես տաս երեխա ունեմ և երբեք չեմ համբուրել նրանցից ոչ մեկին»: Ալլահի առաքյալը նայեց նրան ու ասաց. «Ով մյուսների հանդեպ ողորմած չի, ապա ողորմության արժանի չի» (Ալ-Բուխարի, № 5997):

Դուստրերի գիտելիքներ ստանալու իրավունքը

Իսլամում բարձր են գնահատվում գիտելիքները և ունեն մեծ իմաստ: Ալլահն ասել է. **«Ալլահը բարձրացնում է ձեզանից նրանց՝ ովքեր հավատում են և ում գիտելիքներ են ընծայված»** (58:11):

Իսլամը պարտադրեց բոլոր մուսուլմաններին գիտելիքներ ձեռք բերել, և լավագույն գիտելիքը դա Ալլահի կրոնի իմացությունն է: Մարգարեն ասել է. «**Գիտելիքների ձգտելը ամեն մուսուլմանի պարտավորությունն է**» (Սունան իբն Մաջա, մաս 1, էջ 81, № 224):

Նույնիսկ ստրկուհիների ուսուցանման համար տրվում է հատուկ նվիրատվություն: Մարգարեն ասել է. «**Եթե ստրկուհի ունեցող տղամարդը օգնել է ստրկուհուն գիտելիքներ ձեռք բերել և հաջողության է հասել դրանում, դաստիարակել է նրան լավագույն ձևով ու հաջողության է հասել դրանում, իսկ հետո ազատել է նրան ու ամուսնացել նրա հետ, ապա նա դրա համար կստանա կրկնակի նվիրատվություն**» (Ալ,Բուխարի, № 4795):

Աղջկան ամուսնացնելուց աղջկա համաձայնության մասին հարցնելու անհրաժեշտությունը

Իսլամը հարգում է աղջկա ամուսին ընտրելու վերաբերյալ կարծիքը: Եթե որևէ մեկն ուզում է ամուսնանալ նրա հետ, ապա աղջիկն իրավունք ունի ինքնուրույն որոշելու, համաձայնվի, թե չհամաձայնվի:

Մարգարեն ասել է. «**Չի կարելի ամուսնացնել (ամուսնալուծված կամ այրի) կնոջը, առանց նրա հետ խորհրդակցելու, իսկ օրիորդին՝ առանց նրա համաձայնության**»: Նրան հարցրեցին. «Ով Ալլահի առաքյալ: Իսկ ինչպե՞ս ենք իմանալու նրա համաձայնության մասին»: Մարգարեն ասաց. «**Նրա լռությամբ**»: (Ալ-Բուխարի, № 4843):

Ոչ հայրը, ոչ էլ խնամակալը իրավունք չունի ստիպել աղջկան ամուսնանալ, ընդդեմ աղջկա կամքին: Աիշան ասել է. «**Ալլահի առաքյալի մոտ մի աղջիկ եկավ ու ասաց. «Ով Ալլահի առաքյալ: Հայրս ստիպեց ինձ ամուսնանալ իր եղբորորդու հետ, որպեսզի բարձրացնի իր սոցիալական մակարդակը»: Ալլահի առաքյալը նրան ընտրություն տվեց (համաձայնվել այդ ամուսնությանը կամ չհամաձայնվել): Եվ Երբ նա ասաց. «Ես համաձայն եմ այդ ամուսնությանը, սակայն կուզեի, որ կանայք իմանան, որ հայրն այդ գործում իրավունք չունի (ստիպել իր դուստրին)»**» (Ահմադ, № 25087):

Բոլոր երեխաների հետ հավասար վարմունքի կարիքը, անկախ նրանց սեռից

Իսլամը հորդում է ծնողներին արդար լինելու երեխաների հետ անկախ նրանց սեռից նրանց խնամելուց: Մուսուլմանն իր երեխաներին խնամելուց չպետք է տարբերություն դնի նրանց միջև, քանի որ բոլոր երեխաները նույնատիպ են:

Ան-Նուման իբն Բաշիրը պատմել է. «(Մի անգան) հայրս ինձ փող տվեց, (սակայն) իմ մայր Ամրա բինտ Ռաբահան ժխտեց. «Ես չեմ կարող ընդունել դա, մինչ Ալլահի առաքյալը չվկայի քո արարքը»: Հայրս գնաց մարգարեի մոտ, որ թույլտվություն խնդրի այդ գումարի համար, որ ինձ տվել էր: Ալլահի առաքյալը նրան հարցրեց. «Դու այդպես արեցիր քո բոլո՞ր երեխաներին»: Հայրս պատասխանեց. «Ոչ»: Մարգարեն ասաց. «Վախեցեք Ալլահից ու արդար եղեք ձեր բոլոր երեխաների հանդեպ»: Այդ ժամանակ հայրս վերադարձավ ու վերցրեց ինձանից իր տվածը» (Մուսլիմ, № 1623):

Իսլամն ու որբ երեխաները

Կցանկանայինք խոսել այն մասին, թե ինչպես է խնամում Իսլամը որբ երեխաներին: Որպես կանոն որբությունը նեգատիվ ազդեցություն է թողնում երեխաների անձնավորության ձևավորման, հոգեբանության, խախտում է գործնթացի լավ ընթացքին «հասարակություն մտնելուն», եթե այդ հասարակությունը չպաշտպանի նրանց իրավունքները, չկատարի նրա նկատմամբ իր պարտականությունները, նրանց հանդեպ չցուցաբերի հարկի գթասրտությունն ու ցավակցությունը:

Իսլամը հսկայական ուշադրություն է դարձնում որբերի խնամքին, անկախ նրանց սեռից: Ավելին, այդ կրոնը պարտադրել է խնամել այդ երեխաներին նրանց մոտ բարեկամներին, իսկ եթե նրանք բարեկամ չունեն, ապա իսլամական պետությունը ինքն է իր վրա վերցնում նրանց խնամելու և ապահովելու պարտականությունը:

Ալլահը մեծ պատիժ ունի որբի ունեցվածքը խլողի ու նրա իրավունքները խախտողին.

«**Ճշմարիտ, որբերի ունեցվածքը անարդարորեն խժռողները լցնում են իրենց փորերը կրակով ու այրվելու են Բոցավառվող Կրակում**» (4:10):

Ալլահի առաքյալն ասում էր. «**Ես արգելում եմ ձեզ խախտել (երկու տեսակի) թույլերի՝ որբերի ու կանանց իրավունքները**» (Ալ-Մուստադրակ, № 211): Դա նշանակում է, որ որբերի ու կանանց նկատմամբ անարդարությունը, նրանց նեղելն ու նրանց իրավունքները ոտնահարելը մեծ մեղքեր են:

Ալլահն արգելում է որբերի նկատմամբ վատ վերաբերմունքն ու նրանց նեղելը.

«**Հետևաբար մի՛ ճնշեք որբերին...**» (93:9):

Մարգարեի շատ հադիսներ կոչ են անում խնամքի վերցնել որբերին ու լավ վերաբերվել նրանց:

Ալլահի առաքյալն ասել է.

«**Ով խնամքի կվերցնի որբի, ինձ այնքան մոտ կլինի դրախտում, ինչպես սա է**» և ցույց տվեց ցուցամատն ու միջնամատը, (ի նկատի ունենալով նրանց միջև փոքր հեռավորությունը)» (Ալ-Բուխարի, № 4998):

Հադիսները նաև հղում են որբերի նկատմամբ ցավակից ու գթասիրտ լինեն: Մարգարեն ասել է.

«**Ով շոյի որբացած երեխայի գլուխը, ընդ որում ցանկանա միայն Ալլահի գոհունակությունը, նրան կգրվեն լավ գործեր ամեն մազի համար, որով կանցնի նրա ձեռքը: Իսկ ով խնամքի է վերցրել որբի, աղջկա կամ տղայի, ապա դրախտում ինձ այնքան մոտ կլինի ինչպես այս երկուսը (մատերը)», և ցույց տվեց ցուցամատն ու**

միջնամատը, (ի նկատի ունենալով նրանց միջև փոքր հեռավորությունը)» (Ահմադ, № 22207):

Իսլամը նաև ուշադրություն է դարձնում այն երեխաներին, ում ծնողները ինչ-ինչ պատճառներով անհայտ են: Այդ երեխաները, անկախ նրանց սեռից, իրավունք ունեն, որ մուսուլմաններն ու մուսուլմանական պետությունը հոգ տանի նրանց մասին, ինչպես որբերին:

Մարգարեն ասել է.

«Ամեն էակի նկատմամբ խնամքի ցուցաբերումը արժանի է նվիրատվության» (Ալ,Բուխարի, № 2334):

Ինչպես հարկն է խնամելով որբերին ու երեխաներին մենք լավ քաղաքացիներ ենք դաստիարակում, որոնք կկարողանան կատարել իրենց պարտքն ու ապրել լիարժեք կյանքով, ինչպես մյուս մարդիկ:

Կինը որպես ամուսին

Ալլահն ասել է.

«Նրա նշանների մեջ է այն՝ ինչ Նա արարեց ձեզանից կանանց ձեր համար, որ դուք նրանցում խաղաղություն և հանգստություն գտնեք, և ձեր միջև սեր ու գթասրտություն է դրել: Ճշմարիտ, դրանում մտածող մարդկանց համար նշաններ կան» (30:21):

Ալլահի Մեծությունը ապացուցող նշաններից գթասրտությունն ու զորեղությունն այն է, որ Նա մարդու համար զույգ ստեղծեց, և նրանց համակից կյանքը հանգստություն է տալիս երկուսին էլ, ինչպես մարմնային, այնպես էլ հոգեկան: Իսլամում կինը հանդիսանում է սյուներից մեկը, որի վրա են հենվում կյանքին վերաբերվող շատ բաներ, և հետևաբար նա ստանում է որոշ պարտականություններ ու իրավունքներ:

Մահրի իրավունքը (ամուսնական կամ նախամուսնական պարգև)

Մահրը դա կնոջ անխլելի իրավունքն է: Շարիաթը պարտադրեց տղամարդուն մահր տալ իր կնոջը, համարելով դա ամուսնության անմիջական պայման:

Կնոջ մոտ բարեկամներից ոչ մեկն իրավունք չունի որևէ բան վերցնել մահրից առանց նրա համաձայնության:

Մահրը վկայում է կնոջ սեփականություն ունենալու իրավունքը: Տղամարդը չի կարող մահր չվճարել նույնիսկ, եթե կինը համաձայն լինի դրան: Ամուսնությունից հետո կինը ունի լիովին իրավունք անել այն ինչ ուզում է մահրի հետ:

Ալլահն ասել է.

«Ընծայեք կանանց նրանց արժեքը մաքուր սրտով: Եթե նրանք բարի կամքով ձեզ որևէ մաս տան դրանից, ապա վերցրեք դա և վայելեք (առանց որևէ վախի), քանի որ Ալլահը թույլատրել է դա»: (4:4):

Եթե ամուսինը որոշել է ամուսնալուծվել կնոջից, ապա ամուսնալուծությունից հետո նրան չի թույլատրվում հետ վերցնել մահրը կամ դրա որևէ մասը, քանի որ դա մեղք է հանդիսանում, բացի իսլամական որոշ օրենքների բացառիկ դեպքերից: Ցուցադրելով այդպիսի արարքի արգելումը, Ալլահն ասել է.

«Եթե դուք ցանկանում եք փոխել ձեր կնոջը մի ուրիշով և նրան կանտար[15] (գումար) եք նվիրել, ապա ոչինչ մի վերցրեք այդ գումարից: Մի՞թե դուք կխլեք դա, կեղծավորություն ու բացահայտ մեղք գործելով: Ինչպե՞ս կարող եք խլել դա, եթե ձեր միջև սերտ հարաբերություններ կային ու նրանք ձեզանից մեծ խոսքեր են ստացել» (4:20-21):

Ասել է նաև.

«Ով դու՛ք, որ հավատում եք: Ձեզ թույլատրված չի ժառանգեք կանանց, առանց նրանց կամքի: Մի ստեղծեք դժվարություններ կանանց համար, որ խլեք նրանց համար վճարվածից չափաբաժին, եթե իհարկե նրանք Ֆացիսա (անօրինական սեռական կապ) (այս դեպքում թույլատրվում է ետ վերցնել այդ վճարը) չեն գործել: Լավագույն ձևով ապրեք նրանց հետ: Եթե ատում եք նրանց, ապա ասես ատում եք մի բան, որի միջոցով Ալլահը շատ բարիքներ է ընծայում» (4:19):

Այս այաթը վերաբերում ունի որոշ հարցերի, որ կապված են կնոջ իրավունքների պաշտպանության հետ.

- Արգելված է ստիպողաբար կին ժառանգել: Մինչ Իսլամը, ինչպես արդեն ասվեց, արաբների մոտ կար սովորույթ, որի համաձայն կինը ամուսնու մահվանից հետո անցնում էր ամուսնու բարեկամի ենթարկության

[15] Քաշի կամ ծավալի չափ կամ որպես կանոն նշանակում է մեծ գումար

տակ: Եթե նրանցից որևէ մեկը ցանկանում էր, ապա ամուսնանում էր նրա հետ: Այլ դեպքերում նրան ամուսնացնում էին իրենց ընտրած մարդու հետ: Նրանք նույնիսկ կարող էին արգելել ամուսնանալ կնոջն ու պարտադրել չլքել կացարանը: Պատահում էր, որ հանգուցյալ ամուսնու բարեկամները նրա վրա ավելի շատ իրավունքներ ունեին, քան նրա հարազատները, և այդպիսով այրին նման էր առարկայի, որ ձեռքից ձեռք էր անցնում ժառանգաբար:

• Ամենազորն այս այաթում ցույց տվեց, որ ամուսինը չպետք է նեղի կնոջը, բռի լինել նրա հետ, խփել նրան, առանց իրավունքի վերցնել նրա ունեցվածքը, անհիմն կերպով զրկել նրան շփումից և կատարել այլ անօրեն գործողություններ, որպեսզի ստիպի կնոջը փող վճարել յուր ազատության դիմաց: Իսլամական օրենքները թույլատրում են տղամարդուն որոշ սահմանափակումներ անել այն կնոջ ազատությանը, որն իրեն վատ է պահում, չի հարգում իր ամուսնուն ու նրա ծնողներին, ինչը վնասում է հասարակությանն ու հասարակական կարգուկանոնին: Այս սահմանափակումների նպատակը կայանում է կնոջը բարոյականության վերադարձնելու մեջ:

• Դավաճանության դեպքում իսլամական օրենքը թույլատրում է տղամարդուն բաժանվելուց առաջ ետ վերցնել տված մահրը:

• Ամենազորը հրամայեց տղամարդուն լավ ու արժանի վերաբերվել կնոջը: Ամուսինը պետք է համբերատարություն դրսևորի կնոջ հանդեպ ու մեղմ լինել: Նա պարտավոր է ձգտել, որ իր կնոջ կյանքը լուսավորված լինի երջանկությամբ: Նրան հետևում է հաճախ օգտագործել այնպիսի բառեր, որ դուրեկան են կնոջ համար ու անել այն՝ ինչ հաճույք կպատճառի կնոջը:

• Եթե ամուսնուն դուր չի գալիս իր կնոջ որևէ բան, ապա նա պետք է հիշի, որ հնարավոր է, Ալլահը այդ բանի մեջ մի հսկայական բարիք է ներդրել իր համար: Նա պետք է հիշի Ալլահի խոսքերը, որ փոխանցել է նրա հետևորդ Աբու Հուրայրան. «Հավատացյալ տղամարդուն չի նկարագրում հավատացյալ կնոջ հանդեպ վատ տրամադրվածությունը: Եթե նրան որևէ բան դուր չի գալիս կնոջից, ապա նա (անմիջապես) նրա մեջ կգտնի այն՝ ինչով բավականություն կստանա» (Մուսլիմ, № 1469):

Արդար վերաբերմունք ունենալու իրավունքը

Եթե ամուսինը մեկից ավելի կին ունի, ապա նա պարտավոր է կատարել նրանց հետ իր շփումները արդար հիմքերի վրա, այնպես, որ նրանցից ոչ մեկն իրեն առանձնացված չզգա: Այդ արդարությունը պետք է լինի ամեն ինչում: Նույնիսկ նրանում, թե ինչպես է տղամարդն ապահովում սննդով, հագուստով, տնով,

տնային հարմարություններով ու նրանց սեռական պահանջների ժամանակի հատկացումով:

Ալլահն ասում է.

«Եվ վախեցեք, որ չեք կարողանա վերաբերվել ծնողազուրկ աղջիկներին այնպես հարկն է, այդ ժամանակ ամուսնացեք ձեր ընտրած կանանց հետ՝ երկուսի, երեքի, չորսի: Եթե վախում եք, որ չեք լինի նույն կերպով արդար նրանց հանդեպ, ապա ամուսնացեք մեկի հետ կամ էլ նրանց՝ ովքեր համաձայն կլինեն: Դա ձեզ ավելի հեռու կպահի մեղք գործելուց» (4:3):

Մարգարեն ասել է.

«Ով երկու կին ուներ ու մեկին էր ավելի շատ նախընտրում, մյուսին առանձնացնելով, ապա Դատաստանի օրը կլինի հիվանդ կողքով» (Աբու Դաուդ, Ատ-Թիրմիզի և ուրիշներ»:

Պահելու իրավունքը

Ամուսինը պարտավոր է պահել իր կնոջը օրինակելիորեն, համապատասխան իր հնարավորություններին: Նա պետք է տա նրան համապատասխան կացարան, ապահովել սննդով ու հագուստով:

Ալլահն ասել է.

«Թող հարուստ տղամարդը ծախսի (յուր ապահարզան տված կնոջ ու երեխայի համար) իր հարստության չափին համապատասխան: Իսկ ով չունի, թող ծախսի Ալլահի կողմից նրան շնորհվածից: Ալլահը ոչինչի համար դժվարություններ չի ստեղծում ավելին քան բարիքներ է շնորհել: Դժվարությունից հետո Ալլահը հեշտություն կբերի» (65:7):

Մարգարեն ասել է.

«Վախեցեք Ալլահից՝ ձեր կանանց վերաբերմունքի համար... Դուք նրանց հանդեպ իրավունք ունեք՝ նրանք չպետք է թույլ տան ձեր կողմից հավանության չարժանացածի հյուրընկալումը: Եթե նրանք թույլ տան դա, ապա մեղմ պատասխանեք նրանց: Ձեր վրա է նրանց սննդով ու հագուստով ապահովելու պարտականությունը» (Մուսլիմ, № 1218):

Ամուսինը պետք է կնոջն ապահովի փողով, անհրաժեշտության ու իր ունեցածին համապատասխան չափով:

Մարգարեն հետևորդ Սաադ իբն Աբի Վակկասին ասել է. «Ինչ գումար էլ, որ ծախսեն իրենց ընտանիքի համար, Ալլահից նվիրատվություն ցանկանալով, Նա (անմիջապես) կտա, նույնիսկ (այն) սննդի կտորի համար, որ դուք կդնեք կնոջ բերանը» (Ալ-Բուխարի, № 2592 և Մուսլիմ, № 1628):

Եթե ունևոր ամուսինը հրաժարվում է ծախսել իր կնոջ համար ու կինն իրավունք ունի նրա ունեցվածքից որևէ բան վերցնել առանց նրա տեղյակ լինելու, ապա նրան թույլատրվում է վերցնել այնքան՝ ինչքան հարկավոր է իր ու ընտանիքի մյուս

անդամների կարիքները հոգալու համար, ընդ որում նա պետք է ձեռնպահ մնա չափից դուրս ծախսերից ու չափազանց քչով բավարարվելուց:

Մի անգամ Խինդ բինտ Ուտբան եկավ մարգարեի մոտ ու ասաց. «Ով Ալլահի առաքյալ, ճշմարիտ, Աբու Սուֆյանը ժլատ է: Նա չի ապահովում ինձ ու իմ երեխային (նույնիսկ) ամենաանհրաժեշտով, և ես վերցնում եմ (փողից) առանց նրա տեղյակ լինելու»: Եվ նա պատասխանեց. «Վերցրու այնքան՝ ինչքան հարկավոր է քո ու երեխայիդ կարիքները հոգալու համար» (Ալ-Բուխարի, № 5049):

Եթե ամուսնու ֆինանսական վիճակն այնքան է վատացել, որ նա ի վիճակի չէ ապահովել իր ընտանիքը ամենաանհրաժեշտով կամ եթե ամուսինը լքել է իր ընտանիքը երկար ժամանակով, դրանով նրան մեծ կարիքի մեջ գցել, և ընդ որում հրաժարվում է վերադառնալ, ապա կինն իրավունք ունի ամուսնալուծվել, դիմելով համապատասխան նախարարություններին:

Աբու Ազ-Զաննադը պատմել է. «Ես հարցրեցի Սաիդ իբն Ալ-Մուսայիբին այն տղամարդու մասին, որն ի վիճակի չէր ապահովել իր ընտանիքը»: Նա պատասխանեց. «Նրանք ամուսնալուծման եզրին են»: Երբ Աբու Ազ.Զաիդը հարցրեց. «Արդյո՞ք դա սուննա է», Սաիդը պատասխանեց. «Այո» (Սունան Ալ-Բայհակի Ալ-Կուբրա, № 15485):

Պաշտպանության և անվտանգության իրավունքը

Ամուսինը պետք է թափի բոլոր ջանքերը, որպեսզի իր ընտանիքը հեռու պահի այն իրադրությունից, որտեղ նրանք վտանգի տակ կլինեն, և ոչ միայն ֆիզիկական, հոգեկան կամ առողջական, այլ նաև հասարակական:

Ալլահն ասել է.

«Ով դուք, որ հավատում եք: Պաշտպանեք ձեզ ու ձեր ընտանիքները կրակից, որի համար որպես վառելիք մարդիկ ու քարերն են ծառայում: Նրա հետևից լուրջ, ուժեղ ու Ալլահի հրամանից հետ չքաշվող հրեշտակներ են կանգնած ու կատարում են իրենց հրամանները՝ կրակի բնակիչների համար տանջանքներ ստեղծում» (66:6):

Տղամարդը պարտավոր է պաշտպանել իրեն ու իր տնեցիներին այն բաներից, որոնք առաջացնում են հասարակական խնդիրներ ու ընդ որում ձեռնպահ մնալով ծայրահեղություններից:

Արժանապատիվ վերաբերմունքի իրավունքը

Ամուսինը պետք է լավ վերաբերվի կնոջը, վարվել նրա հետ արժանապատիվ ձևով, նույնիսկ եթե նրան դուր չի գալիս որևէ բան կնոջ արտաքնից կամ վարմունքից, քանի որ Ալլահն ասել է.

«**Ով դու՛ք, որ հավատում եք: Ձեզ թույլատրված չի ժառանգեք կանանց, առանց նրանց կամքի: Մի ստեղծեք դժվարություններ կանանց համար, որ խլեք նրանց համար վճարվածից չափաբաժին, եթե իհարկե նրանք Ֆացիսա (անօրինական սեռական կապ) (այս դեպքում թույլատրվում է ետ վերցնել այդ վճարը) չեն գործել: Լավագույն ձևով ապրեք նրանց հետ: Եթե ատում եք նրանց, ապա ասես ատում եք մի բան, որի միջոցով Ալլահը շատ բարիքներ է ընծայում**» (4:19):

Եթե ամուսնուն դուր չի գալիս իր կինը, նա իրավունք չունի վիրավորել կամ ցածրացնել նրան, հակառակը՝ նա պետք է ցուցաբերի նրա հանդեպ գթասրտություն, ցավակցություն ու խղճանք, կամ էլ պետք է հրաժարվի միասնական կյանքից նրա հետ արժանի կերպով նրան ամուսնալուծություն տալով:

Ալլահն ասել է.

«**Ամուսնալուծությունը թույլատրվում է երկու անգամ՝ հետևաբար պահպանվում է (ամուսնությունը) լավագույն կերպով կամ թողվում է (ամուսնությունը) բարությամբ**» (2:229):

Քանի որ կանայք, ինչպես և տղամարդիկ, չեն կարող կատարյալ լինել ամեն ինչում, Ալլահի առաքյալը կոչ արեց իր հետևորդներին.

«**Կանանց հետ արժանապատվորեն վարվեք, քանի որ կինը ստեղծված էր շեղ կողոսկրից, իսկ ամենամեծ կորությամբ տարբերվում է նրա վերին մասը: Եթե դու փորձեց ուղղես այն, ապա կկոտրես, իսկ եթե թողես, այն այդպես կոր էլ կմնա, այդ պատճառով կանանց հետ արժանապատվերեն վարվեք**» (Ալ-Բուխարի, № 3153):

Իհարկե ամուսնական կյանքը միշտ անամպ չի ընթանում, այդ պատճառով Ամենազորը հրամայեց տղամարդում լինել համբերատար ու հասկանալով վերաբերվել կնոջ անբավարարություններին հանուն օջախի պահպանմանը, և կնոջ բացասական կողմերը նկատելուց նա պետք է կարողանա տեսնել և նրա դրականները: Մարգարեն ասել է.

«**Հավատացյալ տղամարդը չպետք է ատի հավատացյալ կնոջը, քանի որ եթե նրան դուր չի գալիս նրանից որևէ բան, ապա նա բավարարված կմնա ուրիշով**» (Մուսլիմ, № 1469):

Ամուսինը պետք է կնոջը վերաբերվի ընկերասիրական, փափուկ և փաղաքշանքով: Մարգարեն ասել է.

«Հավատացյալներից ամենակատարյալ հավատի տերն այն հավատացյալն է, ով տարբերվում է լավագույն բարոյականությամբ, իսկ ձեզանից լավագույնները դա իրենց կանանց հետ ամենալավ վերաբերմունք ունեցողներն են» (Իբն Հիբբան, № 4176):

Տղամարդը պետք է ջանի, որ ընտանեկան կյանքում տեղ գտնվի թույլատրված հումորի, զվարճանքների, մրցումների, ընդհանուր զբաղմունքի ու սիրային խաղերի համար:

Աիշան պատմել է.
«(Մի անգամ) մարգարեն մրցեց իմ հետ վազքում և ես վազանցեցի նրան: (Որոշ ժամանակ անց) ես գիրացել էի, և մենք կրկին մրցեցինք, սակայն (հիմա) նա ինձ վազանցեց ու ասաց. «Սա (հաղթանակը) նրա համար (պարտության)»» (Իբն Հիբբան, № 4691):

Մարգարեն նաև ասել է.
«(Տղամարդու համար) ամեն ինչը, որ զրկված է Ալլահին հասկանալու բառերից, հանդիսանում է անպետք զբաղմունք ու ժամանակի կորուստ, բացի չորս արաքներից. (Երբ նա) զվարճանում է կնոջ հետ (կամ շոյում է կնոջը, ինտիմ կապի ժամանակ), անցնում է ձիու կողքով, նետից կրակել է պարապում և լող է սովորում» (Ան,Նիսաի, № 8939):

«Ամեն ինչը, որով զվարճանում է տղամարդը, անօգուտ է, բացի նետից կրակելուց, ձի հեծելուց և միասնական զվարճանքներից (կնոջ հետ) ...» (Սունան Ալ,Բայհակի, № 19517):

Ամուսինը պետք է խնայի կնոջ ունեցվածքը և իրավունք չունի ղեկավարել այն առանց նրա թույլտվության՝ վերցնել որևէ բան առանց նրա իմանալու և համաձայնության: Ալլահն ասել է.

«Անօրինականորեն մի յուրացրեք մեկդ մյուսիդ ունեցվածքը» (2:188):

Ամուսինը պետք է խորհրդակցի իր կնոջ հետ տնային ու ընտանեկան գործերի վերաբերյալ: Նա չպետք է լինի համառ ու բռի, խոչնդոտել կնոջ կարծիքին, մանավանդ, երբ նա խելացի խորհուրդներ է տալիս: Ընդհանուր որոշում ընդունելու գործընթացը ամրացնում է նրանց միջև սիրային կապը: Ալլահն ասել է.

«Եվ որոշում են իրենց գործերը ընդհանուր խորհրդով» (42:38):
Գոյություն ունեն պրակտիկ օրինակներ Ալլահի առաքյալի կյանքից, երբ նա գործում էր ղեկավարվելով իր կնոջ խորհրդով: Օրինակ՝ Քուրայշ ցեղի հետ «բարիշելու օրը» մարգարեն հրամայեց իր հետևորդներին գլուխները թրաշել և դուրս գալ իխրամի[16] (հետևորդի հատուկ վիճակ, երբ նրան արգելված է կատարել որոշ գործեր) վիճակից, սակայն նրանք տատանվում էին: Ումմա Սալաման՝ իր կինը խորհուրդ տվեց ինքնուրույն անել դա և հետո էլ դուրս գալ հետևորդների մոտ: Մարգարեն հետևեց նրա

[16] Ուխտագնացի յուրահատուկ ծիսական վիճակ,երբ նրան արգելված է անել որոշակի բաներ

խորհրդին, և երբ հետևորդները տեսան, որ նա դուրս է եկել իխրամի վիճակից գլուխը թրաշելով, հետևեցին նրա օրինակին:

Ամուսինը պետք է օգնի կնոջն տնային գործերում, չհամարելով դա իր արժանապատվությունից ցածր: Ալլահի առաքյալը լինում էր, որ ինքն էր կարում իր հագուստը, վերանորոգում կոշիկներն ու օգնում իր կանանց տնային գործերում: Աիշային հարցրեցին. «Ի՞նչ էր անում մարգարեն, երբ տանն էր«: Նա պատասխանեց. «Նա օգնում էր իր կանանց (կամ տնեցիներին), իսկ երբ աղոթելու ժամն էր գալիս, գնում էր մզկիթ» (Ալ-Բուխարի, № 642):

Ամուսինը չպետք է դժգոհի կնոջից, փնտրելով նրա սխալներն ու բացասական կողմերը: Ավելին՝ ամուսինը ինքը պետք է հեռու պահի կնոջն իրեն դուր չեկող գործերից:

Մարգարեն ասել է.

«**Եթե ամուսինը երկար ժամանակ բացակայել է տնից (ապա որոշելով վերադառնալ), նա պետք է այնպես անի, որ իր գալուստը չլինի երեկոյան ժամին**» (Ալ-Բուխարի, № 4946):

Նա չպետք է տուն գա գիշերը, անսպասելիորեն, առանց իր ընտանիքին զգուշացնելու, այլապես նա վտանգվում է տեսնել իր կնոջն այն տեսքով, որը կարող է նրա մոտ կնոջը չցանկանալու զգացում առաջացնել:

Ամուսինը չպետք է անհանգստացնի իր կնոջը նույնիսկ խոսքով, որը կարող է վիրավորել նրա զգացմունքները կամ զայրացնել նրան: Երբ Ալլահի առաքյալին հարցրեցին. «**Ով Ալլահի առաքյալ: Ի՞նչ իրավունքներ ունեն մեր կանայք», նա պատասխանեց. «(Նրանք իրավունք ունեն) լինել կերակրված, երբ դուք ունեք ուտելիք ձեռք բերելու հնարավորությունը, լինել հագնված, երբ դուք ունեք այդ հնարավորությունը, մի խփեք նրանց երեսին, մի ասեք նրանց գռեհիկ խոսքեր, մի պատժեք նրանց (նրանց հետ չշփվելով կամ մի անկողնում չքնելով), ձեր տնից դուրս**» (Աբու Դաուդ, № 2142):

Ամուսնուն չհավանող կամ նրանից վախեցող կինը, որ այն չհավանելը կարող է նրան դրդել մեղք գործելու, իրավունք ունի ամուսնալուծություն պահանջելու, ընդ որում նա պարտավոր է վերադարձնել մահրը՝ ամուսնական նվերը, սակայն եթե ամուսինը համաձայն է նրան զիջել մահրը, ապա նա իրավունք ունի վերցնել դա:

Մի անգամ կին Սաբիտա իբն Կայսա իբն Շամմասան, որն ուներ ոչ գեղեցիկ տեսք, Ալլահի առաքյալի խոստովանեց, որ նրան ծայրահեղորեն անդուր է իր ամուսնու տեսքը, և նա վախում է կատարել որևէ բան, որ կոտնահարի նրա իրավունքները: Ալլահի առաքյալը հարցրեց նրան. «Համաձա՞յն ես վերադարձնել նրան այգին (որ նա նվիրել էր որպես մահր)»: Նա պատասխանեց. «Այո»: Եվ կինը վերադարձրեց ամուսնուն այգին, որից հետո Ալլահի առաքյալը ամուսնալուծեց նրանց (Ալ-Բուխարի, № 4867):

Ամուսինը պետք է պահպանի կնոջ պատիվը, պաշտպանել նրա արժանապատվությունն ու հոգ տանել նրա բարոյական մաքրության մասին: Ալլահի առաքյալն ասել է. «**Երեք մարդ չեն մտնի դրախտ՝ չենթարկվող որդին, որ չի լսում իր ծնողներին, դյուսն[17] (կանանց արժանապատվության ու մաքրության մասին հոգ չտանող մարդը) ու կինը, որ նման է տղամարդու**» (Ալ-Մուստադրակ, մաս 1, էջ 144, № 244):

Տղամարդուն պետք է բնորոշեն բարոյական խանդի զգացմունքներն իր կնոջ վերաբերյալ՝ նա պետք է արգելի նրան հաճախել այլասեված տեղեր, ուր լինում են անվայել արարքներ ու թագավորում է անառակությունը:

Ալլահի առաքյալն ասել է.

«**Ճշմարիտ, Ալլահը խանդոտ է, և հավատացյալն էլ է խանդոտ: Ալլահի խանդը (ցուցաբերվում է), երբ հավատացյալն անում է այն՝ ինչ Ալլահն արգելել է նրան**» (Մուսլիմ, № 2761):

Ինչ վերաբերվում է խանդին, որ բնորոշ է մարդուն, ապա այն պետք է հիմնավորված լինել Իսլամի դիտակետից և լինել արդար՝ Ալլահի առաքյալն ասել է.

«**Գոյություն ունի խանդ, որ Ալլահը սիրում է, և կա խանդ, որ Նրան ատելի է: Ալլահը սիրում է, որ մուսուլմանը խանդում է, երբ կա հիմնավորում խանդի համար, և ատում է, երբ հիմնավորում չկա**» (Ահմադ, № 445, Աբու Դաուդ, № 2659, Ան-Նիսաի, № 356, Իգռուա-Ուլ-Գալիլ, № 1999):

Արդարամիտ ամուսինը պետք է ամեն ինչում հետևել Ալլահի առաքյալի օրինակին, որը համարվում է նմանվելու լավագույն օրինակը: Ալլահն ասում է. «**Ճշմարիտ, Ալլահի առաքյալում կար հիանալի օրինակ ձեր համար՝ նրանց համար, ովքեր հույս են դնում Ալլահի ու Դատաստանի օրվա վրա, և շատ են հիշատակում Ալլահին**» (33:21):

Ամուսնական համակեցության իրավունքը

Մեռական կարիքների հոգալու իրավունքը համարվում է ամենակարևոր իրավունքներից, որ ունի ամուսնացած կինը: Իսլամական օրենքները ստիպում են տղամարդուն շատ խստորեն հետևել այդ իրավունքը, որպեսզի խոչընդոտեն իրենց կնոջը կատարել այն բաները, որոնք չեն համապատասխանում բարոյական մուսուլմանին: Անկասկած ամեն կին սիրող ու մեղմ սրտով տղամարդու կարիք

[17] Մարդ ով չի հոգում կնոջ բարոյական մաքրությանը,ովքեր նրա ենթակայության տակ են:Նա չի փորձում պաշտպանել նրանց օտար տղամարդկանց աչքերից, թույլ է տալիս գտնվել օտար սղամարդու մոտ անվայել հագուստով անել ուրիշ ամոթալի արարքներ,որոնք դեմ են իսլամի նորմերին;

ունի, որը հոգ կտաներ նրա մասին և ի վիճակի է բավարարել նրա հոգեկան ու ֆիզիկական կարիքները:

Իսլամը մեղադրում է տղամարդկանց՝ ովքեր ընկնում են ծայրահեղությունների հետևից՝ ամբողջովին նվիրվում են աշխատանքներին, որոնք կապված են երկրպագելու հետ՝ հավելյալ աղոթքներն ու պահքերը, ընդ որում իրենց կանանց զրկում են հիմնական իրավունքներից: Այդ մասին բացահայտորեն ասում է այն պատմությունը, որը եղել էր Մուհամեդ մարգարեի ժամանակ, նրա հետևորդներից մեկի հետ, որ փոխանցվել է Սալման Ալ-Ֆարիսի կողմից:

Նա պատմեց. «(Մի անգամ) եկա Աբու Դառդի մոտ տեսակցության, և մուտքի մոտ ինձ ողջունեց նրա կինը, որն իմ դիմաց կանգնած էր անբարո տեսքով: Նկատելով դա արտահայտեցի. «Ի՞նչ է պատահել քո հետ»: Նա պատասխանեց. «Քո եղբայրը (հավատքի) Աբու Դառդան կորցրել է աշխարհին կապված հետաքրքրությունները: Նա գիշերները անց է կացնում աղոթելով, իսկ ցերեկները՝ պահքերում»: Քիչ անց մոտեցավ Աբու Դառդան, ողջունեց ներս մտած Սալմանին ու ուտելիքով հյուրասիրեց նրան: Սալմանն ասաց. «Միացիր», ինչին Աբու Դառդան պատասխանեց. «Պահք եմ անում»: Սալմանն ասաց. «Երդվում եմ Ալլահով, դու կկրճատես քո պահքն ու կուտես իմ հետ միասին», և Աբու Դառդան կրճատեց իր պահքն ու կերավ Սալմանի հետ: Այդ օրը Սալմանը գիշերեց Աբու Դառդայի տանը, և երբ նա արթնացավ գիշերը, որ կատարի լրացուցիչ աղոթքը, Սալմանը կանգնացրեց նրան ասելով. «Քո մարմինը որոշ իրավունքներ ունի քո դիմաց, քո Աստվածը ունի որոշ իրավունքներ քո դիմաց, և քո ընտանիքը ունի որոշ իրավունքներ քո դիմաց: Պահք պահիր, սակայն երբեմն էլ հրաժարվի դրանից, աղոթիր գիշերները, սակայն երբեմն էլ հրաժարվի դրանից հանուն քո կնոջը: Բոլորին իրենցը տուր»: Միայն արևածագից քիչ ժամանակ առաջ Սալմանը թույլ տվեց Աբու Դառդին ելնել, ասելով. «Հիմա ելիր, եթե ուզում ես»: Նրանք երկուսն էլ կատարեցին լվացումը, լրացուցիչ աղոթքը և դրանից հետո գնացին մզկիթ առավոտյան պարտադիր աղոթքի համար: Մարգարեի հետ աղոթքի ավարտից հետո Աբու Դառդան հայտնեց նրան եղածի մասին: Ալլահի առաքյալն ասաց. «Սալմանն իրավացի էր» (Ալ-Բուխարի, № 1867):

Ինչպես նաև տղամարդը չպետք է լքի կնոջը երկար ժամանակով, որի ընթացքի երկարությունը կարող է տարբերվել կնոջ առանց ամուսնու լինելու ունակության վրա: Հայտնի է, օրինակ, որ Օմար իբն Ալ-Խատտաբը իր դուստր Խավսայից խորհուրդ խնդրելով այդ ընթացքը արձանագրեց վեց ամիս: Այդ մասին է պատմում հետևյալ պատմությունը, որը փոխանցել է իմամ Աբդուռ-Ռազակն ու այլերը:

Մի անգամ, երբ մուսուլմանների ղեկավար Օմար իբն Ալ-Խատտաբը սովորույթին համաձայն գիշերը շրջում էր քաղաքով, որպեսզի անմիջականորեն տեսնի իր մարդկանց կարիքները, լսեց, թե ինչպես մի կին տխուր երգում էր.

Մի գիշերը ընկավ, որի վերջը չի երևում,

Նրա հետ էլ խոչնդոտ խավարն ընկավ:
Կրկին աչք չեմ փակի, քանի որ նա հեռու է ինձանից՝
Իմ աչքերի բերկրանքը: Նրա շոյելը միշտ հիշում եմ:
Եվ եթե Նրա կամքը չլիներ՝ Ում գահի տակ է երկինքը,
Կցնցվեր իմ հունը գուրգուրանքից, որ ինձ փաթաթված է:

Երբ առավոտյան Օմարը կանչեց նրան ու հարցրեց այդ խոսքերի պատճառը, նա պատասխանեց, որ նա շատ է տառապում ամուսնու բացակայությունից, որը երկար ժամանակ է անց կացնում պատերազմական արշավներում: Եվ այդ ժամանակ մուսուլմանների ղեկավարը հարցրեց իր դստերը. «Ինչքա՞ն ժամանակ կինը կարող է տանել ամուսնու բացակայությունը»: Դստեր կողմից որոշ տատանումներից հետո, որի ժամանակ Օմարը փորձում էր համոզել նրան, որ այդ պատասխանը կլինի ի օգուտ բոլոր մուսուլմանների, Խաֆսան վերջապես ասաց. «Վեց ամիս»: Լսելով դա Օմարը սկսեց սահմանափակել պատերազմական արշավները մինչև վեց ամիս (Աբդուռ-Ռազզակ, մաս 7, էջ 152, № 12594):

Ամուսինը պարտավոր է պահպանել կնոջ գաղտնիքները, չպետք է մարդկանց ներկայությամբ քննարկել նրա բացասական կողմերն ու արարքները, և նրան խստորեն արգելված է խոսել իրենց ինտիմ կյանքի մասին:

Մարգարեն ասել է.

«**Դատաստանի օրը Ալլահի ամենաչսիրած մարդկանցից՝ ամուսինն ու կինը, որոնք խոսում են միմյանց գաղտնիքների մասին ինտիմ հարաբերությունից հետո**» (Մուսլիմ, № 1437):

Կինը որպես մայր

Ալլահը բազմակի անգամ Իր Գրքում խոսել է ծնողների իրավունքների մասին, մասնավորապես մայրերի իրավունքների մասին:

Ալլահն ասել է.

«Քո Աստվածը հանձնարարել է ձեզ չերկրպագել ոչ մեկին բացի Իրենից և բարիքներ անել ծնողներին: Եթե ծնողներից մեկը կամ երկուսն էլ հասնեն ծերության, ապա մի՛ ասա նրանց. «Թու՛» (այսինքն՝ խոսք որում հարգանքի բացակայություն կա), մի՛ բարձրացրու ձայնդ նրանց վրա, այլ հարգալի՛ց եղիր նրանց հանդեպ»» (17:23):

Այս այաթում խոսվում է ծնողների իրավունքների մասին անմիջապես Ալլահի այն իրավունքից հետո, որի համաձայն Նրա ստրուկները բացի Նրանից՝ Մեծից, ոչ մեկին չերկրպագեն: Իսլամում ծնողների իրավունքները ավելի բարձր են դասվում մյուսների իրավունքներից, բացառությամբ ամուսինների իրավունքները իրենց կանանց նկատմամբ: Դրանով Ալլահը հղում է մուսուլմանին, որպեսզի նա ապահովի իր ծնողներին արժանի կյանքով և շրջապատել նրանց չհոգնող հոգատարությամբ:

Մարգարեն ասել է.

«**Ալլահի բավականությունը ծնողների բավականության մեջ է, իսկ չբավարարվածությունը՝ ծնողների չբավարարվածության մեջ**» (Իբն Հիբբան, № 429 և Ատ-Տաբարանի):

Ծնողներին ենթարկվելը նրանում՝ ինչը չի ընդդիմանում Իսլամի օրենքներին, և նրանց ծառայելը հանդիսանում են ամեն մուսուլմանի պարտավորություն և ավելի հարգելի, քան որոշ լրացուցիչ երկրպագություններ կատարելը, դրա մեջ էլ ջիհադի՝ սուրբ պատերազմի ոչ պարտադիր տեսակը: Մի անգամի մի մարդ դիմեց մարգարեին, նրանից թույլտվություն հարցնելով ջիհադում մասնակցություն ունենալու համար: Մարգարեն իմանալով, որ այդ մարդու ծնողները ողջ են, հրամայեց նրան վերադառնալ նրանց մոտ ասելով. «Ջիհադ արա (լինելով) նրանց հետ (քանի որ քո ջիհադը դա նրանց ծառայելն ու նրանց մասին հոգ տանելն է)» (Ալ-Բուխարի, № 2842):

Դա էլ հաստատվում է Ալլահի առաքյալի հետևյալ խոսքից, որի մասին հայտնել է նրա հետևորդ իբն Մուսուդը. «Ես Ալլահի առաքյալին հարցրեցի. «Ով Ալլահի առաքյալ: Արարքներից ո՞րն է ավելի գովելի Ալլահի համար»: Նա պատասխանեց. «Պարտադիր աղոթքի կատարումը նշանակված ժամանակին»: Ես հարցրեցի. «Իսկ (արարքներից ո՞րն է ավելի գովելի Ալլահի համար) դրանի՞ց հետո»: Նա պատասխանեց. «Ծնողների նկատմամբ բարեպաշտությունը (և նրանց ծառայելը)»: Ես հարցրեցի. «Իսկ (արարքներից ո՞րն է ավելի գովելի Ալլահի համար) դրանի՞ց հետո»: Նա պատասխանեց. «Ջիհադը դեպի Ալլահի ճանապարհին»» (Ալ-Բուխարի, № 5625 և Մուսլիմ, № 139):

Մարգարեի այլ հետևորդ Աբդուլլահ իբն Ամր իբն Ալ-Ասը պատմել է. «Մի մարդ եկավ Ալլահի առաքյալի մոտ ու ասաց. «Ով Ալլահի առաքյալ: Երդվում եմ քեզ (հավատարմության համար) հիջրա[18] (հետևյալ նախադասությունում-բնակության տեղափոխություն կրոնական պատճառներով) անելու մեջ և ջիհադի մեջ մասնակցության համար հանուն Ալլահի գոհացման»: Մարգարեն նրան հարցրեց. «Ո՞ղջ է քո ծնողներից որևէ մեկը»: Նա պատասխանեց. «Այո, երկուսն էլ ողջ են»: Մարգարեն հարցրեց. «Դու իսկապե՞ս Ալլահի ընծայի ես ծարավ»: Նա պատասխանեց. «Այո»: Եվ այդ ժամանակ մարգարեն նրան ասաց. «Վերադարձիր ծնողներիդ մոտ և եղիր նրանց համար լավագույն ընկերը»» (Մուսլիմ, № 2549):

Պատմում են նաև, որ մարգարեի մոտ եկավ Մուավիյա Աս-Սուլյամին ու հայտնեց նրան, որ ցանկանում է մասնակցել սուրբ պատերազմում հանուն Ալլահի: Մարգարեն էլ իմանալով, որ ողջ է նրա մայրը, վերադարձրեց նրան մոր մոտ ասելով. «Նրա մոտ եղիր, քանի որ դրախտը նրա ոտքերի տակ է» (Ահմադ, № 1557 և Ան-Նիսաի, № 3104):

[18] Մի վայրից մյուսը տեղափոխվելը կրոնական հիմունքների վրա.

Չնայած նրան, որ երկու ծնողներն էլ ունեն մեծ իրավունքներ իրենց երեխաների դիմաց, մայրն ունի յուրահատուկ դրույթ, որը գերազանցում է հոր դրույթը մատերիալական ոլորտում, քանի որ աստվածախոսների կարծիքով նրանք ավելի մեծ դեր են խաղում երեխայի կյանքում:

Դա հաստատվում է հետևյալ պատմությունով, որը պատմել է մարգարեի հետևորդ Աբու Հուրայրան.

«Մի անգամ մի մարդ եկավ մարգարեի մոտ ու հարցրեց. «Ով Ալլահի առաքյալ: Ո՞վ է ավելի շատ արժանի իմ բարի վերաբերմունքին»: Ալլահի առաքյալը պատասխանեց. «Քո մայրը»: Նա հարցրեց. «Իսկ ո՞վ նրանից հետո»: Առաքյալը պատասխանեց. «Քո մայրը»: Նա կրկին հարցրեց. «Իսկ ո՞վ նրանից հետո»: Առաքյալը պատասխանեց. «Քո մայրը»: Նա կրկին հարցրեց. «Իսկ ո՞վ նրանից հետո»: Նա պատասխանեց. «Քո հայրը» (Ալ-Բուխարի, № 5625 և Մուսլիմ № 2548):

Ալլահի առաքյալի այդ խոսքը պարզորեն ասում է ծնողների նկատմամբ լավ հարաբերություններ ունենալու անհրաժեշտության մասին և հաստատում է մոր իրավունքների գերազանցությունը հոր իրավունքների նկատմամբ: Եվ դա զարմանալի չէ, քանի որ հենց մայրն է կրում երկար ամիսներ երեխային իր սրտի տակ, տառապելով հղիության ցավերից, և հետո էլ տառապանքներով լույս է բերում երեխային, իսկ այնուհետև կերակրում է նրան իր կաթով, տալով նրան ամենալավ բաները, որ կան իր օրգանիզմում:

Ալլահը Ղուրանում ասում է.

«Մենք պատվիրել ենք մարդուն բարիք անի իր ծնողներին: Նրա մայրը կրել է նրան, ապրելով դժվարությունները դժվարություններից հետո, մինչ հեռացրեց նրան յուր կրծքից, երբ նա երկու տարեկան էր: Շնորհակալություն հայտնիր Ինձ ու ծնողներիդ, քանի որ վերջին ուղղությունը Իմն է» (31:14):

Մուսուլմանը պարտավոր է լսել իր ծնողներին ու ենթարկվել նրանց ամեն ինչում, որը չի ոտնահարում Ալլահի ու Նրա առաքյալի օրենքները: Եթե ծնողները մղում են երեխային կատարել Աստծո կողմից արգելվածը, ապա նա պետք է ժխտի նրանց ասածը արժանի ձևով՝ թույլատրվածի սահմանները չանցնելով, ընդ որում մնալով նրանց համար բարի ընկեր ու օգնական:

Ալլահը Ղուրանում ասում է.

«Իսկ եթե նրանք (ծնողներդ) ջանեն, որ դու Ինձ ընկերակից տաս, որոնց մասին դու գիտելիքներ չունես, ապա մի ենթարկվիր նրանց, սակայն եղիր նրանց հետ բարի, այս աշխարհում, և հետևիր նրանց ճանապարհին՝ ովքեր դիմեցին Ինձ ենթարկության ու հոգեթողության համար: Հետո դուք վերադառնալու եք Իմ մոտ, և ես կհայտնեմ ձեզ այն մասին՝ ինչ արել եք (ձեր ամբողջ կյանքի ընթացքում)» (31:15):

Եթե մուսուլմանի ծնողները ուրիշ կրոն են դավանում, նա միևնույնն է պետք է ենթարկվի ու օգնի նրանց, սակայն միայն նրանում՝ ինչը Ալլահի օրենքներին չի հակասում: Ասման պատմել է հետևյալ պատմությունը. «Մայրս, որ (այդ ժամանակ) հեթանոս էր, եկավ ինձ տեսակցության: Ես Ալլահի առաքյալին հարցրեցի. «Մայրս

եկել է իմ մոտ կարիքի համար, կարո՞ղ եմ օգնել նրան (կամ կարո՞ղ եմ նրա հետ արյունակցական կապ պահպանել)»: Նա պատասխանեց. «Այո, օգնիր մորդ»: (կամ. «այո, պահպանիր մորդ հետ արյունակցական կապ»)» (Ալ-Բուխարի, № 2477):

Այսպիսով ամեն մուսուլմանի համար պարտք է լսել ծնողներին ու ենթարկվել նրանց բոլոր գործերում, բացի Ալլահի կողմից արգելվածներից, և անհիմն ընդվզումն ու վերապահորեն կատարումը կարող է զայրացնել Ալլահին:

Մարգարեն պատմել է հետևյալ ուսուցանող պատմությունը, որը փոխանցել է Աբու Հուրայրան.

«Ոչ ոք չի խոսացել օրրանում (լինելով նորածին), բացի երեքից՝ (որոնցից մեկն էր) Իսա իբն Մարիամից (Մարիամի որսի Հիսուսից): (Երկրորդն այն նորածինն էր, որի հետ Ջուրայջն էր խոսում): Ջուրայջը պատկանում էր Իսրայելի տանը և մարդ էր, որ նվիրվել էր Ալլահին երկրպագելուն: Նա (իր համար կառուցեց) պատսպարանում էր և (միշտ) գտնվում էր այնտեղ: (Մի անգամ) երբ նա աղոթում էր, նրա մոտ եկավ նրա մայրն ու ասաց. «Ով Ջուրայջ»: Նա ասաց. «Ով, աստված իմ, մայր իմ ու աղոթք իմ»: Որից հետո շարունակեց աղոթել, իսկ նրա մայրը գնաց: Հաջորդ օրը Ջուրայջի մայրը կրկին եկավ նրա աղոթելու ժամին և ասաց. «Ով Ջուրայջ», և նա կրկին ասաց. «Ով, աստված իմ, մայր իմ ու աղոթք իմ», որից հետո էլ շարունակեց աղոթել: Այդ ժամանակ նրա մայրը զայրացած բացականչեց. «Ով Ալլահ, թույլ մի տուր նրա մահը, մինչ նա ճանաչի թեթևաբարո կանանց երեսները»: (Շուտով) Դրանից հետո Իսրայելի որդիք սկսեցին խոսել Ջուրայջի ու նրա երկրպագման մասին, իսկ (նրանց մեջ) կար մի պոռնիկ, որի գեղեցկությունով հիանում էին մարդիկ: Նա ասաց. «Եթե ցանկանում են, ես անպայման կգայթակղեմ նրան»: Եվ նա հայտնվեց նրա մոտ, սակայն նա վերջինս (նույնիսկ) չշրջվեց նրա կողմը: Այդ ժամանակ նա եկավ հովվի մոտ, որ թաքնվում էր իր պատսպարանում, թույլ տվեց նրան, որ տիրի իրեն ու հղիացավ, իսկ երբ ծնեց, ասաց. «Նա Ջուրայջայից է»: Եվ այդ ժամանակ մարդիկ եկան նրա մոտ, ստիպեցին նրա ներքև իջնել, քանդեցին նրա պատսպարանն ու սկսեցին ծեծել նրան: Նա հարցրեց. «Ի՞նչ է պատահել ձեր հետ»: Նրանք ասացին. «Դու դավաճանություն կատարեցիր այս պոռնիկի հետ ու նա քեզ երեխա է ծնել»: Նա հարցրեց. «Ու՞ր է այդ երեխան»: Երբ նրանք բերեցին այդ երեխային նրա մոտ, (Ջուրայջը) խնդրեց. «Թույլ տվեք աղոթեմ»: Եվ նա աղոթք կատարեց, իսկ ավարտելուց հետո մոտեցավ երեխային և նրա փորին թույլ խփելով ասաց. «Ով տղա, ո՞վ է քո հայրը»: (Նորածինն) ասաց. «Մի հովիվ»: (Մարդիկ լսելով դա) մարդիկ սկսեցին գալ Ջուրայջայի մոտ, համբուրել ու դիպչել նրան, իսկ (հետո) ասացին. «Մենք քեզ ոսկե պատսպարան կկառուցենք», իսկ նա ասաց. «Ոչ, կավից կառուցեք, ինչպես որ կար»: Եվ նրանք արեցին դա»:

(Ինչ վերաբերվում է երրորդ նորածնին, ապա) մի անգամ, երբ նա մոր կուրծքն էր ուտում, (նրանց) կողքով մի գեղեցիկ ձիավոր անցավ հիանալի ձիու վրա, և (երեխայի) մայրն ասաց. «Ով Ալլահ, իմ որդուն այս (ձիավորի) պես արա»: Այդ ժամանակ փոքրիկը թողեց կուրծքն ու շրջվեց (դեպի ձիավորը), նայեց նրան ու ասաց. «Ով Ալլահ, ինձ նրա պես չանես», որից հետո կրկին շարունակեց կաթով կերակրվելը:

Այս մասին պատմող Աբու Հուրայրան ասել է.

-Եվ իմ մոտ մինչ այժմ կանգնած է Ալլահի առաքյալը, որ պատմել է այն մասին, թե ինչպես էր (այդ նորածինը) կուրծք ուտում, և բերանը դնելով իր ցուցամատը սկսեց ծծել: Իսկ հետո (Ալլահի առաքյալն) ասաց.

Իսկ (որոշ ժամանակ անց) (նրանց) կողքով մի ստրկուհու տարան, որին նրանք ծեծում էին գոռալով. «Դու դավաճանել ես: Դու գողություն ես արել»: Նա էլ ասում էր. «Ինձ բավարար է Ալլահը՝ Նա հոյակապ խնամակալ է»: (Տեսնելով դա) նրա մայրն ասաց. «Ով Ալլահ, իմ որդուն նրա (ստրկուհու) պես չանես»: Այդ ժամանակ (մանկիկը կրկին) թողեց կուրծք ուտելը, նայեց ստրկուհուն ու ասաց. «Ով Ալլահ, ինձ նրա նման արա»: Եվ այդ ժամանակ նրանք սկսեցին խոսել միմյանց հետ ու (կինն) ասաց. «(Ինչու՞) երբ անցնում էր այն (այնքան) հոյակապ տեսք ունեցող մարդն ու ես ասացի. «Ով Ալլահ, իմ որդուն այս (ձիավորի) պես արա», դու ասացիր. «Ով Ալլահ, ինձ նրա պես չանես», իսկ երբ տանում էին այն պոռնիկին, որին մարդիկ ծեծում էին գոռալով. «Դու դավաճանել ես: Դու գողություն ես արել», և ես ասացի. «Ով Ալլահ, իմ որդուն նրա (ստրկուհու) պես չանես», դու ասացիր. «Ով Ալլահ, ինձ նրա նման արա» (Երեխան) պատասխանեց. «Ճշմարիտ, այդ մարդը բռի է, և այդ պատճառով ես ասացի. «Ով Ալլահ, ինձ նրա պես չանես», (իսկ ինչ վերաբերվում է) այդ (ստրկուհուն), որի մասին ասում են. «Դու դավաճանել ես: Դու գողություն ես արել», իսկ նա (դա չի արել, և նրա մասին ասում են). «Դու գողություն ես արել», իսկ նա ոչինչ չի գողացել, և (այդ պատճառով) ես ասացի. «Ով Ալլահ, ինձ նրա նման արա» (Ալ-Բուխարի, № 3253):

Ծնողներին չլսելը, չհարգելը, նրանց նկատմամբ ունեցած պարտավորությունները չկատարելը հանդիսանում են մեծ մեղքեր, որոնց համար պատիժ կա ինչպես այս կյանքում այնպես էլ ապագա կյանքում:

Մարգարեն ասել է. «Գոյություն չունեն մեղքեր, որոնց համար Ալլահը պատժում է և այս աշխարհում և մյուսում, բացի երկուսից՝ անարդարությունից և բարեկամական կապերը խզելուց» (Ատ-Թիրմիդի, № 2511, Իբն Մաջա, № 4211):

Մարգարեն նաև ասել է. «Ճշմարիտ, Ալլահն արգելում է մայրերին չլսել, մարդկանց արժանին չմատուցել, պահանջել այն՝ ինչի իրավունքը չունեք, նորածին աղջիկներին ողջ թաղել, և մեղադրում է դատարկաբանությունը, ավելնորդ հարցերն ու վատնումները» (Ալ-Բուխարի, № 5630):

Ինչպես նաև Ալլահը պատասխանում է Իր այն ստրուկների աղոթքներին, որոնք լավ են վերաբերվում իրենց ծնողներին ու հոգ են տանում նրանց մասին:

Իբն Օմարը պատմեց հետևյալ պատմությունը, որն իրեն էր պատմել մարգարեն.

«(Մի անգամ) ձեզանից առաջ ապրողներից երեքը ճամփա ընկան (և գնացին) այնքան ժամանակ մինչև կանգ առան մի քարանձավում գիշերելու համար, սակայն երբ նրանք մտան այնտեղ, սարից մի ժայռ ընկավ և փակեց մուտքը: Այդ ժամանակ նրանք ասացին. «Ճշմարիտ, այս քարից մեզ միայն Ալլահին աղոթքով դիմելը կփրկի, մեր բարի գործերի համար»:

(Դրանից հետո) նրանցից մենկ ասաց. «Ով Ալլահ, ես ծեր ծնողներ եմ ունեցել, և երեկոները ես իմ ընտանիքին կաթ չէի բերում մինչ իմ ծնողներին բերելը: Մի անգամ իմ հոտի համար կերակուրի որոնումներն ինձ (տնից) հեռու տարան, իսկ երբ վերադարձա, նրանք արդեն քնած էին: Ես նրանց համար կաթ էի կթել, սակայն չցանկացա ոչ արթնացնել նրանց, ոչ էլ կաթ տալ ընտանիքիցս առաջ, այլ պուլիկը ձեռքս սպասեցի մինչ լուսանա և նրանք արթնանան ու երեխաներն էլ սովից լացում էին ոտքերիս մոտ: Իսկ հետո (ծնողներս) արթնացան ու խմեցին իրենց երեկոյան

կաթը: Ով Ալլահ, եթե ես արել եմ դա Քո գոհությանը ձգտելով, ապա ազատիր մեզ այս իրավիճակից, որ հայտնվել ենք ժայռի պատճառով»: Եվ դրանից հետո (այդ քարը շարժվեց), բացելով նրանց ելքի ճանապարհը սակայն ոչ այնքան, որ կկարողանային անցնել:

Մյուսն ասաց. «Ով Ալլահ, ճշմարիտ, մի բարեկամուհի ունեի, և սիրում էի նրան այնքան ուժեղ՝ որքան տղամարդը կնոջը, և ցանկանում էի նրան, սակայն նա ընդդիմանում էր: (Այդպես շարունակվեց մինչև), երբ մի անբարենպաստ տարի եկավ: Եվ այդ ժամանակ նա եկավ իմ մոտ, իսկ ես նրան հարյուր քսան դինար տվեցի, որ ինձ թույլ տա տիրեմ իրեն: Եվ նա համաձայնվեց, երբ ես հնարավորություն ստացա (տիրեմ) նրան, նա ինձ ասաց. «Վախեցի՛ր Ալլահից և այդ տխրությունը անարդարորեն մի կոտրիր»: Եվ այդ ժամանակ ես լքեցի նրան, (չնայած նրան) որ սիրում էի ամենից շատ, թողնելով նրան տվածս ոսկին: Ով Ալլահ, եթե ես արել եմ դա Քեզ գոհացնելու համար, ապա հանիր մեզ այս դրությունից, որ ընկել ենք»: Դրանից հետո ժայռը (տեղաշարժվեց այնքան, որ նրանք կարեցան) դուրս գալ ու հեռանալ» (Ալ-Բուխարի, № 2152): Երրորդն ասաց. «Ով Ալլահ իրոք մի անգամ ես վարձեցի աշխատողների եվ վճարեցի նրանց բացի մի մարդուց, որը թողեց այն ինչ իրեն հասնում էր, ու գնաց: Ես օգտագործեցի նրա փողերը ու կրկնապատկեցի այն: Որոշ ժամանակ անց նա եկավ ինձ մոտ եվ ասաց. «Ով Ալլահի ծառա,տուր ինձ իմ վարձը»: Ես նրան ասացի. «Քո վարձն է այս բոլոր ուղտերը, կովերը,ոչխարները եվ ստրուկները որոնց դու տեսնում ես»: Նա ասաց. «Ով Ալլահի ծառա, մի ծիծաղիր ինձ վրա»: Ես ասացի. «Ես չեմ ծիծաղում»: Եվ նա վերցրեց այդ բոլորը եվ տարավ ,ոչինչ չթողնելով: Ով Ալլահ, եթե ես արել եմ այդ ձգտելով Քեզ, ապա դուրս հանիր մեզ այն վիճակից որտեղ ենք մենք»: Սրանից հետո քարը շարժվեց այնպես որ նրանք կարողացան դուրս գալ»:

Ալլահը ծնողների հանդեպ բարիքն ու հոգատարությունը մեղքերի ներման պատճառ արեց: Աբդուլլա իբն Օմարը (Ալլահը գոհ լինի նրանից ու նրա հորից) պատմել է.

«Մի տղամարդ եկավ Ալլահի առաքյալի մոտ ու ասաց. «Ով Ալլահի առաքյալ: Ես մեղք եմ գործել: Կա՞ իմ համար թողություն»: Ալլահի առաքյալը հարցրեց. «Ո՞ղջ են ծնողներդ»: Տղամարդը պատասխանեց. «Ոչ»: Մարգարեն հարցրեց. «Իսկ մորաքույր ունե՞ս»: Նա պատասխանեց. «Այո»: Մարգարեն ասաց. «Ուրեմն լավ վերաբերվիր նրան»» (Իբն Հիբբան, № 435):

Իսլամում մորաքույրը որոշ դեպքերում ունի մոր կարգավիճակին հավասար կարգավիճակ: Մարգարեն ասել է.

«Մորաքույրն ունի նույն կարգավիճակը՝ ինչ ունի մայրը» (Ալ-Բուխարի, № 2552):

Իսլամը նախազգուշացնում է մուսուլմանին իր պարտականությունները կատարելու համար, նույնիսկ ծնողների մահվանից հետո: Մալիկ իբն Ռուբայան ասել է. «Երբ նստած էինք Ալլահի առաքյալի մոտ, մի տղամարդ եկավ բանու Սակամա ցեղից ու ասաց. «Ով Ալլահի առաքյալ: Կարելի՞ է բարեգործություններ անել ծնողներին նրանց մահվանից հետո»: Մարգարեն ասաց. «Այո՝ աղոթել նրանց ողորմության համար, կատարել նրանց հանձնարարածը, բարեկամական կապեր

պահպանել նրանց հետ՝ ում արյունակցում ես նրանց օրոք և բարիքներ կատարես նրանց ընկերներին»» (Աբու Դաուդ, № 5142):

Կինը որպես բարեկամ, հարևան, այրի

Իսլամական օրենքները կանանց տալիս են նույն հիմնական իրավունքները՝ ինչ տալիս է տղամարդկանց: Դրանում է իսլամի տարբերող մասը՝ հոգատարություն հասարակության վիճակի մասին և օգնություն մուսուլմանական հասարակության բոլոր անդամներին:

Մարգարեն ասել է. «Հավատացյալներն իրենց երկկողմանի հոգատարության, սիրո և բարության մեջ նման են մարդկային մարմնի՝ երբ մի օրգանի վնասվելու դեպքում անհանգստության մեջ է հայտնվում ամբողջ մարմինը» (Մուսլիմ, № 2586):

Նաև ասել է. «Հավատացյալը հավատացյալի հետ հարաբերություններում նման է կառույցի, որի առանձին մասերն իրար են ամրացնում», և (ասելով դա), մարգարեն խաչեց մատերը (ի նշան կապվածության) (Ալ,Բուխարի, № 467, Մուսլիմ, № 2585):

Ալլահը հրամայել է մուսուլմաններին նման կերպով պահպանել բարեկամական կապերը երկու սեռերի բարեկամների հետ, անկախ նրանց հեռու կամ մոտ բարեկամ լինելուն.

«Եթե ձեզ իշխանություն տրվեր, մի՞թե կոչնչացնեիք երկրում և կխզեիք ձեր կապերը բարեկամների հետ» (47:22):

Մարգարեն ասել է.

«Ով բարեկամական կապ է կտրում՝ դրախտ չի մտնի» (Մուսլիմ, № 2556):

Իսլամը հատուկ նշանակություն է տալիս կարիքավորների մատերիալական օգնությանը, անկախ նրանց սեռից:

Մարգարեն ասել է.

«Ով խղճին ողորմություն տա, պարգև կստանա, իսկ խեղճ բարեկամին ողորմություն տվողը՝ կրկնակի պարգև. ողորմության ու բարեկամական կապի պահպանման համար» (Սահիհ իբն Հուզայմա, № 2067):

Իսլամը հատուկ կարգավիճակում է պահում հարևաններին, անկախ նրանց սեռից:

Ալլահն ասել է.

«Երկրպագեք Ալլահին և նրան գործընկեր մի՛ տվեք: Բարիք արեք ծնողներին, բարեկամներին, որբերին, խեղճերին, բարեկամների և ձեր հարևաններին, մոտ գտնվող ուղեկիցներին, ճամփորդներին ու ծառաներին, որոնց կարողացել եք տիրել: Ճշմարիտ, Ալլահը չի սիրում հպարտներին ու պարծենկոտներին, որ ժլատություն են անում, մարդկանց հրամայում են ժլատ լինել և թաքցնում են այն՝ ինչ Ալլահն է ընծայել Իր գթությունից: Մենք չհավատացողներին ցածրացնող պատիժ ենք նախապատրաստել» (4:36):

Ալլահի առաքյալն ասել է. «**Ջիբրիլը (Գաբրիել հրեշտակապետը) այնքան հստակորեն էր ինձ կոչ անում հարևանների մասին հոգ տանելուն, որ ես մտածեցի, որ հարևանը պետք է դառնա իր հարևանի օրինական ժառանգորդը**» (Ալ-Բուխարի, № 5668):

Ինչպես նաև մի անգամ ասաց. «**Երդվում եմ Ալլահով, չի հավատում, երդվում եմ Ալլահով, չի հավատում, երդվում եմ Ալլահով, չի հավատում»: Նրան հարցրեցին. «Ո՞վ (չի հավատում), ով Ալլահի առաքյալ»: Նա պատասխանեց. «Նա ՝ ում վնասից իրեն անվտանգության մեջ չի զգում նրա հարևանը**» (Ալ-Բուխարի, № 5670):

Մարգարեի հետևորդները ուշադիր հետևում էին իրենց հարևանների գործերի վիճակին, և մասնավորապես կանանց գործերի, որպեսզի կարիքի դեպքում առաջինը օգնության հասնեն: Ասֆահանին «Խուլյատուլ-Աուլիա» գրքում մեջբերել է Տալխայի պատմած հետևյալ պատմությունը. «Մի անգամ, գիշերը Օմար իբն Ալ-Հատտաբը՝ մուսուլմանների ղեկավարը դուրս եկավ իր տնից: Ես որոշեցի հետևել նրան, որ տեսնեմ, թե ինչ է անում նա գիշերը: Ես տեսա, թե ինչպես նա մի տուն մտավ ու որոշ ժամանակ անց դուրս եկավ, իսկ հետո ուրիշ տուն մտավ: Առավոտյան ես գնացի առաջին տուն ու ներս մտա, որ իմանամ, թե ով է ապրում այնտեղ: Զարմանալի էր իմ համար, որ այնտեղ մի ծեր, կույր և պարալիչով հիվանդ կին էր ապրում: Ես նրան հարցրեցի. «Ի՞նչ էր ուզում քեզանից երեկ երեկոյան եկած մարդը»: Նա պատասխանեց. «Այդ մարդը արդեն այսքան ժամանակ հոգ է տանում իմ մասին՝ հոգում էր իմ կարիքները, հավաքում է տունն ու պահպանում է իմ հանգիստը»: Եվ այդ ժամանակ Տալխան իր մասին ասաց. «Մի՞թե կարելի է արատ գտնել այդ մարդու մեջ»:

Իսլամը հատուկ ուշադրություն է դարձնում այրիների մասին հոգատարությանը

Ալլահի առաքյալն ասել է. «**Այրիների ու խեղճերի մասին հոգ տանող մարդը նման է մարտիկի, որ մասնակցում է սուրբ պատերազմում», կամ էլ ասել է. «նման է անդադար աղոթողի, կամ անդադար պահք պահողի**» (Ալ-Բուխարի, № 5038 և Մուսլիմ, № 2982):

Այսպիսով ընդհանրացնելով այն քիչը՝ ինչի մասին պատմեցինք նախորդ գլուխներում իսլամում կանանց իրավունքների և նրանց հանդեպ տղամարդկանց պարտականությունների մասին, կարելի է համարձակորեն հաստատել, որ դժվար թե մարդկությունը երբևէ վկա էր կանանց հանդեպ այսքան արդար վերաբերմունքի, որը նրանց երաշխավորված է իսլամի օրենքներով:

Իսլամում կնոջ դիրքի հետ կապված որոշ սխալ աշխարհայացքներ

Իսլամում կնոջ դիրքի և իրավունքների թեման շարունակելով, կցանկանայի կանգ առնել մի շարք սխալ աշխարհայացքների վրա, որ այսօր

տարածված են որոշ հասարակական տեղեկատվական միջոցներով և առանձին անազնիվ հետազոտողներով ու քաղաքագետներով, որոնց նպատակն է, ինչպես մեզ երևում է, անպատրաստ լսողների աչքերի առաջ մուսուլման կնոջ ձևը պղծելն ու իսլամի վարկաբեկումը: Իսլամի ու նրա հավատացյալների հանդեպ այդպիսի բացասական դրվածքը պատճառների մասին կարելի է խոսել շատ ու երկար: Մենք մեր համեստ աշխատության սահմաններում ցանկանում ենք սահմանափակվել պրոֆեսոր Հենրի Մակոուի խոսքերով, որը խոսում է այն ծառացած բարոյական հարձակումների մասին որ ենթարկվում է մուսուլմանուհին և ընդհանրապես իսլամը: Նա գրել է. «... Կնոջը տրված դերը, որ որ քաղաքակրթությանն էլ պատկանի, մեծ է: Պատերազմը, մեր աչքերի դիմաց որ կապվում է արաբամուսուլմանական աշխարհին Մերձավոր Արևելքում ունի ոչ միայն գրավելու նպատակ՝ արաբական նավթին տիրելու, սակայն նաև ուղղված է նրանց քաղաքակրթության և կրոնի դեմ: Այն նպատակաուղված է, որ զրկի մուսուլմանուհուն իր հագուստից և այն փոխարինի բիկինիով...»(Bikini vs. Burka: The Debauchery of Women. September, 2009 // www.HenryMakow.com):

Մենք տեսանք, թե ինչքան ճիշտ է նկատել պրոֆեսորը արևմուտքի իսլամի դիրքերը թուլացնելն ու մուսուլմանուհուն փչացնելը, նրան բառացի ազատության իդեալները ներշնչելով և կոչ անելով, որ հրաժարվի հիջեբ կրելուց՝ բարոյական մուսուլմանուհու սովորույթային հագուստից: Հետագայում Մակոուն շարունակում է.

«Մուսուլմանուհու հիմնական հոգատարությունները ուղղված են տանը, ուր ծնվել և դաստիարակվում են նրա երեխաները: Նա օջախի պահապանն է, ընտանիքի արմատն է, որ հոգևոր սնունդ է տալիս, երեխաներին է դաստիարակում, նրանց կշտության մասին է հոգ տանում, ամուսնու հենապյունն ու ապաստարանն է:

Ի տարբերություն նրան ամերիկուհի գեղեցկության թագուհու հոգատարությունները ուղղված են գրեթե մերկ շրջելուն՝ միայն բիկինիով, միլիոնավոր հեռուստադիտողների դիմաց: Նա համոզված ֆեմենիստուհի է, որ միայն իրեն է պատկանում: Սակայն պրակտիկայում, ինչքան էլ պարադոքսալ է հնչում, նա բոլոր իրեն ցանկացողների ունեցվածքն է: Նա միաժամանակ պատկանում է բոլորին և ոչ ոքի: Նրա հիմնական նպատակը իր մարմինը հնարավորինս բարձր գնով վաճառելն է... Ամերիկայում կնոջ պահանջարկը որոշվում է կնոջ ցանկալի արտաքինով... Եվ արդյունքում միջին ամերիկուհին իր պաշտոնական ամուսնությունից առաջ տասնյակ տարբեր մարդկանց հետ սեռական հարաբերությունների փորձ է ունենում: Անմեղության հասկացությունը, որը հանդիսանում է կանացի գեղեցկության անփոխարինելի մաս, դառնում է խորթ նրա համար: Նրա սիրտը քարանում է, իսկ ուղեղը դառնում է հաշվիչ մեքենա: Չունենալով սիրելու կարողություն, մի՞թե նա արժանի է, որ նրա արգանդը լինի ամուսնու սերմի տեղ»:

Բազմակնությունը

Բազմակնությունը որպես ամուսնության տեսակ, որում տղամարդը միաժամանակ ունի մեկից ավելի կին թույլատրված է իսլամում և ունի պատմական խոր արմատներ շատ ուրիշ քաղաքակրթություններում և կրոններում: Օրինակ՝ հրեա-քրիստոնեական սովորույթները հաստատում են շատ մարգարեների մոտ մեկից ավելի կանանց լինելը, որոնք քարոզել են մինչիսլամական ժամանակաշրջանում: Այդպես Հին կտակարանին համաձայն մարգարե Աբրահամը երեք կին ուներ (Հին կտակարան, 16:3, 21:1-1, 25:1.), Հակոբը՝ չորս (Հին կտակարան, 29:28, 30:4, 30:9.), Դավիթը՝ բազում կանանց, չհաշված հարճ (2 Սամվել, 5:13), իսկ Սողոմոնը՝ 700 կին և 300 հարճ (1Թագավորություն, 11:3.): Կան հաստատումներ, որ հրեաները բավականին տարածված էին անում բազմակնություն մինչ իսլամական ժամանակաշրջանում (*Coogan, Michael.* God and Sex. What the Bible Really Says (1st ed.). New York, Boston: Twelve, Hachette Book Group. C. 78.) և դա մինչ այժմ էլ տարածված է նրանց մեջ» (*Joyce, George.* Christian Marriage: An Historical and Doctrinal Study. Sheed and Ward. C. 560.): Եկեղեցու ամենահին հայրերից մեկը՝ Ջասթին Մարտիրը (110-165թթ.) հայտնել է, որ իր ժամանակներում հրեային թույլատրվում էր ունենակ չորս կամ հինգ կին (*Justin Martyr.* Dialogue with Trypho the Jew. § 134.): Ինդուիզմի տարբեր հոսքերի հայեցողությանը տարբեր է այդ թեմայի նկատմամբ, սակայն որոշ հետազոտություններ թույլ են տալիս ասել, որ դա այնտեղ հազվադեպ էր: Բացառություն է կազմում Եմենի և այլ արաբական երկրներում գտնվող հրեական սփյուռքը՝ ուր բազմակնությունը չի արգելվում: Իսրայելում բազմակնությունը պաշտոնապես արգելվում է (*Eglash, Ruth.* Israel 2008: State of Polygamy // www.Fr.jpost.com; *Aburabia, Sarab.* Victims of polygamy // www.Haaretz.com), սակայն որոշ ռաբբիներ կողմ են արտահայտվում բազմակնությանը, իսկ Օսվալդ Իոսեֆը՝ Իսրայելի նախկին գլխավոր սեֆարդիտյան ռաբբին իր ժամանակ դիմում էր պետական մարմիններին բազմակնությունը թույլատրելու խնդրանքով և պահանջում էր օրինականացնել հարճ ունենալը (Polygamy's Practice Stirs Debate in Israel //www.WWRN.org):

Հին կտակարանը ոչ միայն թույլատրում է մարդուն ունենալ մի քանի օրինական կին, այլ նաև դնում է հետևյալ պայմանները, որ պետք է հետևի մեկից ավելի կին ունեցողը. «...**Եթե ուրիշով նրան փոխարինի, ապա նա չպետք է զրկվի սննդից, հագուստից ու ամուսնական համակեցությունից**» (Ելք, 21:10.) և տղամարդուն՝ ում եղբայրը մահացել է և իր ետևից կին է թողել, ստիպում է ամուսնանալ նրա կնոջ հետ. «**Եթե եղբայրները միասին են ապրում և նրանցից մեկը մահանում է չունենալով որդի, ապա հանգուցյալի կինը չպետք է օտար տղամարդու հետ ամուսնանա, այլ նրա տեգրը պետք է մտնի նրա մոտ, ամուսնանա նրա հետ և միասին ապրի**...» (Երկրորդ օրենք, 25:5): Առարկայորեն Հին կտակարանում չկա որևէ բանաստեղծություն, որի համաձայն բազմակնությունը արգելված լինի:

Նոր կտակարանում Հիսուսին հանձնարարություն է տրվում շարունակել Մովսեսի օրենքը, Ալլահը ողորմած լինի այդ երկու մարգարեներին, և նրանում չկա ոչ մի մեջբերում, որը համոզիչ կերպով ազելում է բազմակնությունը: Բոլոր

բանաստեղծությունները, որոնք բազմակնության հակառակորդները բերում են որպես իրենց աշխարհայացքների իրավության ապացույց, ունեն տարբեր իմաստների արտահայտություններ տարբեր քրիստոնեական աստվածաբանների մոտ: Քրիստոնեությունում բազմակնության արգելումը դա ընդամենը օրենսդրության արդյունքն է, որ ձևավորվել է քրիստոնեական եկեղեցու որոշ մասնիկերով, այլ ոչ թե քրիստոնեության սկզբնաղբյուրներից, և քրիստոնեական աշխարհի պատմությունը հանդիսանում է դրա հստակ վկայությունը: Այդպես Դուբլինի Տրինիթի քոլեջի գենետիկայի պրոֆեսոր Դեն Բոեդլիի խոսքերով բազմակնությունը տարածված էր հետքրիստոնեական Իռլանդիայում (*James Owen.* Millions of Men May Be Descended From Irish King. January 20, 2006. National Geographic News): Վեցերորդ դարի կեսերին Իռլանդիայի գերագույն Թագավոր Դիարմայդն ուներ երկու կին և երկու հարճ, բազմակնությունը լայնորեն տարածված էր և Մերեվինքների դինաստիայի թագավորների որոք՝ երկուական կին ունեին Ֆիլիպ առաջին Մեծահոգին, Քեսսենյան լանդգրաֆն ու Ֆրիդրիխ Վիլհելմ երկրորդը՝ Պրուսիայի թագավորը (*Վեսթերմարկ (Westermarck), Էդվուարդ* (1862–1939). Մարդկային զույգի պատմություն):

Քրիստոնեական հայտնի աստվածաբան, բարեփոխումների ձեռնարկող Մարտին Լյութերը գրել է. «Ես խոստովանում են, որ չեմ կարողանա արգելել մարդուն ամուսնանալ մի քանի կանանց հետ, քանի որ դա չի հակասում Սուրբ Գրությանը...» (*Luter, Martin.* De Wette II, 459. Էջ. 329–330.):

Ինչպես արդեն ասացինք մինչ իսլամական ժամանակաշրջանի արաբները նույնպես ունեին բազմակնություն, առանց իրենց ծանրաբեռնելով որևէ էթիկական նորմերով կամ պայմաններով:

Այդպիսով Իսլամը չի հանդիսանում այդ սովորույթը ձեռնարկողը, այն միայն թույլատրեց մինչ նա գոյություն ունեցող պրակտիկան, դրանում ամուսնական միությունները ավելի կազմակերպած դարձնելով ու նրանց համար խիստ սահմաններ դնելով, ինչպիսիք են.

- **Կանանց քանակի սահմանափակումը:** Մուսուլմանը միաժամանակ չի կարող ունենալ չորս կանանցից ավելին, որի մասին վկայում են մուսուլմանական օրենքի սկզբնաղբյուրները: Ալլահն ասում է. «...ամուսնացեք այլ կանանց հետ, որոնց հավանում եք՝ երկուսի, երեքի, չորսի...» (4:3): Ինչպես նաև պատմում են, որ երբ Քայլան իբն Սալամա Աշ-Սակաֆին իսլամ ընդունեց, և նա տաս կնոջ հետ էր ամուսնացած, և մարգարեն նրան հրամայեց թողնել նրանցից միայն չորսին, իսկ մնացածի հետ՝ ամուսնալուծվել (Սահիհ իբն Հիբբան, № 2759):
- **Բոլոր կանանց հանդեպ հավասար և արդար վերաբերմունքի պարտադրանքը:** Ալլահն ասում է. «**Եթե դուք վախում եք, որ նույն կերպ արդար չեք լինի նրանց հանդեպ, ապա բավարարվեք մի կնոջով կամ հարճերով, որոնց տիրել են ձեր լնդերը: Դա ավելի մոտ է անարդարությունից (կամ աղքատությունից) խուսափելուն**» (4:3): Մարգարեն ասել է. «Ով երկու կին էր ունեցել և մեկին էր նախընտրել, մյուսին խաբելով, ապա Դատաստանի օրը

կլինի փտած կողքով» (Աբու Դաուդ, Ատ-Թիրմիդի և ուրիշներ): Այդ պայմանը, որը կարգավորում է միաժամանակ մի քանի կանանց հետ ամուսնական զույգը, վերաբերվում է մատերիալական վերաբերմունքին՝ կանանց պահելը, նրանց կացարանով ապահովելը, նվերներ տալը և այլն: Այն չի վերաբերվում զգացմունքների ոլորտին, որոնք ինչպես հայտնի է դժվար են ենթարկության առնվում: Տղամարդուն կարող է շատ դուր գալ մի կինը և որպես հետևանք ավելի շատ է ցանկանում նրա հետ ինտիմ կապ ունենալ քան մյուս կանանց հետ, սակայն դրանում նա չպետք է ոտնահարի մյուսների իրավունքները: Ալլահն ասում է. «**Դուք չեք կարողանա կանանց հետ միատեսակ արդար վարվեք (ձեր զգացմունքներում) նույնիսկ մեծ ցանկության դեպքում: Ամբողջությամբ մի ձգտեք մեկի մոտ, մյուսին ասես կախված թողնելով: Սակայն եթե դուք կշտկեք դրությունն ու աստվածավախ կլինեք, ապա քանի որ Ալլահը Ներողամիտ ու Գթասիրտ է**» (4:129): Մարգարեի կին պատմել է. «Ալլահի առաքյալը ամեն ինչ մեր միջև արդարորեն էր կիսում ասելով. «Աստված: Ես նրանց միջև արդարությամբ բաժանում եմ այն՝ ինչ իմ ունեցածի մեջ է: Մի՛ մեղադրի ինձ նրա համար՝ ինչ քո ունեցածի մեջ է, իսկ իմ՝ ոչ»» (Սահիհ իբն Հիբբան, էջ 204, № 2761: Այս խոսքի նկատմամբ գոյություն ունեն որոշ հակասություններ աստվածաբանների միջև):

- **Երկրորդ կին ունենալու հնարավորությունն ու ամուսնական համակեցության կարողությունը:** Էլեկտրիլային անգործունեությամբ տառապող տղամարդը, որը դժվարություններ ունի նորմալ սեռական հարաբերություններում, չպետք է ձգտի ամուսնանալ նաև երկրորդ անգամ, քանի որ կոտնահարվի կնոջ սեռական կարիքները հոգալու իրավունքը: Ինչպես նաև ով չի կարող ինչպես հարկն է ապահովել երկրորդ ընտանիքը չի կարող ամուսնանալ, ինչը հանդիսանում է ընդհանուր կանոնի մասնավոր դեպք, որի մասին Ալլահն ասել է. «**Թող իրենց ետ պահեն նրանք, ովքեր ամուսնանալու հնարավորություն չեն գտնում, մինչ Ալլահը հարստացնի նրանց Իր գթությունից**» (26:33):

Հիմա մենք կուզենայինք կանգ առնել ամուսնական հարաբերությունների ոլորտում որոշ պրոբլեմային դրություններին, որ տարածված են ժամանակակից հասարակությունում, որոնք ուղղակիորեն ազդում են բազմակնության թեմայի վրա:

1. **Ընտանիքում երեխա չկա, քանի որ կինը չբեր է, իսկ ամուսինը ցանկանում է ունենալ իր երեխաները, ձգտելով պահպանել իր ցեղը:** Ի՞նչն է լավ՝ ամուսինը ամուսնալուծվի կնոջ հետ և նրան միայնակ թողնի իր խնդիրների հետ, և ինքն էլ ամուսնանա այլ կնոջ հե՞տ, թե՞ ամուսնանա երկրորդ անգամ, պահպանելով ամուսնական հարաբերությունները առաջինի հետ, ընդ որում շարունակի հոգ տանել նրա մասին:

2. **Կինը տառապում է ծանր ֆիզիկական հիվանդությունից, որը խոչնդոտում է ինչպես հարկն է կատարել ամուսնական պարտականությունները, ինչն էլ ամուսնու մոտ առաջացնում է հոգեկան և ֆիզիկական ուժեղ անհարմարություն:** Ամուսինը կարող է բաժանվել նրա հետ, և ընդ որում կինը դժվար թե երբևիցէ ամուսնանա, հաշվի առնելով նրա հիվանդությունը: Նա կարող է մշտապես գնալ մարմնավաճառների մոտ, վտանգի տակն դնելով իր և տնեցիների առողջությունը: Նույնիսկ եթե նա մշտական սիրուհի ձեռք բերի, ապա դա ոչ նրան, ոչ էլ նրա կնոջը չի

բերի հարկի հանգստություն, քանի որ դա առայժմ դատապարտելի է համարվում մեր հասարակությունում չնայած հոգևոր դեգրադացիայի այն մակարդակը որին հասել է: Եվ վերջապես նա կարող է ամուսնանալ երկրորդ անգամ, և երկուսին էլ ապահովի հարկի հոգատարությամբ և ուշադրությամբ: Ուրեմն սցենարներից ո՞րն է ձեր կարծիքով ավելի մարդկային և արդար:

3. **Որոշ տղամարդիկ իրենց օրգանիզմի չափազանց ուժեղ բնական պահանջի պատճառով ունեն մեծ պահանջներ:** Ամեն կին չի կարող գոհացնել այդպիսի տղամարդու և դա տղամարդու համար դառնում է ֆիզիկական և հոգեկան չբավարարվածության պատճառ, ինչն էլ բերում է ընտանեկան անհարմարությունների և խնդրի լրացուցիչ լուծման որոնումներ: Եվ ի՞նչ եք կարծում՝ նա կփորձի իրականացնել իր սեքսուալ էներգիաները ուրիշ տեղ՝ պոռնիկների հետ, այդտեղից դուրս եկող բոլոր հետևանքներով, թե՞ ամուսնանա ևս մի կնոջ հետ, ողջամտության սահմանները չխախտելով, և ստանա լրիվ ֆիզիկական և հոգեվորական բավարարություն նրանց երկուսի հետ շփվելուց:

4. **Տղամարդկանց մահացությունները ավելի շատ են պատերազմների, զինված հակամարտությունների և այլ պատճառներով, և պատմությունում որոշ ժամանակաշրջաններ կանանց թվաքանակը զգալիորեն մեծ էր տղամարդկանց թվաքանակից:** Դրա լավ օրինակ են ծառայում առաջին և երկրորդ համաշխարհային պատերազմները, որոնք տարան պատերազմի էպիկենտրոնում հայտնված ԽՍՀՄ-ի, Գերմանիայի և Եվրոպայի որոշ այլ երկրերի տղամարդկանց մեծ մասի կյանքը: Եթե ամեն տղամարդ սահմանափակվեր մի կնոջով, ապա ի՞նչ կլիներ մյուս կանանց ճակատագիրը: Եվ ի՞նչն է ավելի լավ այդ կնոջ համար. չամուսնանալ, տառապել միայնակության բոլոր դժվարություններով կամ դառնալ մի հոգատար, արդար և ողջամիտ մարդու երկրորդ կինն ու օրինական երեխաներ ծնել, որոնք կունենան նորմալ ընտանիք:

5. **Ամեն հասարակությունում գոյություն ունի կանանց հատուկ կատեգորիա, որը բաղկացած է այրերից, ամուսնալուծվածներից, ինչպես նաև ոչ երիտասարդ կանանցից, որոնք այս կամ այն պատճառով երբեք չեն ամուսնացել:** Որպես կանոն այդպիսի կանայք սոցիալապես անպաշտպան են, գտնվում են չընդհատվող սթրեսի մեջ, կարիք ունեն ֆիզիկական և հոգեբանական օգնության: Ի՞նչն է լավ այդպիսի դրության մեջ գտնվող կնոջ համար. չամուսնանալ երբեք, թե՞ ամուսնանալ արդեն ամուսնացած տղամարդու հետ, պահպանելով յուր արժանապատվությունը, մաքրությունը և օրինական հնարավորություն ստանալ ամուսնական կյանքի և մայրության ուրախությունները ճանաչելու համար:

Ժամանակնից հասարակությունում տարածված է այն երևույթը, որում տղամարդը կապեր ունի միաժամանակ մի քանի կանանց հետ: Եթե իսլամում դա տրված է տղամարդու մի քանի կանանց հետ ամուսնությամբ, ընդ որում նա պատասխանատու է իր ամեն կնոջ և երեխայի համար, ապա ոչ իսլամական աշխարհում ունի տգեղ տեսք, երբ տղամարդն ինտիմ հարաբերություններ է ունենում միայն յուր հաճույքի համար և առանց որևէ պատասխանատվության: Ինչ-որ կերպով այդպիսի կապերի օրինականացումը բերում է շատ վատ սոցիալական հետևանքների՝ ինչպիսիք են մարմնավաճառության, վտանգավոր հիվանդությունների, մանկական պոռնոգրաֆիայի, բռնաբարության դեպքերի, անօրինական երեխաների հսկայական քանակի և այլերի տարածմանը:

Ռուսաստանում երիտասարդության խնդիրների վերաբերյալ մի գիտափորձարարական համաժողովում տրված էին հետևյալ տվյալները, որոնք սարսափեցնում են իրենց չհանդուրժողականությամբ. «ԱՄՆ-ի բնակչության մեկ քառորդից ավելին վարագված է սեռական ճանապարհվող փոխանցվող հիվանդություններով (Այս հաշվետվության տվյալները վերցված են 2004թ.-ին: Ամերիկան անվանում են երկիր, որը հաղթել է ՁԻԱՀ-ին: ԱՄՆ-ում կա աբորտի և անչափահասների հղիության մեծ քանակ: Շվեդիայում՝ ուր «սեռական դաստիարակությունը» արվում է ավելի հազվադեպ, ինքնասպանությունների ամենամեծ քանակն է: ԱՄՆ-ում «սեռական դաստիարակություն» տալուց հետո անչափահասների հղիության քանակն ավելացավ երկու անգամ, ինչ քանակով էլ վիժումները: ԱՄՆ-ում ՁԻԱՀ-ից ամեն տասնհինգ րոպե մարդ է մահանում: Մարդու իմմունոդեֆիցիտի վիրուսի քանակը անչափահասների մոտ կրկնապատկվում է ամեն 14 ամիս: Ամեն 13 վայրկյան մի անչափահաս է վարակվում որևէ վեներական հիվանդությամբ: Մանկական պոռնոբիզնես ԱՄՆ-ում ամեն տարի մտնում են 600 հազար 3-ից 18 տարեկան երեխաներ: «Սեքսուալ լուսավորության» ընկերությանը սենատորներից մեկն անվանեց «Ամերիկայի 20-րդ դարի ամենաթանկարժեք աղետ»: 1996թ.-ին ԱՄՆ-ի կնոգրեսն ընդունեց «Սոցիալական բարեփոխում», որում ասվում է. «Ամուսնությունը դա ծաղկող հասարակության հիմքն է: Հայրության և մայրության օգնությունը դա երեխաների հաջող դաստիարակության և զարգացման հիմքն է»: «Սեքսուալ լուսավորության» բյուջեթային ֆինանսավորումը դադարված էր, և 1997թ.-ից այդ երկրում սկսեց միջամտել «մինչամուսնական հարաբերությունների ողջամտություն» ծրագիրը, որի իրականացման համար ամեն տարի հատկացվում է 50 մլն. դոլլար: Ամենաքիչ աբորտներ և ոչ ամուսնական ծնելիություն ունեցող նահանգները պետությունից բավականին մեծ հավելավճարներ են ստանում» («Սվերդլովսկի տարածքի երիտասարդության բժշկասոցյալական խնդիրները» գիտափորձարարական կոնֆերանսի հաշվետվությունների հավաքածու, Ռ.Դ. առողջապահության նախարարության Ուրալյան իմմունապատալոգիայի և մաշկավեներոլոգիայի ՆԻԻ, 28 ապրիլ 2004թ.:

Ահա թե ինչ է ասում հայտնի ամերիկուհի դերասանուհի, ֆոտոմոդել և Ամերիկայի 70-ականների սեքս-սինվոլ Ռեյչլ Ուէլսը (Raquel Welch). «Մեր օրերում քչերն են կարող պահել իրենց ցանկություններն ու իրենց վրա վերցնեն յուր արարքների պատասխանատվությունը... Ես ամաչում եմ խոսել դրա մասին, սակայն ես ինքս ամուսնացած եմ եղել չորս անգամ, բայց չնայած դրան համոզված եմ, որ հենց օրինական ամուսնությունն է հանդիսանում մեր հասարակության հիմքը, պաշտպանում է մեր երեխաներին և մեզ հեռու է պահում սոցյալական անկարգությունից... Կնոջ և տղամարդու հարաբերություններում բարոյական սահմանափակումների անբավարարությունը կամ ինչպես ասում են որոշները. «սեքսուալ հեղափոխությունը» հանդիսանում է այն բանը, որում այդօր ղեկավարվում է մարդը, որն իրեն սեռական զուգընկեր է որոնում, երբ ինչպես առաջ սեռական զուգընկեր կյանքի զուգընկերն էր: Երկկողմանի պարտավորությունների բացակայությունը բերում է վստահություն չունեցող հարաբերությունների, ինչն անմիջապես բերում է ամուսնական դավաճանությունների...»: Եվ իր զրույցի ավարտին Ուէլչն ասում է. «Հավատացեք ինձ ընկերներ, եթե իմ պես կյանքով իմաստացած սեքս աստղը սկսում է կարմիր դրոշ ծածանել և զգուշացնել, որ հասարակության բարոյականության մակարդակը շատ ցածր է իջել, նշանակում է,

որ հետագայում ավելի վատ կլինի... Ճիշտն ասած, իմ սեքս սիմվոլի իմիջն է ստիպում կանգնել ու բարձրաձայն ասել. «Աղջիկներ կա՛նգ առեք: Մի՞թե չի եկել ինքներդ ձեզ բարելավելու ժամանակը: Մենք կարող ենք ավելի՛ն...» (*Kathleen Gilbert.* Aging Sex Icon Raquel Welch: Contraceptives Shattered Marriage, the 'Cornerstone of Civilization'. May 12, 2010 // LifeSiteNews.com):

Իսլամական օրենքներին համաձայն ամեն կին ունի նույն իրավունքները: Տղամարդը պարտավոր է կատարել իր ընտանիքին նյութապես և հոգեպես ապահովելու պարտականությունը: Բոլոր երեխաները օրինական են ծնված և պետք է ստանան դաստիարակություն և ապահովություն իրենց ծնողներից: Իսլամում դավաճանությունն ու ամուսնությունից դուրս կապերը արգելված են: Մարգարեն ամեն ինչ արեց, որպեսզի իր հետևորդները պաշտպանված լինեն այն բաներից, որոնք ոչ միայն վնասում են անհատին, այլ նաև հանրությանը:

«Մի պատանի եկավ Ալլահի առաքյալի մոտ ու հարցրեց. «Ով Ալլահի առաքյալ: Թույլ տուր ինձ դավաճանություն անել»: Մարդիկ սկսեցին մեղադրել նրան (անպարկեշտության համար), սակայն մարգարեն նստեց նրա մոտ ու հարցրեց. «Կուզենա՞յիր դու դա քո մոր համար»: Նա պատասխանեց. «Ոչ, երդվում եմ Ալլահով, թող Ալլահն ինձ վճար անի քո համար»: Ալլահի առաքյալն ասաց. «Նշանակում է, որ և մարդիկ դա չեն ուզում իրենց մայրերի համար», և շարունակեց. «Իսկ դու կուզենա՞յր դա քո դուստրի համար»: Նրա պատասխանը բացասական էր: Ալլահի առաքյալն ասաց. «Նշանակում է, որ և մարդիկ դա չեն ցանկանա իրենց դուստրերի համար», և շարունակեց. «Իսկ կուզեիր դա քո հորաքույրի համար»: Նրա պատասխանը բացասական էր: Ալլահի առաքյալն ասաց. «Նշանակում է, որ և մարդիկ դա չեն ցանկանա իրենց հորաքույրերի համար», և հարցրեց. «Իսկ կցանկանա՞յիր դա քո մորաքույրի համար»: «Ո՛չ», - պատասխանեց պատանին: Ալլահի առաքյալն ասաց. «Նշանակում է, որ և մարդիկ դա չեն ցանկանա իրենց հորաքույրերի համար»: Այնուհետև մարգարեն դրեց ձեռքը պատանու կրծքին ու ասաց. «Ով Ալլահ, ներիր նրա մեղքը, մաքրի նրա սիրտն ու նրան ողջամիտ արա (ուժեղացրու նրան մեղքից ձեռնպահ մնալու համար)» (Ահմադ, № 22265):

Կարելի է ասել, որ նվիրվածությունը հանդիսանում է Ղուրանում Ալլահի կողմից մեջբերված էթիկայի ոսկե կանոի իրագործումը. «Ձեզանից ոչ մեկը չի հավատում, մինչ իր եղբոր համար չցանկանա այն՝ ինչ ինքն իրեն է ցանկանում» (Ալ-Բուխարի, № 15 և Մուսլիմ, № 44):

Ընթերցողներից շատերը կարող են մտածել, թե եթե Իսլամը թույլատրում է բազմակնությունը, ապա ինչի չի թույլատրում հակառակը՝ կանայք նույնպես կարողանան ունենալ մեկից ավելի տղամարդկանց: Ըստ մեր հայեցողության գոյություն ունեն մի շարք բնական պատճառներ, որոնք ցույց են տալիս, որ այդպիսի այդ բանը կյանքունակ չէ: Օրինակի համար կարելի է ասել, որ կրոնական և քաղաքակրթական սովորույթները ազգերի մեծ մասում որպես ընտանիքի գլխավոր նշանակել են տղամարդուն, ելնելով նրա բնական տվյալներից: Եթե կինը ունենա մեկից ավելի տղամարդ, ապա ի հայտի կգա գլխավորության որոշման խնդիրը, ինչն էլ վատ եղանակ կստեղծի տանը: Ինչպես նաև, եթե կինը ծննդաբերի, ապա ինչպե՞ս

կիմանան, թե ով է երեխայի հայրը: Ի՞նչ կկատարվեր քաղաքակրթությունների գենեֆոնդի հետ, եթե մի քանի տարով ընդունեին դա: Ինչպես նաև մի մոռացեք, որ կինը կարող է հղիանալ և երեխա ծնել տարին մեկ անգամից ոչ ավելի, երբ տղամարդը այդ ընթացքում կարող է մի քանի անգամ հայր դառնալ: Եվ արդյոք կարո՞ղ է տղամարդը այդպիսի ամուսնության ընթացքում պահպանել հավատարմությունը կնոջ հանդեպ, երբ կինն էլ բացի նրանից ունի այլ ամուսնիններ: Մեզ թվում է, որ այդ բոլոր հարցերի պատասխանները պարզ են և դժվար թե կարելի է բազմակնությունը դնել բազմատղամարդության մակարդակին:

Այժմ մենք կմեջբերենք որոշ արևմտյան գիտնականների ասածները հետևյալ թեմայի վերաբերյալ:

Գուստավ լեբոնն իր «Արաբական քաղաքակրթությունը» գրքում ասում է. «Բազմակնությունը թույլ է տալիս հասարակությանը թուլացնել սոցիալական կրիզիսը, լուծել մարմնավաճառության խնդիրն ու հասարակությանն ազատել անօրինական ծննդաբերություններից» (Թերթ «Al-Azhar University». Թեմա 8, էջ 291):

Աննի Բեզանտն իր «Հնդկաստանի կրոններն ու հավատքը» գրքում գրում է. «Արդար լինելու համար պետք է խոստովանենք, որ իսլամում բազմակնությունը կնոջն ապահովում է պաշտպանվածությամբ, օգնությամբ ու հարգանքով: Բազմակնությունն ավելի լավ է, քան արևմտյան մարմնավաճառությունը, որը թույլ է տալիս տղամարդուն սիրուհի կամ ընկերուհի ունենալ յուր հաճույքների համար, առանց հոգ տանելու նրանց զգացմունքների, կարիքների և պատվի մասին» (Նույն տեղից):

Ֆրանսիական պարլամենտի նախկին անդամ Մանիբարը մի անգամ նկատել է. «Ֆրանսիայում երկուս ու կես միլիոն աղջիկ չեն կարողանա ամուսնանալ, եթե ամեն ֆրանսիացի տղամարդ մի կնոջով սահմանափակվի: Ես համոզված եմ, որ կինը չի ճանաչի լիակատար կյանքի ուրախությունները, մինչ նրա մայրանալը, և ամեն օրենք, որը դեմ է բնության օրենքներին հանդիսանում է վայրի և դեմ է արդարության ամենահասարակ նորմերին» (*Ahmad Abdul Aziz Al-Hussein.* Woman and her Position in Islam):

1959-ին ՄԱԿ-ը հատուկ հաշվետվություն հայտարարեց, որում մյուսների հետ հանդերձ նաև կար հետևյալը. «Թվերի և ստատիստիկ տվյալների վրա հիմնավորված այս հաշվետվությունը հաստատում է, որ ողջ ժամանակակից աշխարհը կանգնած է անօրինական ծնվող երեխաների մեծանող թվի խնդրի դիմաց... Այդ երեխաների քանակն ըստ տոկոսների որոշ երկրերում հասնում է մինչև 60 տոկոս: Օրինակ՝ Պանամայում՝ 75% բոլոր նորածիններից: Այլ խոսքերով այնտեղ չորս երեխաներից երեքն անօրինական են: Անօրինական ծնված երեխաների մեծամասնությունը գտնվում է Հարավային Ամերիկայում» (*Waheed-ud-Deen Khan.* Islam Challenges, Dar-Ut-Tazkeer. էջ. 168): Այդ նույն հաշվետվությունում ասվում է, որ իսլամական աշխարհում անօրինական երեխաների քանակը հավասար է զրոյի: Հաշվետվությունը կազմողները համարում են, որ իսլամական հասարակությունը

պաշտպանված է այդպիսի սոցյալական խնդիրներից, քանի որ գոյություն ունի բազմակնություն:

Ամուսնություն միայն խնամակալի համաձայնությամբ

Շատերը համարում են, որ ամուսնության համար խնամակալի համաձայնության պայմանը խանգարում է ամուսնու ինքնուրույն ընտրությանը և ոտնահարում է նրա իրավունքները և կնոջը դնում է ոչ հավասար դիրքի տղամարդկանց հետ, որը ինչպես հայտնի է, ինքն է որոշում ընդունում իր ամուսնության համար: Այս մասում մենք կփորձենք հակիրճորեն պարզեցնել պատճառի աղբյուրը, որի համաձայն իսլամն արգելել է կնոջն ամուսնանալ առանց խնամակալի համաձայնության:

Գաղտնիք չի, որ միասնական կյանքի համար համապատասխան զույգ ընտրելը հեշտ գործ չի ինչպես տղամարդու, այնպես էլ կնոջ համար, սակայն կնոջ համար ամուսնու ընտրությունը անհամեմատ ավելի դժվար ու պատասխանատու խնդիր է հանդիսանում: Իսկապես, եթե տղամարդը սխալվել է, ապա կարող է ամուսնալուծվել և առանց մեծ դժվարության ամուսնանա ուրիշ կնոջ հետ, իսկ եթե կինն է սխալվել, ապա նրա սխալի հետևանքները կլինեն ավելի վատ՝ ֆինանսական խնդիրները (*Theresa Braine.* U.N. Tackles Universal Problem for Women: Divorce. 6 Սեպտեմբերի 2009 թ. // WeNews), ընտանիք ստեղծելու սահմանափակված հնարավորությունները, երեխաների դաստիարակությունը (*Kathleen O'Connell Corcoran.* Psychological and Emotional Aspects of Divorce. 1997 թ. // Mediate.Com) և այլն:

Մեծ մասը կազմող քաղաքակրթությունների սովորույթների համաձայն կինը մարդկության թույլ սեռի ներկայացուցիչ է: Իսլամը ոչ միայն խոստովանում է այդ փաստը, այլ նաև Երաշխավորում է կնոջ իրավունքները: Կինն իր բնույթով ավելի զգացմունքային է քան տղամարդը՝ ավելի հեշտ է տրվում արտաքին աշխարհի ազդեցություններին: Տղամարդը մի խնամակալ է, որն ունի ավելի շատ հնարավորություններ իր խնամակալության ներքո գալացողի ներքուստն ու որոշել, թե արդյոք նրանք իրար համապատասխանում են, թե ոչ, ընդ որում նա պետք է խորհրդակցի բարեկամների, ընկերների և այլ դեմքերի հետ, որոնք հետխքրքրված են նրանց ճակատագրով: Խնամակալի դերն այս դեպքում կայանում է տղամարդն իսկապես համապատասխանում է կնոջը: Մարգարեի շատ խոսքեր հաստատում են խնամակալի դերի մեծությունը կնոջ կյանքի համար: Կմեջբերենք նրանցից որոշները.

«Առանց խնամակալի ամուսնություն չկա» (Աբու Դաուդ, № 2058 և Ատ-Տիրմիդի, № 110):

Այս խոսքի մյուս տարբերակում. «Չկա ամուսնություն առանց խնամակալի և ղեկավարը բոլոր խնամակալ չունեցողների խնամակալն է» (Ահմադ, № 2260 և Իբն Մաջա, № 1889):

«Եթե կինն առանց իր խնամակալի համաձայնության է ամուսնանում, ապա նրա ամուսնությունն չեղյալ է համարվում, նրա ամուսնությունն չեղյալ է համարվում, նրա ամուսնությունն չեղյալ է համարվում: Իսկ եթե նա օրինական է ամուսնանում, ապա նա իր ամուսնուց կստանա ամուսնական պարգև, քանի որ նրա մարմինը թույլատրված է դառնում այդ տղամարդու համար, իսկ եթե նրանք վիճում են (կամ եթե նրանց միջև վեճ է տեղի ունենում), ապա կառավարիչը բոլոր խնամակալ չունեցողների խնամակալն է» (Աբու Դաուդ, № 2083 և Ատ-Տիրմիդի, № 1102):

«Ամուսնությունն իրական չի լինի առանց խնամակալի և երկու օրինական խոսք ունեցող վկաների: Եթե ամուսինների միջև վեճ է տեղի ունենում, ապա ղեկավարը նրանցից խնամակալ չունեցողի խնամակալն է» (Իբն Հիբբան, № 4075):

Այդպիսով խնամակալության դերը նմանատիպ հարցերում պաշտպանում է կնոջ շահերը: Ինչպես նաև, ով ասում է, որ դա սահմանափակում է կնոջ իրավունքները, ուզում ենք հիշացնել, որ իսլամը կենսունակ, հասուն կնոջը տվել է ամուսնությունից հրաժարվելու իրավունքը, ընդ որում խնամակալը ոչ մի կերպ չի կարող ազդել նրա որոշման վրա: Դա հաստատում է մարգարեի հետևյալ խոսքը. «Չի կարելի (ամուսնալուծված կամ այրի) կնոջն ամուսնացնել առանց նրա հետ խորհրդակցելու և առանց նրա համաձայնության»: Նրան հարցրեցին. «Ով Ալլահի առաքյալ: Ինչպե՞ս կիմանանք նրա համաձայնության մասին»: Մրագարեն ասաց. «Նրա լռությունից»» (Ալ-Բուխարի, № 4843):

Եթե կնոջը ստիպեն ամուսնանալ, ապա նա իրավունք ունի դիմել իսլամական դատարան, որպեսզի չեղյալ հաստատի ամուսնությունը: Դրա վկայություն է Հանսաա բինտ Ջազզամ անունով կնոջ պատմությունը, որի հայրը նրան ամուսնացրեց, երբ նա այրի կին էր: Նա այդ մասին պատմեց մարգարեին և վերջինս էլ չեղյալ հայտարարեց ամուսնությունը (Ալ-Բուխարի № 6546):

Եթե խնամակալն առանց պատճառի ժխտում է բոլոր արժանի տղամարդկանց, ապա նրա խնամակալությունը կարող է վիճաբանվել դատարանում: Խնամակալության իրավունքը տրվում է կնոջ միայն մոտ բարեկամներին, իսկ բարեկամներ չունենալու դեպքում՝ իսլամական դատավորին: Իսկ կնոջ համար ամուսին ընտրելու վերաբերյալ, մարգարեն ասել է. «Եթե ձեր մոտ է եկել այն մարդը, որի բարոյականությունից ու հավատքի ուժից գոհ եք, ապա ամուսնացրեք (ձեր կողմից խնամակալվողին) նրա հետ, այլապես երերի վրա խավար ու մեծ անարդարություն կտարածվի»» (Ատ-Տիրմիդի, № 1085):

Եթե տղամարդն ընտանիքում ղեկավարվում է իսլամական օրենքներով, ապա նա բարոյական կլինի և կհարգի իր կնոջը:

Տղամարդը ընտանիքի գլխավոր

Տղամարդու ընտանիքում գլխավոր լինելը պահանջում է նրա մատերիալական և հոգեկան պատասխանատվությունն ընտանիքի համար, անդամների պաշտպանությունը, հոգատարությունն ու նրանց իրավունքների պաշտպանումը:

Ալլահն ասել է.

«Տղամարդիկ կանանց Կառուամուններն (պահապանները, պաշտպանները, խնամողները) են, քանի որ Ալլահը նրանցից մեկին առավելություն տվեց մյուսների հանդեպ (պահպանության և պաշտպանության կարողություն), և քանի որ նրանք ծախսում են իրենց ունեցվածքից (կանանց համար): Առաքինի կինը հնազանդ է եվ պահպանում է այն ինչ պետք է պահպանի ամուսնու բացակայության ժամանակ, Ալլահի խնամքով...»: (4:34)

Մատերիալական պատասխանատվությունը Իսլամում դրված է տղամարդու վրա, քանի որ նրա ֆիզիկական և մտավոր ունակությունները թույլատրում են այդ հանձնարարության կատարմումը:

Ինչ վերաբերվում է կնոջը, ապա նա որպես կանոն՝ տղամարդուց ֆիզիկապես թույլ է և բացի դրանից գոյություն ունեն նրա կյանքի (այստեղ հեղինակն ի նկատի ունի հղիության, ծննդաբերության և նմանատիպ կանացի ժամանակաշրջանները) որոշ պահեր, երբ նա չի կարող կարևոր որոշումներ ընդունել կամ մեծ պատասխանատվություն վերցնել իր վրա: Այդ ամենը խոչնդոտում է կնոջ ընտանիքում գլխավորը լինելուն:

Պրոֆեսոր Աբբաս Մախմուդ Ալ-Ակկադը գրել է. «Կինն ունի բավականին յուրօրինակ էություն՝ նա ավելի զգացմունքային է և երեխայի մասին չընդհատվող հոգատարությունը պահանջում է երեխային հասկանալու ունակություն, զգալ նրա զգացմունքներն ու տրամադրությունը: Դա կնոջ էությունն է: Նա ունի զգացմունքներին հետևելու բնույթ...» (Ա.Մ. Ալ-Ակկադ: Կինը սուրբ Ղուրանում):

Հիշացնենք նաև դոկտոր Ալեկսիս Կարրելի խոսքը. «Տղամարդ կնոջից տարբերվում է ոչ միայն սեռական օրգանների տարբերությամբ և ոչ միայն գիտելիքներ ընկալելու տարբեր հնարավորությունով: Այդ տարբերությունն ունի ավելի հիմական բնույթ, որը վերաբերվում մարդու ողջ օրգանիզմին: Այդ հիմնական հաշվառման ժխտումը ֆեմինիստներին բերեց սխալ մտքերի պրոպագանդայի, որոնք հիմնավորված էին կնոջ և տղամարդու նույն իրավունքներ ու պարտականություններ ունենալու հավատին: Իրականում կինը լիովին տարբերվում է հակառակ սեռի ներկայացուցիչներից: Ամեն բջիջ իր մեջ ունի իր սեռական պատկանելիության դաջվածքը: Դա չի վերաբերվում միայն նրանց ֆիզիկական բնույթին, վերաբերվում է նաև ներվային համակարգին: Մարդու կենսակերպի օրենքները չեն կարող փոփոխության ենթարկվել: Եվ մենք պետք է ընդունենք դա ինչպես կա... Կինը պետք է զարգացնի իր կարողությունները հաշվի առնելով իր հոգեկան և ֆիզիկական հատկությունները, ընդ որում անհտաժեշտ է հրաժարվել տղամարդուն նմանվելու չմտածված ձգտումից» (Dr. Alexis Carrel. Man and the Unknown. 1949:91.):

Կնոջ վկայությունը

Ալլահն ասել է.

«**Ձեր շարքերից երկու տղամարդ կանչեք որպես վկա (որոնք չափահաս են և գիտեք, որ նրանք արդարամիտ են ու խելամիտ): Եթե երկու տղամարդ չլինի, ապա մի տղամարդու և երկու կանանց որոնց դուք համաձայն եք վկա ընդունել (այսինքն գիտեք, որ նրանք արդարամիտ են ու խելամիտ), եթե նրանցից մեկը սխալվի, ապա մյուսը կհիշացնի նրան**» (2:282):

Այս սուրբ այաթում ամենազորը նշեց, որ քաղաքա-իրավական գործառույթներում անհրաժեշտ են վկաներ՝ երկու տղամարդ: Նրանց բացակայության դեպքում մի տղամարդ և երկու կին: Բացի դրանից Ամենազորը պարզեցրել է, թե ինչու են անհրաժեշտ երկուսի վկայությունները:

Կինն ու ժառանգությունը

Իսլամի ի հայտ գալով կինը ստացավ ժառանգելու իրավունքը, որից զրկված էր մինչ այդ, քանի որ դա լիովին տղամարդկանց էր վերաբերվում, նրանց ներքին և արտաքին թշնամիներից պաշտպանելու համար: Բացի դրանից կինն ինքն էր ժառանգության առարկա, ինչպես ասվում է հետևյալ այաթում.

«**Ով դու՛ք, որ հավատում եք: Ձեզ թույլատրված չի ժառանգեք կանանց, առանց նրանց կամքի: Մի ստեղծեք դժվարություններ կանանց համար, որ խլեք նրանց համար վճարվածից չափաբաժին, եթե իհարկե նրանք Ֆացիսա (անօրինական սեռական կապ) (այս դեպքում թույլատրվում է ետ վերցնել այդ վճարը) չեն գործել: Լավագույն կերպով ապրեք նրանց հետ: Եթե ատում եք նրանց, ապա ասես ատում եք մի բան, որի միջոցով Ալլահը շատ բարիքներ է ընծայում**» (4:19):

Ղուրանի բացատրական գրքերից մեկում հայտնի որպես «Իբն Աբբասի Ղուրանի մեկնաբանություն»-ում ասվում է. «Մինչ իսլամական ժամանակաշրջանում տղամարդն իր մահացած հոր կնոջը ժառանգում էր ինչպես մյուս իրերը: Որպես կանոն կինն անցնում էր մահացածի ավագ որդու ենթակայության տակ: Եթե այրին հաճելի տեսք ուներ և հարուստ էր, ապա նրա հանգուցյալ ամուսնու ավագ որդին ամուսնանում էր նրա հետ, ընդ որում նրան պարգև չէր տալիս: Եթե նա աղքատ էր, երիտասարդ չէր կամ չուներ հաճելի տեսք, ապա նա չեր ամուսնանում և մնում էր տանն այնքան ժամանակ մինչև վճարեր իր ազատության գինը» (Tanwîr al-Miqbâs min Tafsîr Ibn ‘Abbâs.): Իսլամն արգելեց այս ամենն ու արժանի օրենքներ ներկայացրեց կանանց համար. «**Արժանապատվորեն ապրեք նրանց հետ, և նույնիսկ եթե նրանք տհաճ են ձեր**

համար, քանի որ ձեզ կարող է տհաճ լինել այն՝ ինչում Ալլահը շատ բարիք է ներդրել» (4:19): Բացի դրանից այն կնոջը տվեց ժառանգության հստակ իրավունք.

«Տղամարդկանց է պատկանում մի մաս նրա ծնողների ու մոտ բարեկամների թողածից, և կանանց էլ է պատկանում մի մաս նրա ծնողների ու մոտ բարեկամների թողածից, լինի այն շատ, թե քիչ՝ մի օրինական պարտադիր բաժին» (4:7):

Երեխաների միջև ժառանգությունը բաժանելու վերաբերյալ Ալլահն ասել է. «Ալլահը ձեր երեխաների վերաբերյալ ձեզ պատվիրում է. որդուն հասնում է մի բաժին, որը հավասար է երկու դուստրերի բաժնին (միասին)» (4:11):

Բացի դրանից իսլամական իրավունքն ունի երեխաների միջև ժառանգությունը բախշելու այլ երեք սցենարներ, որտեղ սցենարի ընտրությունը կախված է իրավիճակից և դեպքերից, որ նշված են իսլամական օրենքում.

- Կինը ստանում է տղամարդու ժառանգությանը հավասար ժառանգություն:
- Կինը ստանում է ժառանգություն, որն ավելի շատ է տղամարդու ժառանգությունից:
- Էրիվ ժառանգությունը ստանում է կինը:

Հիմա ձեզ կբացատրենք, թե ինչպես է իսլամում տրվում ժառանգություն մի օրինակով, երբ մի մահացած մարդ իր ետևից մի որդի և մի դուստր է թողել: Ենթադրենք, որ ժառանգության արժեքն է երեք հազար դոլար: Այդ ժամանակ իսլամական օրենքին համաձայն, որդին ստանում է երկու հազարը, իսկ դուստրը՝ մեկը: Ժամանակի ընթացքում տղամարդու ունեցվածքը կքչանա, քանի որ նա պարտավոր է հոգ տանել իր քրոջ մասին, հնարավոր է նաև ամուսնանա և պետք է մահր վճարի իր կնոջը, իսկ այնուհետև ապահովի ամեն ինչով: Այս ամենով հանդերձ կնոջ չափաբաժինը չի քչանա: Իսլամական օրենքներին համաձայն նա պարտավոր չի իր գոյության համար որևէ մատերիալական ծախսեր անել, չլինելով հայրական տանը, երբ նա ստանում է ամեն անհրաժեշտը հորից, եղբայրներից կամ այլ արական սեռի բարեկամներից ելնելով հանգամանքներից, ամուսնացած չլինելով, երբ նրան ապահովելու խնդիրը դրված է ամուսնու ուսերին: Օբյեկտիվորեն մտածող ընթերցողը, հուսում ենք, կհամաձայնվի, որ ժառանգության չափաբաժինը, որը տրվում է կնոջը, արդար ու առատաձեռն է, քանի որ այն լավագույն կերպով համապատասխանում է իրավունքների և պատրականությունների չափերին: Չնայած դրան լինում են բավականին Իսլամի բաժանորդներ, որոնք հայտարարում են, որ այս կրոնը ոտնահարում է կանանց իրավունքները, տղամարդուն ժառանգության ավելի մեծ չափաբաժին տալով: Սակայն, արդյո՞ք ոտնահարվում են նրանց իրավունքները այստեղ: Միջազգային իրավունքների ստանդարտներին համապատասխան ոտնահարման մասեր են համարվում. «Իրավունքների այլայլումը, չթույլատրվող նշանները, որոնցով արվում է ոտնահարումը, այրպիսի վերաբերմունքի օբյեկտիվ ու խելամիտ հիմքերի բացակայությունը» (Տարբերությունները հաղթահարելով: Խտրականության դեմ պայքանի հայեցակարգը Եվրոպայում: Միջազգային ներում, Amnesty International Publications, 2009. էջ. 14): Ելնելով վերն ասվածից, մի՞թե

կարելի է հաստատել, որ Իսլամում դրված կնոջ ժառանգության չափաբաժնի չափը չունի «խելամիտ ու օբյեկտիվ հիմնավորում»: Ավելին, մենք համոզված ենք, որ հակառակ դեպքում դա կլինի տղամարդու հանդեպ խտրականություն, քանի որ «լինում են հանգամանքներ, երբ հավասար վերաբերմունքը կամ տվյալ իրավիճակում տարբերությունները չընդունելու ունակությունը կարող է բերել լրիվ խտրականության ու անհավասարության» (Տարբերությունները հաղթահարելով: Խտրականության դեմ պայքանի հայեցակարգը Եվրոպայում: Միջազգային ներում, Amnesty International Publications, 2009. էջ. 14):

Հարկավոր է հիշել նաև, որ Իսլամում ոչ ոք չի կարող մուսուլմանին կամ մուսուլամանուհուն զրկել ժառանգության իրավունքից, բացի բացառվող դեպքերում, որոնք նշված են իսլամական օրենքներում, և ժառանգություն թողողը չի կարող կտակել իր ունեցվածքի մեկ երրորդ մասից ավելին իր ոչ իր անմիջական հետնորդներին: Ամր իբն Սադ իբն աբի Վակկասը փոխանցեց իր հոր հետևյալ խոսքը, թող Ալլահը գոհ լինի նրանց երկուսից էլ. «Երբ Ալլահի առաքյալն այցելեց ինձ իմ հրաժեշտի հաջի տարվա իմ հիվանդանալու ժամանակ, ես նրան ասացի. «(Հիմա) ես լուրջ հիվանդացել եմ, և (այդ պահին) ես արդեն հսկայական հարստություն էի ցեռք բերել, իսկ դուստրիցս բացի հետնորդներ չունեի: Կարո՞ղ եմ զոհաբերել բարեգործական նպատակներով իմ հարստության երկու երրորդ մասը»: Մարգարեն պատասխանեց. «Ոչ»: Ես հարցրեցի. «Իսկ կե՞սը»: Նա պատասխանեց. «Ոչ»: Հետո նա ավելացրեց. «(Զոհաբերի ունեցվածքի) մեկ երրորդ մասը, սակայն դա էլ է շատ: Ավելի լավ է հետնորդներին հարուստ թողել, քան աղքատ՝ ողորմություն խնդրող: Ալլահի համար ինչ էլ զոհաբերես փոխարենը պարգև կստանաս, նույնիսկ եթե դա լինի ուտելիքի պատառ, որը կդնես կնոջդ բերանը» (Ալ-Բուխարի, № 1233):

Գուստավ Լեբոնը իր «Արաբական քաղաքակրթությունը» գրքում ասում է.

«Ղուրանում որոշված ժառանգության սկզբունքներ արդարության կերպարանք են հանդիսանում: Ղուրանը կարդացող մարդը կհասկանա դա, եթե հասկանա ժառանգության մասին այաթների իմաստները: Հետևաբար պետք է նշել այնտեղ եղած իրավադրության վերին մակարդակի ազդեցությունը: Ժառանգության վերաբերյալ բրիտանական, ֆրանսիական և իսլամական օրենքները համեմատելով, եկա եզրակացության, որ իսլամը կնոջը տալիս է այնպիսի իրավունքներ, որոնց չի տալիս մեր օրենքը: Չնայած այդ ամենին արևմուտքի բնակիչը շարունակում է հավատալ, որ մուսուլմանները վատ են վերաբերվում կանանց հետ»:

Անկանխամտածված սպանության փոխհատուցում

Իսլամում կանխամտածված սպանության համար պատժվում են նույն պատիժով ինչպես կանայք այնպես էլ տղամարդիկ, անկախ սպանվածի սեռական

պատկանելիությունից: Իսկ ինչ վերաբերվում է անկանխամտածված սպանությանը, ապա սպանված կնոջ դիմաց փոխհատուցումը հավասար է սպանված տղամարդու դիմաց փոխհատուցման կեսին: Աստվածաբանների կարծիքով դա կապված է սպանվածի ընտանիքի վնաս պատճառելու չափին: Հայր կորցրած ընտանիքը զրկվեց իր խնամակալից, որը պահում էր նրանց, ապահովելով ամեն պետքականը, և այդպիսով այդ ընտանիքը կրում է ոչ միայն կամային վնաս, այլ նաև նյութական: Մորից զրկված ընտանիքին հասցված վնասը մեծամասամբ կամային է հանդիսանում քան նյութական, քանի որ ընտանիքի անդամները զրկվում են այն ջերմությունից, մասնակցությունից, փաղաքշանքից ու հոգատարությունից որը չի կարող փոխհատուցվել նյութապես: Անկանխամտածված սպանության համար փոխհատուցումը չի հանդիսանում վնասի չափի իրական պատկերումը, քանի որ հավատացյալի կյանքն անգին է, և կամային վնասը՝ չփոխհատուցվող: Այն միայն նախատեսված է ունեցվածքային կորուստները որևէ չափով սահմանափակելու համար:

Կինն ու աշխատանքը

Ալլահն իր իմաստությամբ արարեց կնոջն ու տղամարդուն: Նա ամրացրեց նրանց սրտերը սիրով ու գթասրտությամբ, միասին ապրելու կարողություն տվեց և նվիրեց այնպիսի ֆիզիկական և հոգեկան կարողություններ, որոնք նրանցից յուր ոքին թույլ են տալիս ամենաազդեցիկ կերպով կատարել իր հանձնարարությունն այս կյանքում: Օրինակ՝ տղամարդը տիրապետում է ուժ և դիմացկունություն, և նրա հիմնական խնդիրն է լինել ընտանիքը սնողը: Կնոջ հոգեկան հնարավորությունները լավագույն կերպով հնարավոր են դարձնում նրա խնդրի կատարումը՝ ընտանեկան օջախի ստեղծումը, երեխայի ծնունդն ու դաստիարակությունը, ամուսնու մասին հոգատարությունը:

Իսլամը չի արգելում կնոջն աշխատել, այլ ընդամենը դնում է որոշ սահմանափակումներ աշխատանքի նկատմամբ, որոնք նախատեսված են պահպանել նրա անվտանգությունը, պատիվն ու հարգանքը: Որոշ արևմտյան պատմաբաններ հաստատում են կանանց ակտիվ մասնակցությունը տնտեսական գործունեության մեջ միացյալ մուսուլմանական պետության գոյության ժամանակաշրջանում (*Shatzmiller, Maya.* Labour in the Medieval Islamic World, Brill Publishers): Կինը կարող է ազատորեն տիրապետել իր անձնական ունեցվածքը առանց ամուսնու կամ խնամակալի համաձայնության, ընդ որում իր ծախսերի նպատակները պետք է լինեն իսլամի կողմից թույլատրվող:

Հիմա մենք կասենք հիմնական նորմերն ու դրվածքները, որոնցից պետք է ձեռնպահ մնա կինը իր աշխատանքի մեջ.

1. Աշխատանքը չպետք է խոչընդոտի կնոջ ամուսնու նկատմամբ եղած պարտականությունների հարկի կերպով կատարմանը և վատ ազդեցություն ունենա կնոջ տնային գործերի կատարման որակի վրա:

2. Կինը պետք է աշխատի կանացի թիմում, որտեղ պետք է բացառվի նրա առանձնացումը օտար տղամարդու հետ: Եթե կանացի թիմում աշխատանքը չի բացառում տղամարդու հետ շփում, ապա նա պատրավոր է կրել մուսուլմանական սովորույթներին համաձայն հագուստ՝ հիջեբ: Ալլահի առաքյալն ասել է. «Եթե ձեզանից մեկը մնացել է օտար կնոջ հետ առանձին, ապա սատանան անմիջապես երրորդը կլինի» (Իբն Հիբբան, № 7254): Տասնիններորդ դարի անգլիացի հայտնի բանաստեղծ ու վիպասան Էլիզա Կուկը՝ կանանց սեքսուալ ազատության ու քաղաքացիական իրավունքների շարժման հայտնի գործիչը, գրել է. «Տղամարդկանց համար դուրեկան և նախապատվական է գտնվել կանանց հասարակությունում: Դա մեծ գայթակղություն է կնոջ համար, քանի որ (տղամարդու հետ միաձուլվելը) դեմ է կնոջ բնավորությանը... Ինչքան լայն տարածվի միաձուլման պրակտիկայի ուսուցանումը, այնքան շատ կլինի անօրինական ծնունդների դեպքերը: (Վերջին հաշվով), դա կբերի ողբերգական հետևանքների...» (*Cook, Eliza.* Сборник статей «New Echoes». 1864 թ.): Այդ մտքերն արտահայտված էին սեքսուալ հեղափոխությունից հարյուր տարի առաջ, և ինչքան ստույգ էր այդ ասածը: Պատրիկ Ջ. Բյուկենենն (ամերիկացի հայտնի քաղաքագետ ու հրապարակախոս, նախագահ Ռ.Նիկսոնի օգնական ու ռեֆեռանտ, նախագահ Ջ. Ֆորդի խորհրդական, նախագահ Ռ.Ռեյգանի ադմինիստրացիայի հասարակության հետ կապերի բաժնի պետ, 1992, 1996, 2000թ. Ա.Մ.Ն. նախագահի թեկնածու) իր «Արևմուտքի մահը» գրքում ասում է. «Սեքսուալ հեղափոխությունը խժռում է մեր երեխաներին: Տարածման վիճակագրությունը գրառելով ծնելիության անկումը, ոչ լրիվ ընտանիքները, անչափահասների ինքնասպանությունները, դպրոցների հանցավորացումը, թմրամոլությունը, պեդոֆիլիան, բռիությունը ամուսնության մեջ, ծանր հանցագործությունները, քաղցկեղով հիվանդանալը, ոչ ամուսնական համատեղ ապրելն ու կրթության մակարդակի անկումը ցույց են տալիս, թե քաղաքակրթական հեղափոխությունով խոցված հասարակությունում ինչքան խորն է ճգնաժամը: Երեխաների դատարկ սենյակները մեր տներում և լի հոգեբուժարանները վկայում են այն մասին, որ մեր մոտ մեղմ ասած ամեն ինչ նորմալ չի: Եվ այդ վարակը տարածվելով, գերեզման է քաշում մեր քաղաքակրթությունը» (Բյուկենեն Պ.Ջ. Արևմուտքի մահը: Մ. Ա. 2003):

3. Կնոջ աշխատանքի պետք է թույլատրվելի լինի իսլամի կողմից և համապատասխանի նրա բնույթին: Նրան չի թույլատրվում անել մի աշխատանք, որն իր էությամբ հանդիսանում է տղամարդկային, քանի որ իսլամում գոյություն ունի մասնագիտությունների հատուկ բախշում կանանց և տղամարդկանց միջև:

Ռուսաստանի բնագիտության ակադեմիայի պրոֆեսոր, հին կրոնների տեսքերի էվոլուցիայի և գենետիկայի խնդիրների հայտնի հետազոտող Օ.Վ. Գորշունովան գրել է. «Մուսուլմանական աշխարհի երկրերի մեծամասնությունում տեղ ունի այսպես կոչված աշխատանքների բախշումը սեռերի միջև, որը ավելի ցածր մակարդակում է գտնվում տղամարդկանց զբաղվածության և կրթության նկատմամբ: Այդ երևույթի պատճառը ոչ անմիջականորեն պայմանավորված է իսլամական կրոնի կողմից գրված պահվածքի մոդելով: Օրինակ՝ մուսուլմանական ընտանիքները նկարագրող բազմազավակությունը, որը անմիջական կապ ունի

հղիությունը խախտելու արգելման հետ, հանդիսանում է մեծ արգելք կնոջ համար կարիերայի շարունակման մեջ: Բազմազավակ ընտանիքը, որը մուսուլմանների մոտ որպես էտալոն է, նաև կանանց մոտ մի ձգտում է, որի համաձայն էլ կառուցում են իրենց կյանքը, և մասնագիտություններ են ընտրում, հաշվի առնելով, որ հիմնական ուժերը տրվելու են ընտանիքին, այլ ոչ թե կարիերային ու աշխատանքին» (Գորուշովա Օ.Վ. աշխատանքն ու ժամանցը ժամանակակից ուզբեկ կնոջ մոտ//Ռասաներ ու ազգեր: Գիտություն, 2001. Է. 209-223.):

Իսկ արևմտյան աշխարհը, որը գնաց «այլ ճանապարհով», կնոջը տալով լիովին ազատություն և իրավահավասարություն տղամարդու հետ, սկսում է հավաքել իր «քաղաքակրթական քաղաքականության» պտուղները: Ավելի քան հարյուր տարի առաջ Սամուիլ Սմայլսը՝ շոտլանդացի հայտնի հրապարակախոս և բարեփոխողը, անգլիական ռենեսանսի գլխավորներից մեկը, գրել է. «Համակարգը, որը կնոջը ստիպեց աշխատել ֆաբրիկաներում և այլ արտադրություններում... քանդեց ընտանիքի իստիտուտը: Այն փաստորեն ձեռնոց նետեց ընտանեկան օջախին և քանդեց նրա հիմքերը: Նաև խզման բերեց բոլոր սոցիալական կապերը: Առանձնացնելով կնոջն իր ամուսնուց, երեխաներին զրկելով մայրական հոգատարությունից ու սիրուց, այդ համակարգը կնոջը բերեց հոգևոր դեգեներադացման: Կնոջ հիմնական աշխատանքն ու կոչումը դա բարոյապես ու ֆիզիկապես առողջ հետնորդների դաստիարակությունն է: Նրա հիմնական պարտականությունը դա ընտանեկան ու տնային գործերն են: Սակայն ֆաբրիկաներում աշխատելը, ինչպես ես արդեն նշեցի, հեռացրեց կնոջն իր հիմնական պարտականությունները կատարելուց, ինչը փոխեց ընտանիքի ներքին կյանքը: Որպես կանոն, երեխաները մենակով չէին ստանում հարկի դաստիարակություն: Ամուսինների միջև գոյության զգացումը աստիճանաբար մարեց: Ամուսնու հետ նույն ֆաբրիկայում գտնվելով, անելով նույն գործը, ինչ որ անում է տղամարդը, կինը կորցնում էր այն տեսքը, որը մի ժամանակ ամուսնուն հիացնում էր: Կինն ընկավ այնպիսի արմատ փոխող ազդեցության տակ, որ փոխեց իր դրույթները, մտածելակերպը և այն հիմքերը որոնց վրա դրված էին նրա նախկին արժեքները» (Մուստաֆա Ալ-Գալյանի: Գիրք հիջեբի մասին: Էջ 94-95):

Ոչ մի քայլ առանց տղամարդու՞

Իսլամում կինը մի թանկարժեք զարթ է, որը թաքցված է օտար աչքերից սահմանված խիստ սոցիալական նորմերով: Այդ առաջին հայացքից չարդարացված խստությունը թույլ սեռի նկատմամբ, իրականում հանդիսանում է հայտնի կանոնի կատարումը՝ հիվանդության կանխազերծումը բուժումից լավ է: Դրան էլ վերաբերվում է իսլամական օրենքի պահանջը, որն արգելում է կնոջը ճամփորդել առանց մահրամի՝ ամուսնու, հոր, եղբոր, չափահաս որդու կամ այլ բարեկամի հետ, որի հետ նա իսլամական օրենքին համաձայնն երբեք չի կարող ամուսնանալ: Մարգարեն ասել է. «Կնոջը չի թույլատրվում մեկնել առանց մահրամի և նրա բացակայության ժամանակ հանդիպել օտար տղամարդու հետ»:

Այդ ժամանակ մի տղամարդ նրան հարցրեց. «Ով Ալլահի առաքյալ: Ես ուզում եմ մասնակցեմ արշավանքում, իսկ իմ կինը ցանկանում է (այդ ժամանակ) հաջ կատարել: (Ի՞նչ անեմ)»: Մարգարեն ասաց. «Ուղեկցի՛ր նրան» (Ալ-Բուխարի, № 1763):

Հնարավոր է, որ որոշներին դա կնոջ ազատության սահմանափակում և իրավունքների ոտնահարում թվա, սակայն արդյոք այդպե՞ս է դա իրականում: Ճամփորդությունը որպես կանոն նույնիսկ տղամարդուն է շատ դժվարություններ ու անհանգստություններ պատճառում, իսկ կնոջը՝ ավելի շատ, քանի որ նա իր բնույթով ավելի թույլ է տղամարդուց և ենթարկվում է բիոլոգիական փոփոխությունների, որոնք կատարվում են անընդհատ և ուժասպառ են անում նրան ֆիզիկապես և հոգեպես. հղիությունը, կրծքով կերակրելը և այլերը: Կինը նաև հակված է զգացմունքների կողմից ղեկավարվելուն, հեշտությամբ տրվում է շրջապատի ազդեցությանը, ինչը չնայած որ անհանգստություն չի հանդիսանում, այն ու ամենայնիվ ճամփորդությունը դարձնում է ծայրահեղ վտանգավոր ու տաժանակիր: Ալլահի առաքյալը կանանց անվանել է «հաղճապակյա տարաններ», ի նկատի ունենալով նրանց քնքուշ և նուրբ բնույթը, և հրամայում էր ճամփորդության ժամանակ նրանց շատ լավ վերաբերվել: Մի անգամ մարգարեն ճամփորդում էր ուղտերի քարավանով որոնց վրա կային նաև կանայք: Կառապանը մի երիտասարդ էր, որը երբեմն անհամբերորեն արագացնում էր ընթացքը: Մարգարեն նրան զգուշացրեց. «Մի շտապիր, ով Անջաշա, չէ որ հաղճապակյա տարաններ ես տանում» (Ալ,Բուխարի, № 5857):

Ուղեկցող տղամարդ ունենալու պահանջը հայտնի է նաև այլ քաղաքակրթությունների համար: Սակայն միայն իսլամն է ուղեկցողի վրա խիստ պայմաններ դրել, որը բացառում է ուղեկցողի վտանգավոր լինելը կնոջ համար: Իսլամը ստիպեց մահրամին կատարել ամեն անհրաժեշտը, որի կարիքն ունի կինը ճամփորդության ժամանակ: Այսպիսով ի՞նչն է այստեղ ստորացուցիչ կնոջ համար:

Ամուսնալուծությունը տղամարդու արտոնությունն է

Մինչ իսլամական ժամանակ ամուսնալուծությունը տղամարդու զենքն էր կնոջ հետ հարաբերություններում: Եթե նա զայրանում էր նրա վրա, ապա կարող էր ամուսնալուծվել և ուղարկել այնտեղ՝ որտեղից բերել էր: Գոյություն չունեին օրենքներ կամ կանոններ, որոնք կարգավորում էին այդ ասպարեզը: Իսլամի գալուստով այդ դրության վերջը եկավ:

Ալլահն ասել է.

«Ամուսնությունը տրվում է երկու անգամ, որից հետո պետք է կամ պահել կնոջը ողջամիտ պայմաններում, կամ էլ թողնել նրան լավ ճանապարհով» (2:229):

Չնայած թույլատրվածությանը, ամուսնալուծությունը իսլամում չի հանդիսանում ամուսինների միջև եղած անհաղթահարելի խնդիրների լուծման լավ եղանակ: Հասկանալով ընտանիքը պահպանելու ամբողջ կարևորությունը, իսլամը ներդրել է որոշ օրինական մեխանիզմներ, որոնք նախատեսված են ամուսինների միջև խնդիրներին լուծում տալու համար: Այդպես, օրինակի համար ամուսնալուծության գործընթացը անհրաժեշտ է համարում որոշ ամուսնալուծական ժամանակաշրջան և ունի եռափուլանի ամուսնալուծության հնարավորություն, որում միայն երրորդ փուլն է վերջնական հանդիսանում: Պետք է նշել, որ իսլամում լինում են դեպքեր, երբ ամուսնալուծությունը պարտադիր է լինում կամ հակառակը՝ արգելված: Այդ ամենը մանրամասնորեն գրված է իսլամական օրենքների գրքում: Ալլահն ասում է. «**Եթե կինը վախենում է, որ ամուսինը կցուցադրի անմտերմություն կամ կշրջվի նրանից, ապա երկուսն էլ մեղավոր չեն լինի, եթե նրանք հաստատեն խաղաղություն միմյանց միջև, քանզի խաղաղ լուծումը գերադասելի է**»: (4:128)

Ալլահն ասում է. «**Եթե վախենում եք (ով ամուսինների բարեկամներ), նրանց բաժանումից ու տարաձայնությունից, ապա երկու (արդար) դատավորներ նշանակեք, մեկը՝ տղամարդու ընտանիքից, իսկ մյուսը՝ կնոջ: Եթե երկուսն էլ ցանկանում են վերականգնել (լավ ճանապարհով), ապա Ալլահը նրանց կաջակցի: Ճշմարիտ, Ալլահը Ալիմ (ամենագետ) ու Խաբիր (անսահմանափակ գիտակցության տեր) է**» (4:35):

Ամուսնությունը պահպանելու ավելի բնական ու տրամաբանական ճանապարհներից է ամուսնալուծվելու իրավունքը տալ տղամարդուն, քանի որ մենք չենք ապահովում նյութապես նրա կնոջն ու երեխաներին, այլ ինքը: Որպես կանոն տղամարդը ավելի դատողական է և քիչ զգացմունքային, և այդ պատճառով ամուսնալուծությունը հայտարարելուց առաջ նա կգնահատի այդ քայլի դրական և բացասական կողմերը ու հաշվի կառնի հետևանքները, ընդ որում նա պարտավոր է լավ հասկանալ, որ ամուսնալուծության հետևանքները ոչ միայն նյութական կորուստներ են, այլ նաև հոգեբանական:

Հաշվի առնելով մարդկային հարաբերությունների ամբողջ բարդությունը, իսլամը թույլ ամուսնալուծվելու իրավունք է տալիս նաև կնոջը, եթե դա նախատեսված է նրանց ամուսնական համաձայնության մեջ: Բացի դրանից կինը կարող է ամուսնալուծվել մուսուլմանական դատարանի որոք, եթե նրա ամուսինը անցնում է թույլատրվածների սահմանները: Հիշացնենք նաև որոշ այլ դեպքեր, երբ կնոջ դիմումով դատարանը կարող է հարցին լուծում տալ ի օգուտ կնոջը.

1. Ամուսինն ունի չդադարող այնպիսի հիվանդություն, որը խոչնդոտում է կանոնավոր ամուսնական համակեցությանը:
2. Ամուսինը անհիմնորեն հրաժարվում է ամուսնական համակեցությունից և չի կատարում կնոջ նկատմամբ իր պարտականությունները:
3. Ամուսինը ծանր հիվանդ է, մի հիվանդությամբ, որը փոխանցվում է սեռական ճանապարհով կամ այլ հիվանդություններով, որոնք կարող են վնասել կնոջ առողջությունը:

Կնոջ դիմումով եղած ամուսնալուծության ժամանակ տղամարդը կարող է ետ վերցնել ամուսնության ժամանակ իր կատարած ծախսերը:

Պատվի սպանություն

Human Rights Watch իրավապաշտպանական կազմակերպությունը պատվի սպանություն է համարում որոշ դեպքեր. «Պատվի սպանությունը դա բռնության գործեր են՝ հիմնականում սպանություններ, ընտանիքի արական սեռի անդամների կողմից կատարվող, որոնք իրենց կարծիքով ընտանիքը խայտառակել են»: Տվյալ արյունոտ գործը տարածվեց այնպիսի հասարակություններում ուր ազգային և ցեղական սովորույթները գերակշռում են իսլամի նկատմամբ: Չնայած իսլամի ծայրահեղ ժխտական վերաբերմունքին պատվի սպանությունների նկատմամբ, ԶԼՄ-ների շատ անազնիվ ներկայացուցիչներ ու հրապարակախոսներ շարունակում են համառորեն այդ գործերը կապել մուսուլմանների կրոնի հետ, ինչքան էլ որ իսլամի դիրքը տվյալ գործերի նկատմամբ պարզ է: Սկսենք նրանից, որ իսլամական օրենքի համաձայն հասարակ մարդը իրավունք չունի ինքնուրույնորեն վճիռ կայացնել այդպիսի դեպքերում և կատարել վճիռը: Չի կարելի հիմնավորվել անպատվության չստուգված մեղադրանքներին, քանի որ իսլամում վկաների ցուցմունքների կանոնները շատ խիստ են: Եթե դատարանը գործը կանխամտածված սպանություն ճանաչի բոլոր դրությունները նայելով ու հաստատող ցուցմունքներ ստանալով՝ իսլամական օրենքի համաձայն, ապա մեղավորը կրում է համապատասխան պատիժը: Սպանությունների, դավաճանությունների, անբարոյականության և այլ հանցագործությունների համար խիստ պատժող իսլամական օրենքներով ապրող, հասարակությունը զրկված է արևմտյան գիտնականների կողմից խոստովանվող պատվի սպանության պես սոցիալական երևույթներից: Հարվարդի համալսարանի իրավունքի դասախոս Ն. Ֆելդմանը «Նյու Յորք Թայմս» շաբաթաթերթի իր հոդվածներից մեկում հայտարարել է. «Իսլամը դատապարտում է պատվի սպանությունը, որը մինչ այժմ էլ հանդիպում է Մերձավոր Արևելքի որոշ երկրներում» (*Feldman, Noah.* Why Shariah? New York Times, 2008.03.16):

Խփե՞լ թե՞ չխփել

Ալլահն ասել է. **«Իսկ այն կանանց, որոնց անենթարկությունից վախենում եք, հայտնեք, հեռու մնացեք ամուսնական կացարանում լինելուց և փոքր-ինչ խփեք: Եթե նրանք ենթարկվեն ձեզ, ապա նրանց դեմ տանող ճանապարհ մի որոնեք: Ճշմարիտ, Ալլահը Մեծ ու Վեհընպարծ է»** (4:34):

Իսլամն արգելեց կանանց ծեծի ենթարկել: Մարգարեն ասել է. «**Ձեզանից ոչ ոք չպետք է ծեծի կնոջը, ինչպես ծեծում են ստրուկին, իսկ հետո՝ օրվա վերջին, նրա հետ ինտիմ կապ ունենում**» (Ալ-Բուխարի, № 4908):

Մարգարեի կին Աիշան պատմում էր, որ նա երբեք ձեռք չէր բարձրացնում իր կանանց ու նրանց աղախիններին (Ալ-Բուխարի № 2328):

Չնայած խիստ արգելումին, իսլամը թույլատրում է որոշ դեպքերում մեղավոր կնոջ հանդեպ ֆիզիկական ազդեցության օգտագործումը որպես ծայրահեղ դաստիարակչական միջոցառում:

Վերում ասված այաթը որոշում է չենթարկվող և ամուսնու իրավունքները ոտնահարող կնոջ դաստիարակման մեթոդը: Համաձայն այաթին կնոջ դաստիարակումը կատարվում է երեք փուլերով.

Առաջին փուլ՝ խորհուրդներ, նախազգուշացումներ Ամենակարողի պատժի մասին, հիշացնելով տղամարդու իրավունքների մասին, նրան լսելու պարտադրանքի մասին: Այդ փուլում օգտագործվում են մեղմ խոսքեր ու բացատրություններ:

Երկրորդ փուլ՝ հրաժարվել ամուսնական համակեցությունից, նույնիսկ եթե ամուսինները շարունակում են մեկ տեղ քնել, ինչպես նաև չշփվել: Այդ փուլը պարունակում է փափկություն և խստություն:

Երրորդ փուլ՝ Ֆիզիկական ազդեցությունների միջոցառումների օգտագործում թեթև մակարդակի վրա, որոնք ոչ մի տեսակի վնասվածքներ չեն հասցնում: Ընդ որում աստվածաբանների մի մասը համարում է, որ հարվածները պետք է լինեն խողովակաձև փաթաթած թղթյա անձեռոցիկով կամ ատամմաքրիչով,(սիվակով) որի երկարությունը չի գերազանցում հասարակ ատամմաքրիչից: Ընդ որում ամուսինը պետք է ձեռնպահ մնա ցավացող տեղերից՝ երես և այլն, քանի որ այդ գործողության նպատակ է հանդիսանում ոչ թե ցավ պատճառելը, այլ դաստիարական ազդեցության հասնելը:

Մարգարեն ասել է. «**Վախեցեք Ալլահից ձեր կանանց հետ հարաբերություններում... Դուք իրավունք ունեք նրանց վրա՝ նրանք չպետք է թույլ տան ձեր տանը մնա ձեր կողմից չհանդուրժվող մարդը: Եթե նրանք դա թույլ տան, ապա նրանց հետ մեղմ : Չէ որ ձեր վրա է նրանց սնունդ ու հագուստ ապահովելը**» (Մուսլիմ, № 1218):

Նաև մարգարեն սովորեցնում էր իր հետևորդներին կանանց հետ ճիշտ վերաբերմունքին, ասելով. «**(Նրանք իրավունք ունեն) կերակրված լինել, երբ դուք ունեք սնունք հայթայթելու հնարավորություն, հագնված լինել, երբ դուք ունեք հագուստ հայթայթելու հնարավորություն, մի հարվածեք նրանց երեսին, կոպիտ խոսքեր մի ասեք նրանց, մի պատժեք նրանց (նրանց հետ չշփվելով կամ յուր անկողնից հանելով), ձեր տներից դուրս**» (Աբու Դաուդ, № 2142):

Կնոջը պատժող տղամարդը միշտ պետք է հիշի մարգարեի հետևյալ խոսքերը. «**Կանանց հետ պատվարժան եղեք, չէ որ կինը ստեղծված է եղել կոր կողոսկրից, իսկ ամենամեծ կորությամբ է տարբերվում նրա վերին մասը: Եթե փորձես ուղղել այն, կկոտրես, իսկ եթե թողես, ապա այն այդպես էլ կոր կմնա, այդ պատճառով կանանց հետ պատրարժան եղեք**» (Ալ-Բուխարի, № 3153):

Կնոջ վրա ֆիզիկական ազդեցությունների միջոցառումների օգտագործումը դաստիարակության ծայրահեղ միջոցառում է: Իսլամը թույլատրում է դիմել դրան, եթե ուղղումը, բոյկոտումը և ամուսնական համակեցությունից հրաժարվելը չեն հասել իրենց նպատակին: Ընդ որում հարկավոր է հետևել հետևյալ պայմանները՝

1. Չի թույլատրվում պատժել կնոջը երեխաների, բարեկամների կամ այլ անձանց դիմաց և չի թույլատրվում ասել այդ մասին այլ մարդկանց, ինչպես մարգարեն է ասել. «...Մի պատժեք նրանց (նրանց հետ չշփվելով կամ յուր անկողնուց հանելով), ձեր տների պատերից այն կողմ»: Աստվածաբանների կարծիքով «ձեր տների պատերից այն կողմ» արտահայտությունը ցույց է տալիս տանից դուրս պատժելու արգելումը կամ դրա մասին պատմելու արգելումը:

2. Պատիժն անմիջապես ընդհատվում է, եթե կինը ուղղվում է, Ալլահի խոսքերին համաձայն. **«Եթե նրանց ձեզ հնազանդ դառնան, ապա նրանց դեմ տանող ճանապարհ մի որոնեք»** (4:34):

Ֆիզիկական ազդեցության միջոցառումները կանանց հանդեպ չեն կիրառվում ամուսնալուծության գործընթացի ժամանակ և հստակորեն ամուսնալուծվել որոշած կանանց հանդեպ:

Պետք է նշել, որ կանանց վնասվածքներ հասցնելու պրակտիկան տարածված է շատ քաղաքակրթություններում ու հասարակություններում, որոնք չեն սահմանափակում տղամարդկանց դաժան պահելաձևը ոչ մի օրինական նորմերով:

Աննի Բեզանտը, համեմատելով կանանց վերաբերվող իսլամական ու արևմտյան օրենսդրությունները, ասաց. «Իսլամական օրենքները աշխարհում լավագույնն են, երբ խոսքը գնում է կանանց իրավունքների մասին: Նրանք արդարության կերպարանք են հանդիսանում և գերազանցում են արևմտյան օրենքները, որոնք կարգավորում են ունեցվածքային խնդիրները, ինչպես նաև ժառանգման ու ամուսնալուծության օրենքները: Իսլամը որպես կանանց իրավունքների երաշխավորող է հանդես գալիս: Այնպիսի հասկացությունների շուրջ շահարկությունները, ինչպիսիք են միակնությունն ու բազմակնությունը, շփոթացրեցին մարդկանց և դժվարացրեցին այն ողբերկության ճիշտ ընկալումը, որը ապրում է արևմտյան կինը...»:

Վեճի տեսքը կամ իմ մարմինը իմ գործն է

Կանացի մուսուլմանական հագուստ հիջեբի խնդիրը վերջին տարիները դառել է շատ ակտուալներից մեկը, երբ ԱՊՀ երկրերի տարածքներում սկսեցին մուսուլմանական կանոնները պահպանող բարեպաշտ մուսուլմանուհիների վրա հարձակումները: Մուսուլման կնոջ այդ հագուստի նկատմամբ բացասական վերաբերմունքի պատճառները կարող են տարբեր լինել, այդ պատճառում տվյալ խնդրի լուծման համար ամեն տեղ կարող են տարբեր լինել: Հետևյալ գրքի նպատակն ու ֆորմատը չեն թույլատրում մանրամասնորեն քննել հետևյալ հարցը,

սակայն փաստը, որ հիջեբը մուսուլմանական քաղաքակրթության անփոխարինելի մաս է հանդիսանում, որի համար աստվածաբանները մի կարծիքի են, պահանջում է, որ հակիրճորեն լուսավորեն տվյալ խնդիրը:

Ալլահն ասել է.

«Ով Մարգարե: Ասա քո կանանց, դուստրերին, հետևորդներիդ կանանց, որ նրանք իրենց վրա գցեն իրենց ծածկոցները: Այդպես հեշտ կլինի նրանց ճանաչել (ստրկուհիներից ու պոռնիկներից տարբերել) և հայհոյանքների չեն ենթարկվի: Ալլահը Ներողամիտ ու Գթասիրտ է» (33:59):

Ալլահն ասել է.

«Եվ ասա (ով մարգարե) հավատացյալ կանանց, որ իջացնեն իրենց հայացքներն ու պահպանեն իրենց սեռական օրգանները: Թող չցուցադրեն իրենց գեղեցկությունները, բացառությամբ նրանց, որոնք երևում են, և թող ծածվեն իրենց ծածկոցներով և ծածկեն կուրծքն ու ոչ մեկին ցույց չտան իրենց գեղեցկությունը, բացի իրենց ամուսիններից կամ հայրերից, կամ իրենց սկեսրայրներից, կամ իրենց որդիներից, կամ իրենց ամուսինների որդիներից, կամ իրենց եղբայրներից, կամ իրենց եղբորորդիներից, կամ իրենց քույրերի որդիներից, կամ իրենց կանանցից, ու նրանցից ու տիրում են (ծառաներ), կամ տղամարդ ծառաներից, կամ չդավաճանողներից, կամ երեխաներից, որոնք մերկ կին չեն հասկանում: Թող նրանք չհարվածեն իրեց ոտքերով, զարդարանքների մասին իմաց տալով, որ նրանք թաքցնում են: Ով Հավատացյալներ: Դիմեք Ալլահին ենթարկությունով, բոլորդ միասին, հնարավոր է դուք հաջողության հասնեք» (24:31):

Ալ-Ջասասն ու Ալ-Ալյուսին երկու մեծ աստվածաբաններ են իմամ Աբու Խանիֆի իրավաբանական դպրոցում, հետևյալ այաթի իմաստի վերաբերյալ հաստատում էին, որ Ալլահը կնոջը պատվիրել է գլխին անձեռոցիկ գցել և փակ պահել կուրծքն ու վիզը, ինչպես դա անում էին մինչ իսլամական ժամանակաշրջանի կանայք, որոնք անձեռոցիկով ծածկում էին մազերը, սակայն բաց էին թողնում կրծքի վերին մասն ու վիզը, ինչպես նաև ցուցադրում էին մարմնի վրա եղած զարդարանքները: Այդ աստվածաբանները համարում էին, որ կնոջը թույլատրված է բաց թողել երեսն ու ձեռքերը, ընդ որում այդ նույն դպրոցի գիտնականների մի մասը թույլատրում էր նաև բացել ոտնատակերը, սակայն բոլոր աստվածաբանները համաձայնվեցին, որ եթե մարմնի որևէ մասը, որը թույլատրված է ցույց տալ, դառնում է հմայքի աղբյուր, ապա այն պետք է ծածկված լինի հագուստով (Ալ-Ջասասս, Ահկամ-ուլ-Կուրան: մաս. V. էջ 172-174: Ալ-Ալյուսի, Ռուխ-ուլ-Մաանի. մաս XVIII. էջ 3140-3142):

Այդպիսով հիջեբը դա ազատ, անթափանց նյութից կարված, կնոջ մարմինը չընդգծող հագուստ է, չառանձնացող ձևով ու գույնով, ծածկում է ամբողջ մարմինը, բացի երեսից և ձեռքերից, և որոշ աստվածաբանների կարծիքով, ոտնատակերից: Կինը պետք է ծածկի երեսը, ձեռքերը և ոտնատակերը այն ժամանակ, երբ կա այդ մասերով հմայելու լուրջ վտանգ կամ եթե մարմնի այդ մասերում կան զարդեր կա ներկեր: Մուսուլմանուհու հագուստը չպետք է պարունակի մասեր, որոնք հիշեցնում են տղամարդու հագուստը կամ մասեր, որոնք հիշեցնում են անհավատ

կանանց (Խանաֆիտյան իրավանաբական դպրոցի աշխատությունների ժողով: Տաբային-ութ-խակաիկ, մաս I էջ 96: Ֆատհ-ուլ-Կիդար, մաս VIII էջ 97: Բաղաի-ուս-Սանաի, մաս VI էջ 2956: Մեկնաբանությունները իբն Աբիդինի, մաս I էջ 78: «Ալ-Մինխաջ» գրքի բացատրությունները: Մեկնաբանությունները, մաս II էջ 78: Շուրայինի: Մուգնի Ալ-Մուխտաջ, մաս I էջ 2185: Հեղինակը շնորհակալություն է հայտնում իսլամական իրավաբանության դոկտոր, ֆիտխա խանիֆիտյան լեզվի մասնագետ, Սաուդ թագավորի համալսարանի (Սաուդյան Արաբիա) իսլամական քաղաքակրթության ամբիոնի վարիչ Հասան Աբու-Գուդդային իմամ Աբու-Խանաֆիի իրավաբանական դպրոցի իսլամում խիջիբի դրության մասին լուսավորման համար):

Նախկի ԽՍՀՄ հանրապետությունների մուսուլմանուհիներին անհրաժեշտ է համբերությամբ ու կարեկցանքով վերաբերվել իրենց քույր-մուսուլմանուհիներին, որոնք դեռ չեն հետևում մուսուլմանական հագուստի կանոններին: Անհրաժեշտ է հանդուրժողականությամբ ու բարեկամաբար բացատրել նրանց հիջեբի արժանիքները և բարեպաշտ մուսուլմանուհու վարմունքը, հետևելով Ալլահի հրամանին.

«Աստծո ճանապարհի կոչիր իմաստությամբ և ավետով և վարվիր նրանց հետ լավագույն կերպով: Ճշմարիտ, քան Աստվածը բոլորից լավ գիտի Նրա ճանապարհից շեղվողներին, և ավելի լավ գիտի Նրա ճանապարհին հետևողներին» (16:125):

Այժմ կցանկանայի ընթերցողին ծանոթացնել կանադացի տասնյոթամյա աշակերտուհի Սուլտանի Յուսուֆալիի նամակի հետ, որը հրատարակել է կանադական ամենամեծ լրատվական «Տորոնտո Սթար»-ը մի քանի տարի առաջ: Իր նամակը երիտասարդ մուսուլմանուհին վերնագրել է շատ հասարակ. «Ինչու՞ եմ հիջեբ կրում»: Հուսում եմ, որ այդ նամակից մեջբերումները կօգնեն հասկանալ այն պատճառը, որով միլիոնավոր մուսուլմանուհիներ ամբողջ աշխարհով որոնք չնայելով ժամանակակից մոդայիկ հագուստներին, հիջեբ են նախընտրում.

«...Վերջերս Մոնրեալի դպրոցներից մեկում երկու աղջիկ հեռացվել էին միայն նրա համար, որ հագնվում էին իմ պես: Զարմանալի է, կտորի հատվածը, որը առանձնացնում է մեր մուսուլմանական կանացի հագուստը շրջապատի հագուստից, դառնում է մեր շփումներին խոչընդոտող քարը: Իսկ մի գուցե նրանք վախում են, որ մեր հագուստում ավտոմատնե՞ր ենք պահել: Չնայած, իհարկե տվյալ խնդրի արմատները շատ հեռու են հասարակ կտորից: Ես ամբողջ աշխարհով տարածված Իսլամ քարոզող կանանց պես հիջեբ եմ կրում՝ մուսուլմանական կանացի հագուստ: Հիջեբի հասկացությունը տարածված կարծիքի դեմ իր էությամբ հանդիսանում է այն հիմնարարական ասպեկտներից մեկը, որոնք երաշխավորում են կանանց հնարավորությունների ընդլայնումը («կանանց ընդլայնված հնարավորություններ» ասելով ի նկատի է բերվում կնոջ ազդեցիկության ուժեղացումը, մասնավորապես իշխանության դրույթների վրա: Սակայն տվյալ հոդվածի հասկացությունից հասկանալի է դառնում, որ հեղինակը

ի նկատի ունի այլ բան՝ այն որ հիջեբը կարող է լինել այն ասպեկտը, որը կթույլատրի կնոջը զբաղեցնել արժանի և հարգելի տեղ հասարակության մեջ):

Երբ ես հագնում եմ մարմինս ծածկող հագուստ ինքնաբերաբար զրկում եմ շրջապատին դատել իմ մասին իմ տեսքից ելնելով... Իհարկե ես ունեմ մարմին՝ իմ ֆիզիկական կերպարը: Սակայն դա ընդամենը կեղևն է, որի մեջ թաքնված է ազատ ուղեղը և ուժեղ կամքը: Իմ մարմինն իմ համար չափազանց թանկ է, որ այն որպես տարբեր ապրանքների գովազդ օգտագործեմ, սկսած էժանագին գարեջրի շշից և վերջացրած թանկարժեք ավտոմեքենաներից:

Ժամանակակից աշխարհի արժեքները անվավեր են, որ մարդու արտաքինն ու մարմնային ձևերը դառնում են որոշիչ մասը, երբ հոգևոր կերպարը անցնում է երկրորդ կարևորության մակարդակ կամ էլ ընդհանրապես հաշվի չի առնվում: Մի հավատացեք նարնց, որ ասում են, թե կանայք աշխարհիկ հասարակությունում լիովին ազատություն են ստացել: Ինչ ազատության մասին կարող է խոսք գնա, երբ ժամանակակից աղջիկը տնից դուրս գալով գիտի, որ նրա «ազատ» մարմնի բոլոր մասերը ուշադրությամբ ուսումնասիրված են լինելու ամեն աչք ունեցողի կողմից:

Հիջեբ կրելով ես ինձ անվտանգության մեջ եմ զգում այդ բանից: Ես համոզված եմ, որ ոչ ոք ինձ չի նայի գնահատական տվող, վավաշոտ հայացքով, ձգտելով հասկանա իմ բնավորությունը դուրս գալով իմ կիսաշրջազգեստի երկարությունից: հիջեբը դա մի խոչընդոտ է իմ և ինձ շրջապատող գիշատիչների միջև: Ես մարդ եմ, և իմ սեռական պատկանելիությունը չպետք է լինի ինձ ցածրացնելու պատճառ:

Կարող եք հավատալ դրան, կամ ոչ, բայց կինը իննսունականներին դառավ անվերջ հասարակայինությունների ստրուկը: Նրան առաջարկում են առևտուր անել իրենով և կասկածելի իդեալների ձգտել: Մենք բոլորս սովորել ենք դրան և այդ պատճառով առանց հուզումների հետևում ենք տասներեքամյա աշակերտուհիներին, որոնք առանց տատանվելու իրենց մոտ սրտխառնոց են առաջացնում իդեալական քաշ պահպանելու չափից մի քանի գարմ ավել ուտելու պատճառով: Եվ մեզ արդեն չեն սարսափեցնում երիտասարդ աղջիկների մեջ ինքնասպանների քանակը, որոնք պայքարում էին մի քանի կիլոգրամ նիհարել, որ հասնեն «էտալոնին»:

Երբ ինձ հարցնում են, թե արդյոք իմ իրավունքները սահմանափակել են, ես անկեղծորեն ասում եմ, որ ոչ: Դա իմ աշխարհն է: Ինձ դուր է գալիս հասկանալ, որ ես եմ ղեկավարում մյուսների ինձ դաստիարակելուն: Ես հպարտ եմ, որ ուրիշներին չեմ թույլատրում օգտագործել իմ մարմինը: Ես ազատվել եմ մոդայի և կնոջը շահագործող՝ ամեն ինչի ստրկությունից:

Իմ մարմինը ի՛մ գործն է: Ես ոչ մեկին թույլ չեմ տա իմ համար որոշի սխալ իդեալներ կամ գնահատի իմ գեղեցկությունը: Ես պատասխանում եմ «ոչ» նրանց, ովքեր ասում են, որ իսլամը խախտում է իմ սեքսուալ իրավունքները: Հակառակը՝ իմ կրոնը ինձ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄ է դրանք: Ես շնորհակալ եմ Արարչից, որ Նա ազատեց ինձ նրանց ճակատագրից՝ ում կյանքի իմաստը «էտալոնային» կշռի հետապնդումն է կամ իրեն համապատասխանող շրթներկի փնտրտուքը: Իսլամը ինձ այլ գերակայություններ տվեց...

Եվ եթե դուք հանդիպեք ինձ կամ իմ ընկերուհիներին ճանապարհին, ապա մեզ կարեկցանքով մի նայեք: Մենք հիջեբի բանտարկյալները կամ ստրկուհիները չենք: ՄԵՆՔ ԱԶԱՏ ՄԱՐԴԻ՛Կ ԵՆՔ» (*Sultana Yusufali.* Why do I wear hijab? Canada, Toronto Star Young People's Press, 2007):

Ես կցանկանայի ավարտել այս գլուխը Ալլահի խոսքերով.

«Մնացեք ձեր տներն ու մի զարդարվեք այնպես՝ ինչպես զարդարվում էին առաջին բռիության ժամանակ, նամազ արեք, զաքյաթ տվեք ու հենվեք Ալլահի ու նրա առաքյալի վրա: Ով (մարգարեի) տան բնակիչներ: Ալլահը միայն ցանկանում է ազատել ձեզ պղծությունից ու լիովին մաքրել: Եվ հիշեք այն՝ ինչ կարդացվում է ձեր տներում Ալլահի և իմաստության այաթներից: Ճշմարիտ, Ալլահը Իմացող (կամ Բարի) ու Տեսնող է: Ճշմարիտ, մուսուլմանների և մուսուլմանուհիների՝ հավատացյալ տղամարդկանց և հավատացյալ կանանց, ենթարկվող տղամարդկանց և ենթարկվող կանանց, ողջամիտ տղամարդկանց և ողջամիտ կանանց, համբերատար տղամարդկանց և համբերատար կանանց, համոզված տղամարդկանց և համոզված կանանց, ողորմություն տվող տղամարդկանց և ողորմություն տվող կանանց, պարտաճանաչ տղամարդկանց և պարտաճանաչ կանանց, իմաստությունը պահպանող տղամարդկանց և իմաստությունը պահպանող կանանց և Ալլահին հաճախ հասկացող տղամարդկանց և կանանց համար Ալլահը ներում և մեծ պարգև է պատրաստել: Հավատացյալ տղամարդու և հավատացյալ կնոջ համար որոշում ընդունելու համար ընտրություն չկա, եթե Ալլահը և Նրա Առաքյալը արդեն ընդունել են որոշումը: Իսկ Ալլահին և Նրա Առաքյալին չլսողները բացահայտ շփոթմունքի մեջ է ընկած» (33:33-36):

Հանգեցում

Իսլամը Ալլահի ճշմարիտ առաքելությունն է, որը հայտնի է ամբողջ մարդկությանը Մուհամեդ մարգարեի մոջոցով: Ուղարկվելու ամենասկզբից իսլամն ընդգծեց մարդու հատուկ դիրքը Ալլահի մյուս արարվածների նկատմամբ: Ամենազորն ասել է. **«Մենք հարգեցինք Ադամի հետնորդներին և տարանք ցամաքով ու ջրով (այսինքն, ստիպեցինք ջրին ու ցամաքի կենդանիներին ձեր տեղափոխության համար ծառայել: Մենք նրանց բարիքներով լցրեցինք և ընծայեցինք պարզ գերազանցություն այլ շատ արարվածների նկատմամբ»** (17:70):

Հաստատելով մարդու բարձր դիրքը, Ամենազորը նշեց, որ ամբողջ մարդկությունը արարված էր մի հոգուց. **«Ով մարդի՛կ: Վախեցեք ձեր Աստծուց, որ ստեղծել է ձեզ մի հոգուց...»** (4:1): Հետևաբար բոլոր մարդիկ տիրապետում են միատեսակ համամարդկային ունակություններ և հավասար իրավունքներով են օգտագործում այն բարիքները, որ Ալլահն է նախատեսել առանց բացառության բոլոր մարդկանց համար: Սակայն բոլո՞ր մարդիկ ունեն նույն դրությունը Ալլահի դիմաց: Իհարկե, ոչ, և այդ դրությունը կախված չէ ոչ մարդու ազգային պատկանելիությունից, ոչ մաշկի գույնից, սեռից, նյութական ունեցվածքից կամ ցեղից: Աստծո առաջ մարդու դրությունը որոշվում է մի սկզբունքով, որը գրված է հետևյալ այաթում. **«Ով մարդի՛կ: Ճշմարիտ, Մենք ստեղծեցինք ձեզ մի տղամարդուց և մի կնոջից, և ձեզ ազգեր ու ժողովուրդներ արեցինք, որ ճանաչեք միմյանց, և ձեզանից Ալլահի համար ամենահամակրելին դա ամենաաստվածավախն է Եվ Ալլահը Ալիմ (ամենագետ) և Խաբիր (Ամեն ինչ հասկացող) է»** (49:13): Այդպիսով մարդը ինչքան ճիշտ է պահպանում Ալլահի օրենքները, այնքան բարձր է նրա դիրքը Ալլահի դիմաց:

Մարգարեն նույնպես ասել է. «Ով մարդի՛կ: Ձեր Աստվածը Մեկն է, և ձեր հայրը (ումից առաջացավ ողջ մարդկությունը) մեկն է, և արաբը առավելություն չունի ոչ արաբի և կարմրամաշկը սևամորթի, և սևամորթը կարմրամաշկի, բացի աստվածավախությունից» (Ահմադ, № 23536):

Համաձայն իսլամի կինն ու տղամարդը ունեն իրավունքներ և պարտականություններ, որոնք հիանալիորեն պատկերում են նրանց օրգանիզմի ֆիզիկական և հոգեբանական հատկությունները և համապատասխանում են այն դերին, որը խաղում է ամեն մեկը հասարակական կյանքում: Ալլահն ասել է. **«Հավատացյալ տղամարդիկ և կանայք իրար համար օգնականներ և ընկերներ են հանդիսանում: Նրանք հրամայում են անել թույլատրվողը և արգելում են նախազգուշացվածը՝ նամազ են անում, զաքյաթ են վճարում, հենվում են Ալլահին և Նրա առաքյալին: Ալլահը ողորմում է նրանց: Ճշմարիտ, Ալլահն Ամենակարող ու Իմաստուն է»** (9:71):

«Աստվածը նրանց պատասխանեց. «Ես ձեզանից ոչ մեկի արարքները չեն ջնջվի, լինի դա արած լինի տղամարդ թե կին: Դուք մեկդ մյուսիդ մի մասն եք» (3:195):

Ավարտին ուզում եմ ընթերցողներին ասել հետևյալը.

1. Ամեն մուսուլման համոզված է, որ կինը երբեք չի ստացել այդպիսի իրավունքներ և ազատություն, որ տվել է իսլամը: Նրա կյանքը ամենակատարյալ կերպով կարգավորող կանոնները համապատասխանում են այն առաքելությանը, որը տվել է նրանց Ամենազոր Արարիչը:

2. Չի կարելի դատել իսլամի մասին որոշ մուսուլմանների արարքներից ելնելով, քանի որ շատ իրենց իսլամին վերաբերող մարդիկ չեն հետևում իսլամին: Իսլամը ոչ միայն երկու վկայությունների խոսքերի արտահայտումն է, այլ նաև յուր հավատի հաստատումն է ճիշտ համոզմունքներով և արարքներով: Օրինակ՝ որոշ մուսուլմաններ ստում և խաբում են, հիմար արարքներ են անում, սակայն դա չի նշանակում, որ իսլամը արդարացնում է դրանք և հղում դեպի դրանք:

3. Ես ամեն ճշմարտությունը փնտրողին կոչ եմ անում չդատել իսլամի մասին նախապես և օգտվել ճշմարիտ տեղեկություններից: Եթե դուք անկեղծորեն ուզում եք ճանաչել Ալլահի կրոնը, ապա հանդուրժող եղեք և ազատվել ազգային և դավանանքային ֆանատիզմից հանուն ճշմարտության: Ալլահը ում բարին է ցանկանում, լուսավորում է նրա սիրտն ու հանում հարթ ճանապարհ:

الحمد لله رب العالمين

وصلى الله على رسولك الكريم وعلى آله وصحبه أجمعين

http://www.thekeytoislam.com

http://www.islamhouse.com

http://www.islamreligion.com

http://www.islam-guide.com

http://www.islamtomorrow.com

http://www.islamqa.info

http://www.womeninislam.ws

http://www.1ststepsinislam.com

http://www.chatislamonline.org

http://islamweb.net/

Դոկտոր Աբդուլ-Ռահման Աշ-Շիհա